

9 (566)

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ

Մ- 79

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանի լուս. Հայոց վանքական անշարժ կալուածները: Տեղեկագիր
Ա. Բ. Գ. Գ. 1900 թ.: Ռուսաստանի լուս. Հայոց ծխական եկեղեցիների
անշարժ կալուածները: Ս. Էջմիածնի 1906 թուի նախահաշիւը: Մ. Աթոռի
տարեկան միջին մուտքը 1897—1904 թուերի հնդամեայ շրջանում: Վիճա-
կային եւ ժողովրդային արդիւնք: Մ. Աթոռի գրամապուխը եւ աւանդադրամ-
ները: Հայերը Ռուսաստանում ըստ 1897 թուի առաջին ընդհանուր աշ-
խարհագրի:

Վ.Ա.ՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1906

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱԳԵՏ

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ՎԱՀԱՐՇԱԳԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ե ր ե ս

1. Ռուսաստանի լուս. Հայոց վանքական անշարժ կալուածները.	1
2. Տեղեկագիր Ա. Բ. Գ. Դ. 1900 թ.	24
3. Ռուսաստանի լուս. Հայոց ծխական եկեղեցիների անշարժ կալուածները	39
4. Ս. Էջմիածնի 1906 թուի նախահաշիւը	40
5. Մ. Աթոռի տարեկան միջին մուտքը 1897—1904 թուերի հնգամեայ շրջանում	48
6. Վիճակային եւ Օտարային արդիւնք.	49
7. Մ. Աթոռի դրամագլուխը եւ աւանդադրամները.	52
8. Հայերը Ռուսաստանում ըստ 1897 թուի առաջին ընդհանուր աշխարհագրի.	53



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՑԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Սոյն աշխատութեան մէջ ամփոփուած են զանազան ժամանակներում՝ զրուած մի քանի տարբեր բովանդակութեամբ յօդուածներ, որոնք բոլորն էլ վերաբերում են Ռուսաստանի հայերին եւ Հայ Եկեղեցուն, ուստի եւ յարմար համարեցինք այս աշխատութեան անունը դնել «Հայերը Ռուսաստանում»:

Այս ժողովածուի առաջին յօդուածը նուիրուած է Ռուսաստանի Հայոց վանքական անշարժ կալուածներին, եւ առաջին անգամ տպուած էր Արշալոյս լրագրում (Արշալոյս 1905 թ. № 32 եւ 33), իսկ այս երկրորդ անգամ տպագրուած է լրացուցիչ փոփոխութիւններով:

Ժողովածուի երկրորդ յօդուածը վերաբերում է 1900 թուի Ա, Բ, Գ, Դ, կոչող Տեղեկագրին եւ առաջին անգամ տպուած էր Արարատ ամսագրում (1902 թ. № 1 եւ 2), իսկ այժմ տպագրուած է երկրորդ անգամ:

Երրորդ յօդուածը Ռուսաստանի լուսաւորչական Հայոց ծխական եկեղեցիների անշարժ կալուածների մասին է, եւ իբրեւ անբաժան լրացուցիչ մասն Ա, Բ, Գ, Դ, Տեղեկագրի՝ այստեղ տպւում է առաջին անգամ:

Չորրորդ յօդուածը ս. Էջմիածնի 1906 թուի Նախահաշուին է վերաբերում, եւ տպւում է առաջին անգամ:

Հինգերորդ յօդուածը նուիրուած է Մ. Աթոռի տարեկան միջին մուտքին՝ 1897—1901 թուերի հնգամսայ շրջանում, վեցերորդ յօդուածը՝ Վիճակային եւ Օտարային կոչող արդիւնքներին, եւ եօթներորդը՝ Մ. Աթոռի դրամագլխին եւ աւանդադրամներին: Սոյն երեք յօդուածը տրպւում է առաջին անգամ:

Ութերորդ յօդուածը, որ պարունակում է 1897 թուի առաջին ընդհանուր աշխարհագրի հայերիս վերաբերեալ մասը, նոյնպէս տպագրում է առաջին անգամ:

Սոյն յօդուածները յաւակնութիւն չունին մանրակրկիտ ուսումնասիրութիւն համարուելու, այլ տալիս են լոկ հում նիւթ եւ թուեր, որոնցից ուշիմ ընթերցողը պէտք է հանէ եզրակացութիւններ:

Մխիթար վարդապետ



ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԱԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

Թէև թաթարական արշաւանքների ներկայ դառն և նեղ ժամանակում որ և իցէ կողմնակի հարցով զբաղուելու չէ տրտմադրութիւն կայ և ոչ հնարաւորութիւն, բայց և այնպէս օգոստոսի 1-ի Բարձրագոյն հրամանից յետոյ՝ վանքական կալուածների կառավարութեան գործը իր անյետաձգելի հերթականութեան շնորհիւ արժանի է առանձին ուշադրութեան:

Թէև մտադիր էինք կալուածագրերի, մակարդակների և այլ պաշտօնական վաւերագրերի հիման վրայ մի ճշգրիտ և ամփոփ տեղեկագիր ներկայացնել հայ ընթերցող հասարակութեան առհասարակ Ռուսաստանի Հայ Լիկեղեցու կալուածների մասին, բայց առայժմ չյաջողուեց մեզ: Կալուածների վերաբերեալ բոլոր վաւերագրերը, նոյնպէս Սինօգի տնտեսական մասին վերաբերեալ կարևոր գործերը ներկայումս գտնուում են կալուածները կառավարող պետական աստիճանաւորների մօտ: Այնպէս որ՝ սոյն յօդուածը գրելիս՝ մենք ստիպուած էինք բաւականանալ Ա. Բ. Բ. Դ. կոչուած պաշտօնական տեղեկագիրներով, Սինօգի Տնտեսական մասում մնացած հատ ու կտոր գործերով և հաշուէմատեաններով, մեր անձնական տեղեկութիւններով, այլ և գործին ծանօթ անձանց ցուցմունքներով:

Այս տեղից պարզ է, որ մեր աղբիւրները հաւասար արժէք չունին և մեր առաջ բերած թուերի անպայման ճշդութիւնը երաշխաւորել չենք կարող: Բայց և այնպէս, համոզուած ենք, որ մեր հաղորդածը իսկութեան համապատասխանելուց շատ հեռու չէ:

Անշուշտ շատ ցաւալի է, որ հոգևոր իշխանութիւնը մինչև այժմ իր կալուածների մանրամասն նկարագրութիւնը, այլև զանազան հիմնարկութիւններում ցրուած կալուածագրերի, մակարդակների և առհասարակ փաստա-

գրերի կամ գոնէ նրանց վաւերական պատճէնների ժողովածու չունի:

Այդ կարիքը զգացւում էր դեռ երջանկայիշատակ Սիմէօն կաթողիկոսի ժամանակ և նա իր Զամբու գրքով աշխատեց լրացնել այդ պահանջը: Բայց նրանից յետոյ այդ ուղղութեամբ ոչինչ չէ արուած:

Մեր տեղեկութիւնները վերաբերւում են 1902 թուին, կալուածները գրաւելու նախնիքաց տարուան: Դնում ենք վանքական անշարժ կալուածները և տարեկան արդիւնքը, ուր հնարաւոր էր, ճշգրիտ թուով, ուր անհնար, մօտաւոր թուով: Վանքապատկան գիւղերից վանքերը հասոյթ են ստանում տարբեր օրէնքների հիման վրայ: Օրինակ՝ Ս. Էջմիածինն իր գիւղերից ստանում է բնական բերքի մէկ հինգերորդ և կամ չորս երեսուներորդ մասը, իսկ այլ վանքեր մէկ տասերորդը և այլն: Կան նաև այլ հարկեր, օրինակ՝ այգեհարկ, տնատեղերի համար տուրք և այլն: Բայց դրանց մասին մանրամասնաբար գրելը թույնում ենք մի այլ անգամի: Գիւղերից բնական բերքով ստացուած հասոյթը մենք վէր ենք ածել դրամի: Կան և այնպիսի գիւղեր, որոնցից բնական բերքի փոխարէն ուղղակի դրամական հասոյթ է ստացւում:

Այժմ յաջորդաբար առաջ բերենք վանքական կալուածների համառօտ ցուցակը:

Ա.

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Մայր Աթոռն ունի հետևեալ կալուածները.

ա) Վաղարշապատ գիւղը, որ ունի քարքարոտ արօտատեղ 2459 դեսեսատին 663 քառակուսի սաժէն, արածացնելու տեղեր 1772 դ. 750 ք. ս., արտեր 2175 դ. 1440 ք. ս., մարգագետին 408 դ. 2166 ք. ս., այգի 307 դ. 1906 ք.

ս., անտառ 36 դ. 2280 ք. ս., բանջարանոց 2 դ. 780 ք. ս., լիճ 1 դ., գիւղատեղի 60 դ. 200 ք. ս., ճանապարհ 59 դ. 870 ք. ս., առուներ 24 դ. 135 ք. ս., գերեզմանոց 2 դ. 240 ք. ս., գետ 2 դ. 300 ք. ս., քարհանք 2160 ք. ս.—ընդամենը 7312 դ. 1890 ք. ս., որ տալիս է վանքին մօտաւորապէս 16000 ռուբլի արդիւնք:

բ) Եղուարդ գիւղը, որի մի մասը արքունի է և միւս մասը վանքապատկան: Արքունի մասի տարածութիւնը ընդամենը վարելահող, Դերի—խարաբա գիւղերի աւերակներ, ճանապարհ, առուներ 2505 դ. 2056 ք. ս., կալատեղի 7 դ. 960 ք. ս., ընդամենը 2513 դ. 616 ք. ս.: Վանքի մասի տարածութիւնը—վարելահող 3153 դ. 1124 ք. ս., արօտատեղ 4306 դ. 686 ք. ս., ճանապարհ 34 դ., առու 4. դ. 800 ք. ս., կալատեղի 22 դ. 480 ք. ս., ընդամենը 7540 դ. 690 ք. ս.: Վանքի և արքունի անբաժան մասը—գերեզմանոց, եկեղեցի և մասնաւոր անձանց սեպհականութիւն ընդամենը 52 դ. 2294 ք. ս.: Ամբողջ կալուածքը 10106 դ. 1200 ք. ս., որ տալիս է վանքին տարեկան մօտ 10000 ռ. արդիւնք:

գ) Օշական գիւղը ունի քարքարոտ արօտատեղ 3011 դ. 2100 ք. ս., արտ 717 դ. 2146 ք. ս., այգի 171 դ. 510 ք. ս., ժայռ 52 դ., անտառ 22 դ. 880 ք. ս., գիւղատեղի 9 դ. 2240 ք. ս., գետ 15 դ. 2160 ք. ս., ճանապարհ 38 դ. 164 ք. ս., առու 13 դ. 1600 ք. ս., Ս. Մեսրոպ եկ. 640 ք. ս., գերեզմանոց 4 դ. 840 ք. ս., ընդամենը 4057 դ. 1280 ք. ս. տարածութիւն, որ տալիս է վանքին տարեկան մօտ 4000 ռ. արդիւնք:

դ) Մաստարա գիւղը ունի արտ 1670 դ. 1200 ք. ս., քարքարոտ արօտատեղ 4058 դ. 300 ք. ս., ճանապարհ 51 դ. 1200 ք. ս., ժայռ 57 դ., առու 1. դ. 1200 ք. ս., հեղեղատ 4 դ., լիճ 420 ք. ս., Մաստարա գիւղի տեղը 12 դ. 1800 ք. ս., հայ գերեզմանոց 960 ք. ս., պարտեզ 1 դ. 1200 ք. ս., թուրք գերեզմ. 120 ք. ս., աւերակ 12 դ. 1200 ք. ս., ընդամենը 5870 դ. տարածութիւն, որ տալիս է վանքին 3700 ռ. տարեկան արդիւնք:

ե) Մուղնի

գիւղը ունի արտ 529 դ. 490 ք. ս., արածացնելու տեղ 333 դ. 1930 ք. ս., քարքարոտ արօտատեղ 41 դ. 170 ք. ս., ժայռ 28 դ. 190 ք. ս., աւաղ 15 դ. 1390 ք. ս., այգի 13 դ. 480 ք. ս., ճանապարհ 11 դ. 110 ք. ս., գիւղատեղի 4. դ. 670 ք. ս., անտառ 1150 ք. ս., գետ 2 դ. 2160 ք. ս., առու 1 դ. 1960 ք. ս., ընդամենը 981 դ. 1080 ք. ս., որ տալիս է վանքին 400 ու տարեկան արդիւնք: զ) Բջնի գիւղը ունի արտեր 1540 դ. 174 ք. ս., թփեր 2556 դ. 520 ք. ս., արօտատեղ 232 դ. 1220 ք. ս., քարքարոտ արօտատեղ 85 դ. 1440 ք. ս., անտառ 16 դ., մարգագետին 545 դ. 1080 ք. ս., մարգագետին թփերով 19 դ. 1920 ք. ս., գիւղատեղի 20 դ. 1920 ք. ս., գետ 22 դ. 1700 ք. ս., ճանապարհներ 23 դ. 1940 ք. ս., ժայռեր 19 դ. 160 ք. ս., աւերակ 6 դ. 480 ք. ս., բանջարանոց 4 դ. գերեզմանոց քրիստ. 480 ք. ս., գերեզմ. թրքաց 1440 ք. ս., զոմանոցներ 1 դ. 960 ք. ս., ընդամենը 5094 դ. 1034 ք. ս.: Այլ Գեօտակլու ախչա հողը նոյն գիւղում՝ ունի մարգագետին 211 դ. 2016 ք. ս., քարքարոտ արօտատեղ 35 դ. 1824 ք. ս., ճանապարհ 2 դ., ընդամենը 249 դ. 1440 ք. ս. տարածութիւն: Ամբողջ կայուածը 5344 դ. 74 ք. ս. է և տալիս է վանքին տարեկան մօտ 2500 ու արդիւնք: է) Գեօկքիլիօս գիւղի $\frac{1}{16}$ մասը, և մի կտոր հող նոյն գիւղում մօտ 200 դ., որոնք տալիս են տարեկան 300 ու արդիւնք: ը) Հինգ այգի Վաղարշապատում, որոնց ընդհանուր տարածութիւնն է մօտ 30 դ. և տալիս են վանքին տարեկան մօտաւորապէս 1000 ու արդիւնք: թ) Երկու այգի Օշականում մօտ 25 դ. տարածութեամբ և տարեկան 350 ու արդիւնքով: ժ) Երեք այգի Աշտարակ գիւղում ի միասին մօտ 5 դ. տարածութեամբ և 356 ու տարեկան արդիւնքով: ժա) Մի այգի Փարաքար գիւղում 7 դ. 1440 ք. ս. տարածութեամբ և 220 ու տարեկան արդիւնքով: ժբ) Երկու այգի Երևանում մօտ 5 դ. տարածութեամբ և 748 ու տարեկան արդիւնքով: ժգ) Մի այգի Պանձակում մօտ 4 դ. տարածութեամբ և մօտ 300 ու արդիւնքով: ժդ) Հինգ կտոր

սեպհական վարելահող Վաղարշապատ գիւղում ի միասին մօտ 1200 դ. տարածութեամբ և 7354 ո. 75 կ. տարեկան արգիւնքով: ժե) Քիւղաչիկ գիւղում վանքի մաս վարելահողը 195 դ. տարեկան 150 ո. արգիւնքով: ժզ) Գետաքղեկ վարելահողը ունի արտ 420 դ. 1624 ք. ս., արածացնելու տեղ 83 դ. 60 ք. ս., զառիվայր 2 դ. 1200 ք. ս., ճանապարհ 5 դ. 816 ք. ս., առուներ 1 դ., հեղեղատ 2 դ., աւերակ 1 դ. 600 ք. ս., մարգագետին 24 դ. 500 ք. ս., ընդամենը 540 դ. տարածութիւն, որ բերում է տարեկան 1500 ո. արգիւնք: ժէ) Ամբերդու արօտատեղին ունի արածացնելու տեղ 419 դ. 30 ք. ս., ժայռեր 12 դ. 1200 ք. ս., ճանապարհ 3 դ. 1500 ք. ս., աւերակ վանք 3 դ. 280 ք. ս., առուներ 2 դ. 200 ք. ս., ընդամենը 440 դ. 810 ք. ս., տարածութեամբ և 157 ո. տարեկան արգիւնքով: ժը) «Ղըռ» արօտատեղին Վաղարշապատում մօտ 400 դ., որ տալիս է տարեկան 450 ո. արգիւնք. ժթ) Երկու պարտէզ Ախալքիսայի Ծիրող գիւղում մօտ 1 դ. տարածութեամբ և 50 ո. տարեկան արգիւնքով: ի) Երկու այգի Թիֆլիզում մօտ 2 դ. տարածութեամբ և տարեկան 340 ո. արգիւնքով: իա) Մարցայ կալուածքը, անտառով, արօտատեղիներով, Մարց, Լօրուտ, Ախնիձոր և Աթափ գիւղերով և վարելահողերով ընդամենը 7864 դ. 320 ք. ս. տարածութեամբ՝ ըստ այսմ—անտառ 3254 դ., թփոտ արօտատեղի 2075 դ. 1200 ք. ս., արտեր 1174 դ. 700 ք. ս., արածացնելու տեղ 1271 դ. 1000 ք. ս., գիւղեր 24 դ. 2000 ք. ս., ձմերանոց 11 դ. 1900 ք. ս., ժայռ 15 դ. 150 ք. ս., ճանապարհ 29 դ. 1200 ք. ս., գետ 7 դ. 1770 ք. ս., Սոյն կալուածքը բերում է տարեկան մօտ 400 ո. արգիւնք: իբ) «Իսլար» վարելահողը 615 դ., որ տալիս է տարեկան 1230 ո. արգիւնք: իգ) Աի կտոր հող Վերին Թալին (հայ) գիւղում—արտ 10 դ. 1320 ք. ս., արածացնելու տեղ 4 դ. 1420 ք. ս., ճանապարհ 600 ք. ս., ընդամենը 15 դ. 1440 ք. ս. տարածութեամբ, որ վէճի պատճառով արգիւնք չէ բե-

րում: իդ) Վաղարշապատի անտառը, որ զբօսավայր է:

Մայր Աթոռի հողերի ընդհանուր տարածութիւնն է մօտաւորապէս 45000 դ., որից ստացւում է տարեկան մօտ 51000 ո.: Այս 51000 ուղբուց հանելով տարեկան մօտ 3000 ո. հողային և երկրաչափական հարկերը, մնում է զուտ արդիւնք մօտ 48000 ո., այսինքն իւրաքանչիւր դեռեատինից միջին թուով 1 ո. 7 կ.:

Բացի այս հողերից Մ. Աթոռը ունի հետեւեալ անշարժ կայքերը:

ա) Վաղարշապատում 3 տուն, որոնցից 200 ո. արդիւնք է ստանում: Շուկայից դուրս 11 աչք կրպակ—1624 ո. 50 կ. տարեկան արդիւնքով: Շուկայում 136 կրպակ—3068 ո. 40 կ. արդիւնքով: 3 ջրաղաց—670 ո. 50 կ. արդիւնքով: 1 քարահանք—400 ո. արդիւնքով և 1 քարվանսարա—55 ո. արդիւնքով: Չատիրներ կոչուող փայտաշէն կրպակներ 14 հ.—295 ո. 60 կ. արդիւնքով, ընդամենը 6314 ո.:

բ) Ախալցխայում 1 տուն—140 ո. արդիւնքով:

գ) Երևանում 9 կրպակ—600 ո. արդիւնքով, 13 աչք ջրաղաց—1000 ո. արդիւնքով և մի կրպակատեղի, որ արդիւնք չէ տալիս, ընդամենը 1600 ո.:

դ) Աղէքսանդրապօլում 13 կրպակ և 1 շտեմարան—1245 ո. արդիւնքով, 16 նորաշէն կրպակ—1002 ո. արդիւնքով և 1 կրպակ ս. Աստուածածին եկեղեցու հետ կիսովի—60 ո. արդիւնքով, ընդամենը 2307 ո.:

ե) Ախալքալաքում 1 կրպակ—202 ո. արդիւնքով:

զ) Գանձակում կրպակներ և քարվանսարա—1202 ո. տարեկան արդիւնքով:

է) Թիֆլիսում 1 տուն III-րդ քաղաքամասում—900 ո., 1 տուն Մուխրանեան փողոցում—671 ո., 1 տուն Պուշկինեան փողոցում—4300 ո., 1 տուն Աբասաբասեան հրապարակի վրայ—2500 ո., 1 տուն V-րդ քաղաքամասում—36 ո., 1 տուն Խուլ փողոցում—72 ո., «Դաշտի-խաչ» տունը և կրպակները—2340 ո., 1 տուն Սիմէօնեան փո-

դոցում—660 ռ., 1 կրպակ ճուպնի փողոցում—24 ռ., 1 կրպակ արծաթագործների շարքում—60 ռ., 2 կրպակ Պուշկինեան փողոցում—1020 ռ., 3 կրպակ Բաղապխանայում—1465 ռ. 32 կ., 3 կրպակ և 1 նկուղ Թուրքաց Մէյտանում—216 ռ., 2 կրպակ Աբասբասեան հրապարակում—120 ռ., 3 կրպակ պղնձագործների թաղում—132 ռ., 1 աւերակ կրպակ միջին փողոցում—20 ռ., 1 կրպակատեղի՝ որ պատկանում է Մ. Աթոռին և Գուրգէնեանին միասին և եկամուտ չէ տալիս, ընդամէնը 14536 ռ. 32 կ.:

ը) Քիչնեում, քաղաքի կենդրոնում, Մ. Աթոռ ունի մի ընդարձակ կալուածք, որ կոչւում է «Армянская ограда» —2800 ք. ս. տարածութեամբ, դատնրկ գետին, կրպակներ, զանազան շինութիւններ և այլն, որ բերում է տարեկան 2523¹) ռ. զուտ արդիւնք, որից 123²) ռ. իւրացնում են տեղական առաջնորդները և 24000-ը ուղարկում Մ. Աթոռին: Բացի սրանից կապալառուն պարտաւոր է տարեկան 15000 ռ. արժողութեամբ և Մ. Աթոռի ցուցմամբ նոր շինութիւններ անել կալուածքում:

Ուրեմն վերոյիշեալ անշարժ կալուածներից Մ. Աթոռ ստանում է տարեկան ընդամէնը 50301 ռ. 32 կ. արդիւնք:

Բ.

Նոր-Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմ

ա) Տաւրիկեան նահանգում.

1) Ս. Գէորգ (նոյն ս. Խաչ) վանքն ունի. ա) վանքի մօտ մի անտառ, որից բաց տեղ է 7 դ., անյարմար գետին 80 դ. և ծառաստան 1128 դ. 840 ք. ս.: Անտառը բերում է տարեկան մօտաւորապէս 1600 ռ.: բ) Մի կտոր հող Հին Ղլիմ գիւղում 3 դ. տարածութեամբ, որ բերում է տարեկան 35 ռ.: գ) Այգիներ Այասօֆիայի ձորում, Սուդաղի մօտ—1) փոքր այգի 1 դ. 1572 ք. ս.:

2) այգետեղի (°) դ. 1919 ք. ս.: 3) Մեծ այգի 3 դ. 2114 ք. ս.: 4) Դատարկ հող 14 դ. 1144 ք. ս.: Սոյն այգիները և հողը տարեկան 590 ո. վարձ են բերում: դ) «Օդիշայ-դաճ» անուանուած վարելահողը, որ գտնւում է Պերեկոպեան գաւառում, ունի 2708 դ. տարածութիւն և տարեկան 7590 ո. վարձ է բերում:

Ուրեմն սոյն վանքի հողերը—անտառ, այգի, վարելահող միասին ունին 3947 դ. 1786 ք. ս. տարածութիւն և բերում են տարեկան 9635 ո. արդիւնք:

2) Ս. Փրկիչ վանքը Ղարասուբագարի մօտ, ունի միայն մի փոքրիկ պարտեզ, որ արդիւնք չի բերում:

բ) Դօնեան շրջանում:

3) Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը ունի ա) մի պարտեզ անպտուղ ծառերի՝ իբրև դրօսավայր՝ 5 դ. տարածութեամբ և 1200 ո. տարեկան արդիւնքով, բ) բանջարանոց վանքի մօտ 15 դ., որ տարեկան 45) ո. արդիւնք է բերում:

գ) Վարելահող 30) դ., որ բերում է 1200 ո. տարեկան վարձ:

դ) Քաղաքի կողմից շահեցողութեան համար Նոր տրուած վարելահող 15) դ., որ կարող է տարեկան ըստ վերոյիշեալ հաշուի 6)) ո. արդիւնք տալ:

Սոյն վանքի հողերի ընդհանուր տարածութիւնն է 470 դ., որ տալիս է տարեկան 3450 ո.:

ս. Խաչը ագարակում ունի մի տուն և մի կրպակ— 100 ո. եկամուտով և երկու տուն վանքի գաւթում, որոնք բացի բնակարան լինելուց մօտ 500 ո. վարձ են բերում տարեկան:

Այս թեմի երեք վանքերը միասին ունին մօտ 4418 դ. հող, որ բերում է տարեկան 13085 ո. արդիւնք: Սոյն 13085 ուրբուց հանելով տարեկան մօտ 60 ո. հողային հարկը, մնում է արդիւնք 13020 ո., այսինքն իւրաքանչիւր դեսեստինից միջին թուով 2 ո. 95 կ.:

Գ.

Աստրախանի թեմ

Սոյն թեմում վանքական հող չկայ, միայն Աստրախան քաղաքում կայ 60 դ. հող, որի տարեկան 150 ռ. արդիւնքը յատկացուած է առաջնորդական տան: Սոյն հողի իւրաքանչիւր դեսեստինից ստացւում է տարեկան 2 ռ. 50 կ:

Դ.

Շամախու թեմ

Բագուայ նահանգում, Շամախու գաւառում.

1. Սադիանի ս. Ստեփաննոս վանքը ունի. ա) մի այգի 3 դ. 1460 ք. ս., բ) քտան և երեք կտոր վարելահող Սադիանում, ընդամենը 32 դ. 1792 ք. ս., դ) մի կտոր հող Գիւրջիվան գիւղում 11 դ. 1400 ք. ս. տարածութեամբ: Սոյն վանքը ունի ընդամենը 47 դ. 2252 ք. ս. հող, որ շահագործւում է կամ տնտեսական եղանակով և կամ այլոց կապալով տալով և տարեկան բերքի $\frac{1}{2}$ -ը ստանալով: Հողից ստացուած տարեկան արդիւնքը հաւասար է մօտաւորապէս 1700 ռ:

2. Մէյսարու ս. Աստուածածին վանքը ունի ամայի այգէտեղի և վարելահողեր ընդամենը 30 դ. 1610 ք. ս. տարածութեամբ և ստանում է տարեկան 130 ռ.:

Սոյն թեմի երկու վանքը միասին ունին մօտ 79 դ. հող, որից ստանում են տարեկան մօտաւորապէս 1830 ռ. արդիւնք: Սոյն 1830 ռուբլուց հանելով հողային հարկը տարեկան մօտ 20 ռ., մնում է արդիւնք 1810 ռ., այսինքն իւրաքանչիւր դեսեստինից միջին թուով 22 ռ. 91 կ.:

Ե.

Ղառաբարադի թեմ

Գանձակի նահանգում, Զիւանշիրի գաւառում.

1. Խօթայ վանքն ունի՝ ա) անտառ 23311 դ. 400 ք. ս., բ) արօտատեղի 19446 դ. 600 ք. ս., գ) ձմերանոց 24 դ. 100 ք. ս., դ) խոտահարք 274 դ. 600 ք. ս., ե) ճանապարհ 121 դ. 600 ք. ս. գ) գետ 70 դ. 100 ք. ս., է) ժայռեր 2750 դ., ընդամենը 45997 դ., որ բերում է տարեկան մօտաւորապէս 4000 ո. արդիւնք:

2. Գանձասար վանքն ունի ա) Աշման կալուածքը Շուշուայ գաւառում 788 դ. 960 ք. ս., բ) Բալուղայա կամ Կիչան վանքապատկան գիւղը Զիւանշիրի գաւառում 705 դ. 1430 ք. ս., գ) «Մաղկոց»-ը Հաթերք գիւղի մօտ՝ Զիւանշիրի գաւառում, 135 դ., դ) Գիւլլութալա կոչուած հողը 60 դ., ե) Այանջատափ 6 դ., զ) Գիւմակալ, Հիւնահող եւ Կճողուտ (Վանքլու) գիւղերը արօտատեղիներով և անտառներով միասին *) 9400 դ. 1600 ք. ս., է) վարելահող 30 դ.: Գանձասարի ամբողջ կալուածքը հաւասար է 11125 դ. 1590 ք. ս. և բերում է տարեկան մօտաւորապէս 1500 ո. արդիւնք:

Գանձասարի վանքը ունի նաև երկանաքարի հանք, 400 ո. արդիւնքով:

3. Ս Բակոբայ վանքը ունի անտառ և վարելահող ընդամենը 452 դ. 2300 ք. ս., որ տալիս է տարեկան 70 ո. արդիւնք:

4. Ս. Երիցմանկանց վանքը ունի անտառ և վարելահող 26 դ., որ տալիս է տարեկան 10 ո. արդիւնք:

5. Ս. Գէորգայ Զօրավարի վանքը ունի անտառ, Վե-

*) Սոյն կալուածքում մասն ունին նաև Հասան—Ջալալ-Եաննեբը:

ըին Վաքայ և Ուրախաչ անուանուած վարելահողերը-ընդ-
ամէնը 245 դ. 1040 ք. ս., որից ստացուում է տարեկան
30 ո.:

6. Ս. Եղիշէ առաքեալի վանքը ունի վարելահող 10
դ., որից ստացուում է 10 ո. արդիւնք:

7. Ս. Խննմասանց վանքը ունի վարելահող 455 ք. ս.,
որից ստացուում է տարեկան 14 ո. արդիւնք:

8. Ս. Ղևոնդեանց վանքը ունի անտառ, այգի և վա-
րելահող ընդամէնը 40 դ., 50 ո. տարեկան արդիւնքով:

9. Գտչոյ վանքը ունի վարելահող 6 դ., տարեկան 5 ո.
արդիւնքով:

10. Սպիտակ խաչի վանքը Զիրայիլի գաւառում,
ունի 6 դ. վարելահող, 20 ո. տարեկան արդիւնքով:

11. Ամարասի ս. Գրիգորիսի վանքը Շուշուայ գաւա-
ռում, ունի այգի և վարելահող հաստատուն 127 դ.
1830 ք. ս. և վիճական 250 դ. 960 ք. ս., ընդամէնը 378 դ.
390 ք. ս., որից ստացուում է տարեկան մօտաւորապէս
500 ո. արդիւնք:

12. Ղալէթի ս. Աստուածածին վանքը, Նուխուայ գա-
ւառում ունի. ա) անտառ 366 դ., բ) վարելահող և արօ-
տատեղի 40 դ., գ) թթենիներ 1 դ., զ) այգի 1200 ք. ս.,
ընդամէնը 407 դ. 1200 ք. ս., որից ստացուում է տարե-
կան մօտաւորապէս 600 ո. արդիւնք:

13. Քիսի ս. Եղիշէ առաքեալի վանքը՝ Նուխուայ գա-
ւառում, ունի թթենիների փոքրիկ պարտէզներ և երեք
կտոր վարելահող, այլև մի բանջարանոց, ընդամէնը՝ մօտա-
ւորապէս 5 դ., որից ստացուում է տարեկան մօտ 400 ո.
արդիւնք:

14. Կուսանաց վանքը Շուշի քաղաքում ունի մի
փոքրիկ պարտէզ, որ արդիւնք չի բերում:

Սոյն թեմի 14 վանքը միասին ունին մօտ 58698 դ.
հող, որից ստացուում է տարեկան մօտ 6700 ո. արդիւնք:
Սոյն 6700 ուրբուրց հանելով սոյն թեմի վանքական հո-
ղերի տարեկան հողային և երկրաչափական հարկը մօտ

3708 ռ., մեղում է արդիւնք 2992 ռ., այսինքն իւրաքանչիւր ղեկավարինից տարեկան միջին թուով 5 կ.:

Զ.

ԿՐԵՒԱՆԻ ԹԻՄ

ա. Գանձակի նահանգի Զանգեզուրի գաւառում.

1. Տաթևի վանքն ունի. ա) Տաթևի գիւղ 6750 դ. 1420 ք. ս. տարածութեամբ հոգով, որ բերում է տարեկան 600 ռ. արդիւնք: բ) Տանձատափ 2284 դ. 400 ք. ս., բերում է տարեկան 120 ռ. 20 կ.: գ) Հալիձոր 1401 դ. 590 ք. ս., բերում է 251 ռ. 30 կ. տարեկան: դ) Շինուհայր 2571 դ. 1570 ք. ս., բերում է տարեկան 900 ռ.: ե) Ղարաքիլիսա 2003 դ. 1230 ք. ս., տալիս է տարեկան 620 ռ. 20 կ.: զ) Խոտ մօտաւորապէս 2000 դ., բերում է տարեկան 640 ռ.: է) Աղքեանդ 470 դ., տալիս է տարեկան 200 ռ.: ը) Լծէն 2000 դ., տալիս է տարեկան 200 ռ. արդիւնք: Թ) Քիրս (Թլքաբնակ) 3550 դ., տալիս է տարեկան 80 ռ. արդիւնք: ժ) Երեք կտոր հող Աղքեանդ գիւղում 20 դ. տարածութեամբ, որ տալիս է տարեկան 70 ռ.: ժա) Արօտատեղիներ Քիրս գիւղում 400 դ., տարեկան 17 ռ. արդիւնքով: ժբ) Խաս կամ Թաս հողը 600 դ. մօտաւորապէս. վանքը ոչինչ չէ ստանում 1877-ից ի վեր: ժգ) Բերդիկ կամ Շահվերդիլար էյվազլար մօտաւորապէս 200 դ., որովհետեւ վէճի տակ է, վանքը ոչինչ չէ ստանում: ժդ) Չորս կտոր վարելահող Տաթև գիւղում 150 դ. տարածութեամբ, վանքը շահագործում է տնտեսական եղանակով: ժե) Մառաստան, խոտատեղիք և բանջարանոցներ վանքի մօտ 4 դ. տարածութեամբ, վանքի պէտքերի համար: ժզ) Արօտատեղիներ 500 դ., որ բերում է 30 ռ. արդիւնք: ժէ) Խաչի և Գաւթի հող 70 դ., բերում է 15 ռ. տարեկան: ժը) Հիւճութի 561 դ., 1877-ից սկսած վանքը ոչինչ չէ ստանում, հողի վիճական լինելու պատճառով: ժթ) Այգի Շիւանիձօրում 1500 ք. ս., արդիւնքը գործ է դրւում վանքի պէտքերի համար: ի) Երեք

այգի Շինուհայրում 4 դ., արդիւնքը նոյնպէս գործադրուում է միաբանութեան համար:

Տաթևի վանքը ըստ այսմ ունի գիւղեր, անտառներ, վարելահողեր, այգիներ, բանջարանոցներ, արօտատեղիներ և այլն ընդամէնը մօտ 26,000 դ., որից ստացւում է տարեկան մօտ 5000 ռ. արդիւնք:

Տաթևի վանքը ունի 2 ջրաղաց վանքի մօտ և 2 ջրաղաց Շինուհայր գիւղում, որոնց եկամուտը առանձին չէ ցոյց տրուած:

2. Ս. Աստուածածին կուսանաց անապատ Տաթևի, ունի մի փոքրիկ այգի, որ արդիւնք չէ բերում:

3. Որոտնայ մեծ անապատը յանուն ս. Աստուածածնի, մի այգի և վարելահող. ընդամէնը 13 դ., արդիւնքը անյայտ:

4. Մեղրիի ս. Յովհաննու Կարապետի վանքը, այգի և վարելահող միասին 2 դ., տարեկան 25 ռ. 30 կ. արդիւնքով:

5. Ս. Աստուածածնայ կուսանաց անապատը Շինուհայրում ունի 1200 ք. ս. տարածութեամբ պարտէզ և ծառաստան, արդիւնք չունի:

6. Ծիծեռնայ վանք, Խնածախ գիւղի մօտ, ոչինչ չունի:

7. Տանձատափի կուսանաց վանքը ունի մի արտ 1200 քառ. ս. տարածութեամբ, արդիւնքը անյայտ:

8. Հին Հալիձորի կուսանաց վանքը ոչինչ չունի:

9. Մալե գիւղի կուսանոցը ոչինչ չունի:

10. Հին Հալիձորի անապատը ոչինչ չունի:

11. Որոտն գիւղի ս. Յովհաննու Կարապետի վանքը ունի մի փոքրիկ պարտէզ, որ արդիւնք չէ տալիս:

բ. Կարսի շրջանում.

12. Հռոմոսի վանքը բացի «Խայլարից» ուրիշ հող չունի՝ իսկ Խայլարի եկամուտը, ինչպէս իր տեղում առաջինք, նտանում է Մայր-Աթոռ: Աւելի 2 ջրաղաց արդիւնքը անյայտ:

13. Անիի Մայր եկեղեցին սեպհական հող չունի. այժմ ժամանակաւորապէս օգտւում է պարսպի մէջ եղած խոտհարքներով, պարսպից դուրս գտնուող բանջարանոցով և վարելահողով:

14. Խճկոնից վանքը ունի մի փոքրիկ պարտէզ, որ արդիւնք չէ տալիս, այլ և մի ջրաղաց, արդիւնքը անյայտ:

15. Վարդիհօր (ս. Վարսի և Թաթլոյ) վանքը ունի արօտատեղի 58 դ., որից ստացւում է տարեկան 30 ռ. արդիւնք:

16. Կարսում գտնւում է Աղուանեան սրբազանի կտակած տնատեղին, որ արդիւնք չունի:

գ. Երեւանի նահանգում եւ գաւառում.

16. Խոր-Վիրապի վանքը ունի մօտաւորապէս 230 դ. վարելահող և արօտատեղի, որոնցից ստացւում է տարեկան մօտ 1700 ռ. արդիւնք:

17. Զանջրուի ս. Կարապետ վանքը ոչինչ չունի:

18. Գեղարդայ վանքը ունի՝ ա) վարելահող Բաշ-Գառնի գիւղում, հայ և թուրք Գողթ գիւղերում, այլև Բօրտակում. բ) Քեօռաբուլաղ, Իւրտ և Ղաշաւտալար արօտատեղիները. գ) Քիւրդ-Քեանդ, Թափաբաշ և Մեհրապլու գիւղերի ⁹/₁₆ մուլքը. դ) մի այգի Մեհրապլու գիւղում և ե) մի այգի Նրեանում, ընդամենը մօտ 2500 դ., որից ստացւում է տարեկան մօտ 1300 ռ. արդիւնք: Ունի նաև 3 ջրաղաց Գողթում, 1 այգի և 1 պարտէզ, արդիւնքը անյայտ:

19. Ս. Ստեփաննոսի վանքը ունի մի փոքրիկ պարտէզ, որ արդիւնք չէ տալիս:

20. Ս. Ամենափրկիչ — Հաւուց Թառ վանքը ոչինչ չունի:

Աղեփսանդաւոյի գաւառում.

21. Հառիճի վանքը ունի 327 դ. վարելահող՝ Սօուղբուլաղ աղբիւրի մօտ, որից ստացւում է տարեկան 400 ռ., ունի նաև խոտհարքի տեղ, որի տարածութիւնը և արդիւնքը անյայտ: Ունի մի ջրաղաց և դինկ, մի ջրաղաց էլ

ընկերովի, 3 քարէ տուն, 1 կրպակ, այլև «Յարութիւնեանցի» 15 կրպակները Աղեքսանդրապօլում, որոնց արդիւնքը ճիշդ որոշուած չէ:

22. Մարմաշէնի վանքը հող չունի:

Հիմն-Նախիջեւանի գաւառում.

23. Երնջակի ս. Կարապետ վանքն ունի ջրովի և ան-ջրդի վարելահող և արօտատեղի 330 դ., մի այգի, 4 պարտէզ, մի բանջարանոց վանքի մօտ և մի բանջարանոց Ապրակունիս գիւղում, ընդամէնը մօտ 3 դ.: Այս 333 դ. հողը վանքին տալիս է տարեկան մօտ 1500 ու. արդիւնք: Ունի նաև ձիթահանք, քարհանք և ջրաղաց, որոնցից ստացւում է տարեկան 300 ու.:

24. Կարմիր վանք Ս. Ստեփաննոսի ունի վարելահող և արօտատեղի 750 դ. 17 ք. ս. և մի պարտէզ 1200 ք. ս.—ընդամէնը 750 դ. 1207 ք. ս., որ տալիս է տարեկան մօտաւորապէս 700 ու. արդիւնք: Ունի նաև ջրաղաց, արդիւնքը անյայտ:

25. Յղնայի ս. Ստեփաննոս վանքն ունի մի դեսեսատին վարելահող, որից ստացւում է տարեկան 10 ու. արդիւնք:

26. Վանանդի ս. Յակոբը ունի վարելահող 1200 ք. ս., որ տալիս է 5 ու. արդիւնք:

27. Փառակայի ս. Յակովբ—ունի վարելահող 14 դ., որից ստացւում է մօտ 150 ու. արդիւնք:

28. Բիստի ս. Ստեփաննոս—վարելահող 10 դ., որից ստացւում է մօտ 100 ու. տարեկան:

29. Արկեազի ս. Խաչ վանքն ունի վարելահող 16 դ., արօտատեղի 16 դ., ընդամէնը 32 դ., որից ստացւում է մօտ 400 ու. արդիւնք:

30. Գնդեվազի վանքն ունի մի պարտէզ 600 ք. ս., որից արդիւնք չէ ստացւում:

31. Վերին-Ագուլիսի ս. Աստուածածին վանքը ունի

վարելահող մօտ 4 դ., որ տալիս է տարեկան մօտ 300 ո. արդիւնք:

32. Քաղաքիկի ս. Խաչ վանքը ունի վարելահող մօտ 3 դ., որից ստացւում է տարեկան մօտ 20 ո. արդիւնք:

33. Վերին-Ագուլիսի ս. Թովմայի վանքը ունի վարելահող և այգի, ընդամենը մօտ 24 դ. որից ստացւում է տարեկան մօտ 300 ո.: ս. Թովմայի վանքը ունի ջրաղաց և կրպակ, որոնցից ստացւում է 55 ո. արդիւնք:

34. Շուռութի ս. Գրիգոր վանքը ունի ջրովի և անջրդի վարելահող և երկու պարտէզ, ընդամենը 4 դ., որից ստացւում է մօտաւորապէս 20 ո. տարեկան արդիւնք:

Նոր Բայազէթի գաւառում.

35. Մաքինեանց վանքն ունի մի փոքրիկ բանջարանոց, որ արդիւնք չէ տալիս:

39. Վանեվանից վանքն ունի մի բանջարանոց Ալիչալու գիւղում, որ արդիւնք չէ տալիս:

37. Ս. Գրիգոր Լուսաւորչի վանք, ոչինչ չունի:

38. Ս. Աստուածածին վանքն աւերակ է և ոչինչ չունի:

39. Ս. Կարապետի աւերակ վանքը ոչինչ չունի:

40. Ս. Յարութիւն աւերակ վանքը ոչինչ չունի:

41. Ս. Յակոբի վանքը ոչինչ չունի:

42. Սեանի վանքը ունի. ա) Գոմաձոր և Յամաքաբերդ գիւղերը. բ) երկու արօտատեղի. գ) «Մաշտոց» հողը. դ) մի այգի Նորք գիւղում—ընդամենը մօտ 2000 դ., որից ստացւում է տարեկան մօտ 1000 ո. արդիւնք: Ունի նաև կրպակներ և այլ անշարժ կալուածներ, որոնց արդիւնքը անյայտ:

Էջմիածնի գաւառում.

43. Ս. Շողակաթի վանքը ունի 28 դ. վարելահող, մի պարտէզ 1800 ք. ս. և մի այգի 8. դ. 808 ք. ս.—ընդամենը 31 դ. 2183 ք. ս., որից ստացւում է տարեկան մօտ 1500 ո. արդիւնք:

44. Ս. Հռիփսիմէի վանքը ունի 80 դ. ջրարբի և ան-
ջրբի վարելահող, մի այգետեղ 3 դ. 598 ք. ս., մի այգի
1 դ. 175 ք. ս. և մի խոտատեղի 1 դ. 300 ք. ս.—ընդա-
մէնը 85 դ. 1073 ք. ս., որից ստացւում է տարեկան մօտ
2500 ու. արդիւնք:

45. Ս. Գայիանէի վանքը ոչինչ չունի:

46. Մոդնու ս. Գէորգ վանքը ունի 14 դ. վարելահող
և 2 այգի Աշտարակում—1 դ., ընդամէնը 15 դ., որից
ստացւում է տարեկան մօտ 500 ու.:

47. Սաղմոռավանք—ս. Սիօնը ոչինչ չունի:

48. Օհաննավանք—ս. Կարապետ. ոչինչ չունի:

Այս թեմի 48 վանքը միասին ունին մօտաւորապէս
32,440 դ. հող, որից ստացւում է տարեկան մօտ 17,190 ու.
արդիւնք: Սոյն 17190 ուրլուց դուրս գալով մօտ 706 ու.
վանքական հողերի հողային և երկրաչափական տարեկան
հարկը, մնում է արդիւնք 46,484 ու., այսինքն իւրաքան-
չիւր դեսնատինից 50 կ. միջին թուով:

Է.

Վրաստանի եւ իմերեթի թեմ.

ա. Թիֆլիզի նահանգում.

1. ս. Սաեփաննոսի կուսանաց վանքը Թիֆլիզում ունի
երկու այգի, որոնց տարածութիւնը և տարեկան արդիւնքը
անյայտ: Ունի նաև 1 քարէ երկյարկանի տուն, 3 կրպակ
և Յունանեանի քարվանսարան, արդիւնքը անյայտ:

2. Թէլէթի ս. Գէորգ վանքը ունի 10 դ. վարելահող,
որից ստացւում է տարեկան 375 ու. արդիւնք:

3. Թոսկան նահատակի վանքը Շամշատինու վիճակում
ունի 155 դ. հող (վիճական), որից արդիւնք չէ ստանում:

4. Խորանաշատու վանքը Ղուլալի գիւղի մօտ, ունի
5 դ. հող, արդիւնքն անյայտ:

5. Սանահինի ս. Աստուածածին վանքը Բորչալուի
գաւառում, ունի իշխան Արղութեան Երկայնաբազուկների

հետ ընկերովի Սանահին և Ունակ գիւղերի ¹/₇ մասը: Ունի ջրաղացատեղի, երեք աչք ջրաղաց, որ 15 թաղար ցորեն և 3 թաղար գարի եկամուտ է բերում, մի կրպակ ձորի մէջ՝ այգում — 220 ու. արդիւնքով:

Ունակ գիւղի տարածութիւնը — բանջարանոց 2064 ք. ս., արտ 21 դ. 760 ք. ս., արածացնելու տեղ 23 դ. 2057 ք. ս., անտառ 195 դ. 1145 ք. ս., ճանապարհ 478 ք. ս., գիւղատեղի 246 ք. ս., մասնաւոր գիւղացիների նադէլ 10 դ. 1434 ք. ս. — ընդամէնը 252 դ. 974 ք. ս.:

Սանահինի տարածութիւնը 425 դ. 1241 ք. ս., որից 401 դ. գիւղացիների ձեռքում առանց նադէլի, 23 դ. 2195 ք. ս. մասնաւոր գիւղացիների նադէլ և 39 դ. վանքի տեպհականութիւն առանձին իրաւունքով: Երկու գիւղը միասին 678 դ. 2225 ք. ս. տարածութիւն ունին:

6. Հաղբատի ս. Աստուածածին վանքը ունի. ա) վարելահող, արօտատեղի և անտառ Բորչալուի գաւառում 7864 դ. տարածութեամբ (վիճակահ հող). բ) երեք պարտէզ Հաղբատում 1 դ. և դ) հինգ բանջարանոց վանքի մօտ 2 դ. ընդամէնը 7867 դ., որ բերում է տարեկան մօտ 250 ու. արդիւնք:

բ. Գանձակի նահանգում և գաւառում:

7. Եղնասարի ս. Սարգիս վանքը Գետաշէնի մօտ, ունի վարելահող 1 դ., որից ստացւում է տարեկան 10 ու. արդիւնք:

8. Չարեքայ ս. Աստուածածին անապատը ունի վարելահող, անտառ և հետեւեալ հինգ ձմերանոցները. — Մոկոզանոց — Կիզիլ-կույայ, Օջախվերտի — Իրկունքայ գոմեր, Վերին Սաթղուլի, Ներքին Սաթղուլի և Քուքուրթ — ընդամէնը 2732-դ. 960 ք. ս., որից ստացւում է տարեկան 1170 ու. արդիւնք: Ունի 1 ջրաղաց, արդիւնքը անյայտ:

9. Ս. Մեարոպ և Սահակ թարգմանչաց անապատը Խաչակապ գիւղի մօտ, ունի վարելահող, անտառ և բանջարանոց, որոնց տարածութիւնը և արդիւնքը անյայտ է:

10. Բանանց գիւղի Թարգմանչաց անապատը ունի մի

այգի և մի բանջարանոց, որոնց տարածութիւնը և արդիւնքը անյայտ է:

11. Գառնակեր գիւղի մօտ Ծաղկանց անապատը՝ յանուն Հրեշտակապետաց, ունի վացելահող և այգի, տարածութիւնը և արդիւնքը անյայտ:

12. Քարխանի ս. Աստուածածնի անապատը Միրզիկ գիւղի մօտ, ունի վարելահող՝ անյայտ տարածութեամբ և արդիւնքով:

13. Կանգնեալ Խաչի անապատ յանուն ս. Աստուածածնի՝ Կերանց գիւղի մօտ, ունի վարելահող անյայտ տարածութեամբ և արդիւնքով:

14. Ամենափրկիչ անապատ յանուն ս. Աստուածածնի՝ Նուզկեար գիւղի մօտ, ունի վարելահող, անյայտ տարածութեամբ և արդիւնքով:

15. Փարփիսոսի վանք յանուն ս. Ստեփաննոսի՝ Փիթ գիւղի մօտ, ունի վարելահող և անտառ՝ անյայտ տարածութեամբ և արդիւնքով:

գ. Ղազախի գաւառում.

16. Հաղարծնի վանքը ունի 750 դ. վարելահող, արօտատեղի և անտառ, որոնցից ստացւում է տարեկան մօտ 700 ռ. արդիւնք:

17. Մակարայ վանք՝ Աղաջուր գիւղի մօտ, ոչինչ չունի: Այս թեմի 17 վանքը միասին ունին մօտաւորապէս 12250 դ. հող, որից ստացւում է տարեկան մօտ 3500 ռ.: Այս 3500 ռուբլուց դուրս գալով 420 ռ., սոյն թեմի վանքական հողերի տարեկան հողային հարկը, մնում է 3080 ռ. արդիւնք, այսինքն իւրաքանչիւր դեսեատինից միջին թուով 25 կ.:

Մայր Աթոռը և Ռուսաստանի Հայոց վեց թեմերի վանքերը միասին ունին մօտաւորապէս 153000 դ. հող, որից ստացւում է տարեկան մօտ 85000 ռ. արդիւնք, այսինքն իւրաքանչիւր դեսեատինից միջին թուով 55 կ.:

Իսկ մնացեալ անշարժ կալուածներից նշանաւոր եկամուտ ստանում է միայն ս. Էջմիածինը—50301 ռ. 32 կ.: Միւս

վանքերի անշարժ կալուածներէց ստացուած եկամուտներ
րի մասին ճիշդ թուեր չկան:

Եթէ ի նկատի առնենք, որ Ռուսաստանի Հայոց բո-
լոր ծխական եկեղեցիները միասին ունին մօտ 20000 դ.
զանազան տեսակ հողեր, *) որոնցից ստացուում է տարե-
կան մօտաւորապէս 25000 ռ. արդիւնք (այսինքն՝ իւրա-
քանչիւր դեսեպտինից 1 ռ. 25 կ.), այն ժամանակ կը տես-
նենք, որ Ռուսաստանում Հայ եկեղեցին ունի ընդամէնը
մօտ 175000 դ. հող, որից ստացուում է տարեկան
մօտ 110000 ռ. արդիւնք, այսինքն իւրաքանչիւր դեսեա-
տինից 63 կ.:

Հողերի արդիւնաւորութեան մասին ճիշդ գաղափար
կազմելու համար անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ, որ
այդ հողերից մեծ մասը ազատ չեն, այլ գիւղեր են, որոն-
ցից ստացուում են միայն տարբեր չափով տուրքեր: Նոյն-
պէս ի նկատի պէտք է ունենալ, որ նոյն իսկ ազատ հողե-
րի մի որոշ մասը վիճական լինելու պատճառով կամ մէ-
մի արդիւնք չէ տալիս, կամ չնչին արդիւնք է տալիս:
Բայց և այնպէս, ընդհանրապէս հողերի արդիւնքը բաւա-
րար լինելուց շատ հեռու է: Մանաւանդ եթէ ի նկա-
տի ունենանք, որ այդ հողերի մէջ են նաև անտառները,
այգիները և այնպիսի հողերը, որոնք արտադրում են ա-
մենաթանկագին բոյսեր—բամբակ, բրինձ և այլն:

Այժմ, երբ եկեղեցու կալուածների կառավարութիւ-
նը նորից մեր ձեռքն է անցնում, անշուշտ ամեն մի հայի-
ջեւրմ ցանկութիւնն է վանքական և եկեղեցական հողերի
շահագործութիւնը աւելի բարւոք վիճակի մէջ գնել, որպէս
զի եկեղեցին հնարաւորութիւն ունենայ իր բազմապատկե-

*) Հայաց եկեղեցիները ընդհանրապէս ունին մանր հողեր
—այգի, պարտէզ, արտ և այլն: Բացառութիւն է կազմում
Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցին, որ Ախալքալաքի գաւառում
ունի մի ընդարձակ կալուածք, որի տարածութիւնը Կարգաթ-
եաւէտ, Դատէշ, և Սուլգա գիւղերով, արօպատեղիներով և վա-
րելահողերով միասին մօտ 19000 դ. է:

կարիքները լցնելու և յատկապէս իր հոգեւոր զաւակների
գլխատարակութեան գործը հաստատուն հիմունքների վրայ
դնելու:

Իսկ թէ ինչ միջոցներով կարելի է համեմատաբար
բարւոյքել այդ կալուածների կառավարութիւնը, դրա մե-
սին մեր համեստ կարծիքը կը յայտնենք մի այլ անգամ:

— * —

ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա, Բ, Գ, Դ, 1900 թ.

(ВѢДОМОСТЬ А, Б, В, Г, 1900 г.)

Ս. Էջմիածնի Սինօդը Իւրաքանչիւր տարի ներկայացնում
է Ներքին գործոց նախարարութեան տեղեկագիր, որ բաղկա-
ցած է լինում չորս մասից և Իւրաքանչիւր մասը կրում է վե-
րայիշեալ մի տառի անունը: Ա. մասը պարունակում է վիճա-
կագրական տեղեկութիւններ մեր հեղեղեցիների, վանքերի, ծխա-
կանների, հոգեւոր ուսումնարանների և աստուածաբանաց հիմ-
նարկութիւնների մասին: Բ. մասը վերաբերում է կուսակրօն
և ամուսնացած հոգեւորականութեան: Գ. մասը նուիրուած է
լինում մեր եկեղեցիների շարժական և անշարժ կայքերի վիճա-
կագրութեան: Իսկ Դ. մասը պարունակում է տեղեկութիւն-
ներ վանքերի շարժական և անշարժ կայքերի մասին: Այս տե-
ղեկագիրը պաշտօնական ընտելութիւն ունի և կազմւում է
հետեւեալ կերպով: Իւրաքանչիւր վիճակային ատեան իր ոտո-
բագրեալ հոգեւոր ատեանների և անձանց միջոցով քաղում է
չափաբերական մատեաններից, հաշուէմատեաններից և ծխա-
տէր քահանաների կազմած ցուցակներից վերոյիշեալ տեղեկու-
թիւնները և ներկայացնում Սինօդին, որն իր կողմից ուղար-
կում է Ներքին գործոց նախարարութեան: Այն տեղեկութիւն-

վանքերի անշարժ կալուածներէից ստացուած եկամուտներէ
րի մասին ճիշդ թուեր չկան:

Եթէ ի նկատի առնենք, որ Ռուսաստանի Հայոց բո-
լոր ծխական եկեղեցիները միասին ունին մօտ 20000 դ.
զանազան տեսակ հողեր, *) որոնցից ստացուում է տարե-
կան մօտաւորապէս 25000 ռ. արդիւնք (այսինքն՝ իւրա-
քանչիւր դեսեատինից 1 ռ. 25 կ.), այն ժամանակ կը տես-
նենք, որ Ռուսաստանում Հայ եկեղեցին ունի ընդամէնը
մօտ 175000 դ. հող, որից ստացուում է տարեկան
մօտ 110000 ռ. արդիւնք, այսինքն իւրաքանչիւր դեսեա-
տինից 63 կ.:

Հողերի արդիւնաւորութեան մասին ճիշդ գաղափար
կազմելու համար անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ, որ
այդ հողերից մեծ մասը ազատ չեն, այլ գիւղեր են, որոն-
ցից ստացուում են միայն տարբեր չափով տուրքեր: Նոյն-
պէս ի նկատի պէտք է ունենալ, որ նոյն իսկ ազատ հողե-
րի մի որոշ մասը վիճական լինելու պատճառով կամ մէ
մի արդիւնք չէ տալիս, կամ չնչին արդիւնք է տալիս:
Բայց և այնպէս, ընդհանրապէս հողերի արդիւնքը բաւա-
րար լինելուց շատ հեռու է: Մանաւանդ եթէ ի նկա-
տի ունենանք, որ այդ հողերի մէջ են նաև անտառները,
այգիները և այնպիսի հողերը, որոնք արտադրում են ա-
մենաթանկագին բոյսեր—բամբակ, բրինձ և այլն:

Այժմ, երբ եկեղեցու կալուածների կառավարութիւ-
նը նորից մեր ձեռքն է անցնում, անշուշտ ամեն մի հայի-
ջերմ ցանկութիւնն է վանքական և եկեղեցական հողերի
շահագործութիւնը աւելի բարւոյք վիճակի մէջ գնել, որպէս
զի եկեղեցին հնարաւորութիւն ունենայ իր բազմապատիկ

*) Հայաց եկեղեցիները ընդհանրապէս ունին մանր հողեր
—այգի, պարտէզ, տքտ և այլն: Բացառութիւն է կազմում
Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցին, որ Ախալքալաքի գաւառում
ունի մի ընդարձակ կալուածք, որի տարածութիւնը Կարգախ-
եաւէտ, Դատէշ, և Սոլլգա գիւղերով, արօպատեղիներով և վա-
րելահողերով միասին մօտ 19000 դ. է:

կարիքները լցնելու և յատկապէս իր հոգեւոր զաւակների
գաստիարակութեան գործը հաստատուն հիմունքների վրայ
դնելու:

Իսկ թէ ինչ միջոցներով կարելի է համեմատաբար
բարւոյեւ այդ կալուածների կառավարութիւնը, դրա մա-
սին մեր համեստ կարծիքը կը յայտնենք մի այլ անգամ:

— — — — —

ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա, Բ, Գ, Դ, 1900 թ.

(ВѢДОМОСТЬ А, Б, В, Г. 1900 г.)

Ս. Էջմիածնի Սինօզը իւրաքանչիւր տարի ներկայացնում
է ներքին գործոց նախարարութեան տեղեկագիր, որ բաղկա-
ցած է լինում չորս մասից և իւրաքանչիւր մասը կրում է վե-
րայիշեալ մի տառի անունը: Ա. մասը պարունակում է վիճա-
կագրական տեղեկութիւններ մերջեկեղեցիների, վանքերի, ծխա-
կանների, հոգեւոր ուսումնարանների և աստուածահաճոյ հիմ-
նարկութիւնների մասին: Բ. մասը վերաբերում է կուսակրօն
և ամուսնացած հոգեւորականութեան: Գ. մասը նուիրուած է
լինում մեր եկեղեցիների շարժական և անշարժ կայքերի վիճա-
կագրութեան: Իսկ Դ. մասը պարունակում է տեղեկութիւն-
ներ վանքերի շարժական և անշարժ կայքերի մասին: Այս տե-
ղեկագիրը պաշտօնական ընտելութիւն ունի և կազմւում է
հետեւեալ կերպով: Իւրաքանչիւր վիճակային ատեան իր ոտո-
ւադրեալ հոգեւոր ատեանների և անձանց միջոցով քաղում է
չափաբերական մատեաններից, հաշուէմատեաններից և ծխա-
տէր քահանաների կազմած ցուցակներից վերոյիշեալ տեղեկու-
թիւնները և ներկայացնում Սինօզին, որն իր կողմից ուղար-
կում է ներքին գործոց նախարարութեան: Այն տեղեկութիւն-

ներք, որոնք բարեխղճաբար քաղուած են ~~չափաբերական մա-~~
~~տեաններէց, հաշուէմատեաններէք~~ և զամ կարողաւոր քահա-
նաների խնամքով կազմած ~~ցուցակներէց, բոլորովին ճիշդ են,~~
~~իսկ նրանք, որոնք հաւորեալած են անձեռնհաս քահանաների~~
~~ձեռքով, կամ նոյն իսկ չափաբերական մատեաններէց և հա-~~
~~շուէմատեաններէց հանուած՝ գործին անտարբեր և մեքենայա-~~
բար վերաբերուող ծառայողների ձեռքով, անտարակոյս, պա-
րունակում են անճշդութիւններ և գուցէ մեծամեծ ռիսկներ:
Այս տեսակէտից նայելով սոյն տեղեկագրի վերայ, պէտք է
ստենք, որ ծխականների թիւը մօտաւոր թիւ է, քաղուած
քահանաների կազմած ցուցակներէց, և նրա անպայման ոտու-
գութեան երաշխաւորել չենք կարող: Վանքերի և եկեղեցիների
թիւը կարելի է ճիշդ համարել, օակայն ի նկատի պէտք է ու-
նենալ, որ մի քանի տեղ ծխական եկեղեցիների և շէն վանքերի
թուի մէջ հաշուած են և ուխտատեղիները, առանց յիշատա-
կութիւն անելու դրա մասին: Կուսակրօն և ամուսնացած քա-
հանաների թիւը ոտոյգ պէտք է համարել, ի բաց առեալ եկե-
ղեցական սպասարարների թիւը, որն անճիշդ է: Ըստ մեզ այս
անճշդութիւնը առաջանաւ է նրանից, որ շատ տեղ եկեղեցա-
կան սպասարար առելով հասկացել են, ինչպէս և պէտք էր
հասկանալ, միայն օրինական եղանակով հոգւոր կոչման մէջ
մտած եկեղեցական սպասարարներին: Իսկ այլ տեղեր սխալմամբ
հասկացել են ընդհանրապէս բոլոր տիրացուներին: Եկեղեցա-
կան և վանքական ելմուտքի և դրամագլուխների գումարը
ճիշդ է, քաղուած լինելով պաշտօնական հաշուէմատեաններէց:
Ինչ վերաբերուած է եկեղեցական և վանքական անշարժ
կայքերին, այժմ մտադիր չենք դրանց մասին տեղեկութիւն-
ներ հաղորդել, յուսալով միայն անգամ դառնալ այդ խնդրին:

Առհասարակ առանց մասնագէտ վիճակագրողների, լոկ
վարչական եղանակով կազմուած սոյն տեսակ վիճակագրական
տեղեկութիւնները անշուշտ չեն կարող երազել կատարելու-
թեան մասին: Իսկ գիտական եղանակով և բանիմաց մասնա-
գէտների ձեռքով կազմուած վիճակագրական տեղեկագիրներ
պակասում են ընդհանրապէս Ռուսաստանում և մասնաւորա-
պէս մեզանում, Կովկասում: Ուստի և սոյն տեղեկագիրը իր
բոլոր պակասութիւններով հանդերձ յամենայն դէպս հետա-
քըքրութիւնից զուրկ լինել չի կարող, մանաւանդ որ, ինչպէս
արդէն յիշեցինք, պաշտօնական ընաւորութիւն ունի, հետեա-
պէս և առանձին կարեւորութիւն:

Սկսենք առաջ բերել վիճակագրական տեղեկութիւններ ըստ թեմերի, տեղ տեղ աւելացնելով և մեր նկատողութիւնները:

Ա.

ՆՐԵՒԱՆԻ ԹԵՄ

ՆՐԵԱՆԵԱՆ ԳԱՆՈՒՄԻ ԵՒ ՆՈՅՆ ԳԱՆՈՒԻ ՆՐԵԱՆ ԲԱՊԱՐԱՄ
Կայ 6 եկեղեցի, 17 քահանայ, 4531 ար., 4099 իգ., ընդամենը
8630 ծխական. արականը իգականից շատ է 432 ուլ: Մի եկեղեցին
ունի միջին թւով 1438 ծխական. մի քահանան 508 ծխա-
կան: Կայ 1 արքեպիսկոպոս, 2 վարդապետ, 18 եկեղեցական
սպասաւոր: 6 եկեղեցին միասին ունին ընդամենը 15032 ր.
38 կ. դրամագլուխ, 3602 ր. 45 կ. տարեկան մուտք, 3914 ր.
97 կ. տարեկան ելք: Երեսնամ կայ 1 թեմական դպրանոց,
460 աշակերտով և 20 ուսուցչով:

Նոյն գաւառի 65 գիւղում—64 եկեղեցի, 4 վանք, 84 քա-
հանայ, 23893 ար., 21225 իգ., ընդամենը 45118 ծխական,
արականը իգականից շատ է 2668 ուլ: Մի եկեղեցին ունի միջին
թւով 705 ծխական, մի քահանան 537 ծխական: Կայ 24 եկեղ.
սպասաւոր: 64 եկեղեցին ի միասին ունին 40623 ր. 35 կ. դրա-
մագլուխ, 2855 ր. 92 կ. տարեկ. մուտք, 3091 ր. 81 կ. ելք:
4 վանքը միասին ունին ընդամենը տարեկան 2048 ր. 58. կ.
մուտք, 2988 ր. 19. կ. ելք:

Հին-Նախիջեւան գաւառի Հին-Նախիջեւան փաղափում—
3 եկեղեցի, 5 քահանայ, 845 ար., 837 իգ., ընդամենը 1682
ծխական. արականը շատ է իգականից 8 ուլ: Մի եկեղեցին ունի
561 ծխական, մի քահանան 336 ծխական: Կայ մի վարդապետ,
2 եկեղ. սպասաւոր: 3 եկեղեցին միասին ունին 4450 ր. 74 կ.
դրամագլուխ, 696 ր. 14 կ. մուտք, 543 ր. 95 կ. ելք:

Նոյն գաւառի Օրդուպաս փաղափում—1 եկ., 1 ք., 122 ար.,
120 իգ., ընդամենը 242 ծխական. արականը իգականից շատ է
2 ուլ: Եկեղեցին ունի 181 ր. 96 կ. դրամագլուխ, 70 ր. 15 կ.
մուտք, 67 ր. 90 կ. ելք:

Նոյն գաւառի 85 գիւղում—90 եկեղ., 76 քահանայ, 12
վանք. 30402 ար., 25946 իգ., ընդամենը 56348 ծխական. արա-
կանը իգականից շատ է 4456 ուլ: Մի եկեղեցին ունի միջին
թւով 626 ծխական, մի քահանան 741 ծխակ.: Կայ 2 եկեղ.
սպասաւոր: 90 եկեղեցին միասին ունին 42403 ր. 17 կ. դրա-

մագլուխ, 4600 ր. 74 կ. մուտք, 3119 ր. 44 կ. ելք: 12 վանքը ունին 3628 ր. 78 կ. տարեկ. մուտք, 4214 ր. 41 կ. ելք:

Աղեփսանդրապօլ գաւառի Աղեփսանդրապօլ փաղափում— 4 եկեղ., 26 քահանայ, 14773 արակ., 13058 իգ., ընդամենը 27831 ծխական. արականը իգականից շատ է 1715 ով: Մի եկեղեցին ունի 6958 ծխկ., մի քահանայն 1070 ծխակ.: 1 վարդապետ, 4 եկեղ. ոպաս.: 4 եկեղեցին ունին 2384 ր. 65 կ. դրամագլուխ, 8583 ր. 96 կ. մուտք, 8289 ր. 69 կ. ելք:

Նոյն գաւառի 124 գիւղում—122 եկ., 151 քահանայ, 2 վանք, 61514 ար., 57331 իգ., ընդամ. 118845 ծխական. արականը իգականից շատ է 4183 ով: Մի եկեղեցին ունի 974 ծխական, մի քահանայն 787 ծխկ.: Կայ 8 եկեղ. ոպաս.: 122 եկեղեցին ունին 48909 ր. 19 կ. դրամագլուխ, 7849 ր. 38 կ. մուտք, 5345 ր. 98 կ. ելք: 2 վանքը ունին 2812 ր. 34½ կ. մուտք, 2567 ր. 86 կ. ելք:

Սուրմալի գաւառի 22 գիւղում—23 եկեղ., 30 քահանայ, 13123 ար., 12000 իգ., ընդամ. 25123 ծխական. արականը իգականից 1123 ով աւելի է: Մի եկեղեցին ունի 1092 ծխկ., մի քահանայն 837 ծխկ., 44 եկեղեցակ. ոպասուոր կայ: 24 եկեղեցին ունին ընդամենը 14116 ր. 50 կ. դրամագլուխ, 1482 ր. մուտք, 770 ր. 20 կ. ելք տարեկան:

Էջմիածնի գաւառի 91 գիւղում—92 եկեղեցի, 132 քահանայ, 6 վանք, 42599 արական, 37852 իգ., ընդամենը 80451 ծխական. արականը իգականից շատ է 4747 ով: Մի եկեղեցին ունի 874 ծխակ., մի քահանայն 609 ծխկ.: Կայ 1 վարդապետ, 7 եկեղ. ոպաս.: 92 եկեղեցիները ի միասին ունին 27468 ր. 63 կ. դրամագլուխ, 5435 ր. 74 կ. մուտք, 7798 ր. 23 կ. ելք տարեկան: 6 վանքերը միասին ունին 2944 ր. 40 կ. մուտք, 3141 ր. 40 կ. ելք:

Նոր-Քայազիսի գաւառի Նոր-Քայազիս փաղափում—2 եկ., 11 քահանայ, 4306 ար., 3928 իգ., ընդամ. 8234 ծխկ., արականը իգականից շատ է 378 ով: Մի եկեղեցուն ընկնում է 4117 ծխկ., մի քահանային 749 ծխկ.: Կայ 1 վարդապետ, 12 եկ. ոպաս.: 2 եկեղեցին ունին 1569 ր. 77 կ. դրամագլուխ, 874 ր. 10 կ. մուտք, 759 ր. 64 կ. ելք:

Նոյն գաւառի 57 գիւղում—58 եկեղ., 97 քահանայ, 8 վանք, 39986 արակ., 37942 իգ., ընդամենը 77928 ծխական. արականը շատ է իգականից 2044 ով: Մի եկեղեցուն ընկնում է 1344 ծխկ., մի քահանային 803 ծխակ.: Կայ 1 վարդապետ,

44 եկ. սպաս. 58 եկեղեցին ի միասին ունին 8312 ռ. 26 կ. դրամագլուխ, 1653 ռ. 28 կ. մուտք, 1385 ռ. 74 կ. ելք: 8 վանքը միասին ունին 4079 ռ. 45 կ. դրամագլուխ, 8276 ռ. 76 կ. մուտք, 8349 ռ. 47 կ. ելք:

Կարս Երջանի Կարս ֆաղափում—2 եկ., 5 քահանայ, 3151 արական, 3170 իգ., ընդամ. 6321 ծխական. իգականը շատ է արականից 19 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 3160 ծխկ., մի քահանային 1264 ծխկ.: Կայ 1 վարդապետ: 2 եկեղեցին ունին ի միասին 144 ռ. 32 կ. դրամագլուխ, 2873 ռ. 90 կ. մուտք, 2801 ռ. 75 կ. ելք:

Նոյն Երջանի Կաղզուան ֆաղափում—1 եկ., 3 քահանայ, 1241 արական, 1319 իգ., ընդամենը 2560 ծխկ., իգականը արականինից շատ է 78 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 2560 ծխկ., մի քահանային 853 ծխկ.: Եկեղեցին ունի 3167 ռ. 72 կ. դրամագլուխ, 937 ռ. 9 կ. մուտք, 790 ռ. 58 կ. ելք:

Նոյն Երջանի 89 գիւղում—86 եկ., 56 քահանայ, 4 վանք 24554 արակ., 23271 իգ., ընդամ. 47825 ծխկ., արականը իգականից շատ է 1283 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 556 ծխկ., մի քահանային 854: Կայ 6 վարդապետ: 86 եկեղեցին ունին 13977 ռ. 92 կ. դրամագլուխ, 10606 ռ. 20 կ. մուտք, 3458 ռ. 79 կ. ելք տարեկան: 4 վանքը ունին ի միասին 467 ռ. 28 կ. դրամագլուխ, 1695 ռ. 20 կ. մուտք, 1630 ռ. 10 կ. ելք:

Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի 87 գիւղում—89 եկեղ., 94 քահանայ, 11 վանք, 36724 արական, 30142 իգ., ընդամ. 66866 ծխկ., արականը իգականից շատ է 6582 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 751 ծխկ., մի քահանային 711 ծխկ.: Կայ 1 վարդապետ, 23 եկեղ. սպաս.: 89 եկեղեցին ունին ընդամենը 16540 ռ. 66 կ. դրամագլուխ, 8210 ռ. 19 կ. մուտք, 1660 ռ. 5 կ. ելք: 11 վանքը միասին ունին տարեկան 6074 ռ. 49 կ. մուտք և նոյնքան ելք:

Աւբոդ Նրեւանի քեմում կայ 643 եկեղեցի, 47 վանք, 788 քահանայ, 301764 արական, 272240 իգական, ընդամենը 574004 ծխական, որոնցից 55500 ծխկ. քաղաքաբնակ, 518504 գիւղաբնակ: Մի եկեղեցուն ընկնում է 893 ծխկ., մի քահանային 728 ծխկ.: 643 եկեղեցին միասին ունին 239283 ռ. 22 կ. դրամագլուխ, 60331 ռ. 24 կ. մուտք, 43798 ռ. 72 կ. ելք: 47 վանքը միասին ունին 4546 ռ. 73 կ. դրամագլուխ, 27477 ռ. 55¹/₂ կ. մուտք, 28965 ռ. 92 կ. ելք: Ունի 1 թեմական դպրոց 460 աշակերտով և 20 ուսուցչով:

Բ.

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԻ ԻՄԷՐԷԹԻ ԹԵՄ

Թիֆլիս ցահանգի եւ նոյն գաւառի Թիֆլիս փաղափում—
26 եկ., 1 կուստնաց վանք, 1 արքեպիսկոպոս, 1 վարդապետ,
62 քահանայ, 18 կոյս, 3 եկեղ. սպաս., 23213 արական, 20117
իգական, ընդամ. 43330 ծխակ., արականը իգականից շատ է
3096 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 1167 ծխական, մի քահա-
նային 699 ծխկ.: 26 եկեղեցին միասին ունին 107795 ը. 66 կ.
գրամագլուխ, 68053 ը. 63 կ. մուտք, 50123 ը. 24 կ. ելք:
1 դպրանոց 597 աշակերտով և 24 ուսուցչով:

Նոյն գաւառի 41 գիւղում—47 եկեղ., 2 վարդապետ, 20
քահանայ, 5 եկեղ. սպասաւոր, 9368 արակ., 7884 իգ., ընդամ.
17252 ծխկ., արականը շատ է իգականից 1484 ուլ: Մի եկեղե-
ցուն ընկնում է 388 ծխկ., մի քահանային 863 ծխկ.: 47 եկե-
ղեցին միասին ունին 11320 ը. 88 կ. գրամագլուխ, 4609 ը.
21 կ. մուտք, 4415 ը. 27 կ. ելք:

Բորչալուի գաւառի 52 գիւղում—52 եկեղ., 1 վանք, 1 վար-
դապետ, 51 քահանայ, 2 եկ. սպաս., 21677 արակ., 18588
իգ., ընդամ. 40245 ծխկ., արականը իգականից շատ է 3109 ուլ:
Մի եկեղեցուն ընկնում է 774 ծխկ., մի քահանային 789
ծխկ.: 52 եկեղեցին ի միասին ունին 8807 ը. 98 կ. գրա-
մագլուխ, 2197 ը. 79 կ. մուտք, 1681 ը. 71 կ. ելք: Մի վանքը
ունի 7 ը. 71 կ. գրամագլուխ, 957 ը. 74 կ. մուտք, 950 ը.
36 կ. ելք:

Դուեք գաւառի Դուեք փաղափում—2 եկեղ., 1 քհ., 1 եկ.
սպաս., 378 ար., 354 իգ., ընդամ. 732 ծխկ., արականը իգա-
կանից շատ է 24 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 366 ծխկ., մի
քահանային 732 ծխկ.: 2 եկեղեցին միասին ունին 2376 ը. 58 կ.
գրամագլուխ, 725 ը. 10 կ. մուտք, 634 ը. 57 կ. ելք:

Նոյն գաւառի 6 գիւղում—8 եկեղ., 5 քահանայ, 1880 ար.,
1689 իգ., ընդամենը 3569 ծխկ., արականը շատ է իգականից
191 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 446 ծխկ., մի քահանային
714 ծխկ.: 8 եկեղեցին միասին ունին 7029 ը. 20 կ. գրամա-
գլուխ, 1053 ը. 37 կ. մուտք, 598 ը. 18 կ. ելք:

Գորի գաւառի Գորի փաղափում—3 եկեղ., 1 վարդապետ,
5 քահանայ, 1426 արակ., 1285 իգ., ընդամ. 2711 ծխկ.,

արականը իգականից շատ է 141 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 904 ծխկ., մի քահանային 542 ծխկ.: 3 եկեղեցին միասին ունին 1715 ռ. 52 կ. դրամագլուխ, 3816 ռ. 42 կ. մուտք, 2455 ռ. 92 կ. ելք:

Նոյն գաւառի 19 գիւղում—19 եկեղ., 21 քահանայ, 7394 ար., 6315 իգ., ընդամ. 13709 ծխական, արականը շատ է իգականից 1079 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 722 ծխկ., մի քահանային 653 ծխկ.: 19 եկեղեցին միասին ունին 10693 ռ. 98 կ. դրամագլուխ, 2281 ռ. 50 կ. մուտք, 2639 ռ. 33 կ. ելք:

Թելաւ գաւառի Թելաւ փաղափում—6 եկեղ., 8 քահանայ, 2 եկեղ. սպաս., 2601 արական, 2446 իգ., ընդամ. 5047 ծխկ., արականը շատ է իգականից 155 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 841 ծխկ., մի քահանային 631 ծխկ.: 6 եկեղեցին միասին ունին 2409 ռ. 49 կ. դրամագլուխ, 1401 ռ. 28 կ. մուտք, 1640 ռ. 62 կ. ելք:

Նոյն գաւառի 17 գիւղում—18 եկեղ., 6 քահանայ, 2147 արական, 1608 իգ., ընդամ. 3755 ծխկ., արականը շատ է իգականից 539 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 209 ծխկ., մի քահանային 626 ծխկ.: 18 եկեղեցին միասին ունին 1425 ռ. 73 կ. դրամագլուխ, 186 ռ. 17 կ. մուտք, 263 ռ. 49 կ. ելք:

Սղնախ գաւառի Սղնախ փաղափում—3 եկեղ., 6 քահանայ, 2126 արակ., 2188 իգ., ընդամ. 4314 ծխկ., իգականը շատ է արականից 62 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 1438 ծխկ., մի քահանային 719 ծխկ.: 3 եկեղեցին միասին ունին 562 ռ. 19 կ. դրամագ., 531 ռ. 46 կ. մուտք, 430 ռ. 59 կ. ելք:

Զաւաթալայի օրջանակի Զաւաթալա փաղափում—1 եկեղ., 1 քահանայ, 731 ար., 566 իգ., ընդամ. 1297 ծխկ., արականը շատ է իգականից 195 ուլ: Եկեղեցին ունի 1068 ռ. 41 կ. դրամագ., 1440 ռ. 44 կ. մուտք, 772 ռ. 73 կ. ելք:

Նոյն օրջանակի 12 գիւղում—12 եկեղ., 8 քահանայ, 2774 արական, 2489 իգ., ընդամ. 5263 ծխկ., արականը շատ է իգականից 285 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 439 ծխկ., մի քահանային 658 ծխկ.: 12 եկեղեցին ունին միասին 1782 ռ. 37 կ. դրամագ., 375 ռ. 30 կ. մուտք, 438 ռ. 60 կ. ելք:

Ախալցխա գաւառի Ախալցխա փաղափում—4 եկեղ., 1 վարդապետ, 11 քահանայ, 8 եկեղ. սպաս., 4618 ար., 4752 իգ., ընդամ. 9370 ծխկ., իգականը արականից շատ է 134 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 2342 ծխկ., մի քահանային 852 ծխկ.: 4 եկեղեցին ունին 5619 ռ. 74 կ. դրամագլուխ, 5491 ռ. 4 կ. մուտք, 8972 ռ. 22 կ. ելք:

Նոյն գաւառի 10 գիւղում—10 եկեղ., 7 քահանայ, 2222 արակ., 2092 իգ., ընդամենը 4314 ծխկ., արականը իգականից շատ է 130 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 431 ծխկ., մի քահանային 166 ծխկ.: 10 եկեղեցին միասին ունին 4844 ր. 82 կ. դրամագ., 1589 ր. 75 կ. մուտք, 1417 ր. 17 կ. ելք:

Ախալքալաքի գաւառի Ախալքալաք փաղաւում—1 եկեղ., 5 քահանայ, 2571 ար., 2233 իգ., ընդամենը 4804 ծխկ., արականը շատ է իգականից 338 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 4804 ծխկ., մի քահանային 961 ծխկ.: եկեղեցին ունի 3595 ր. 63 կ. դրամագ., 1465 ր. 76 կ. մուտք, 997 ր. 11 կ. ելք:

Նոյն գաւառի 57 գիւղում—50 եկեղեցի, 44 քահանայ, 25054 արական, 21822 իգ., ընդամ. 46876 ծխակ., արականը շատ է իգականից 3232 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 938 ծխկ., մի քահանային 1065 ծխկ., 50 եկեղեցին ունին ի միասին 49514 ր. 5 կ. դրամագլուխ, 2794 ր. 34 կ. մուտք, 2742 ր. 47 կ. ելք:

Գանձակ նահանգի եւ նոյն գաւառի Գանձակ փաղաւում—6 եկեղ., 1 եպիսկոպոս, 14 քահանայ, 5958 ար., 6184 իգ., ընդամ. 12082 ծխակ., իգականը շատ է արականից 226 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 2014 ծխկ., մի քահանային 863 ծխկ.: 6 եկեղեցին ունին 26423 ր. 36 կ. դրամագլուխ, 7269 ր. 97 կ. մուտք, 7826 ր. 75 կ. ելք:

Նոյն գաւառի 23 գիւղում—23 եկեղ., 9 վանք, 2 վարդապետ, 26 քահանայ, 3 եկեղ. սպաս., 12544 արակ., 10958 իգ., ընդամ. 23502 ծխակ., արականը շատ է իգականից 1586 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 1022 ծխկ., մի քահանային 904 ծխկ.: 23 եկեղեցին ի միասին ունին 10132 ր. 20 կ. դրամագ., 1843 ր. մուտք, 1092 ր. 36 կ. ելք: 9 վանքը միասին ունին 30 ր. 54 կ. դրամագ., 1070 ր. 78 կ. մուտք, 1103 ր. 88 կ. ելք:

Ղազախ գաւառի Ղազախ փաղաւում—1 եկեղ., 1 քահանայ, 300 արակ., 150 իգ., ընդամ. 450 ծխկ., արականը շատ է իգականից 150 ուլ: եկեղեցին ունի 176 ր. 7. կ. դրամագլ., 66 ր. 25 կ. մուտք, 57 ր. 25 կ. ելք:

Նոյն գաւառի 47 գիւղում—51 եկեղ., 3 վանք, 52 քահանայ, 27255 ար., 22594 իգ., ընդամ. 49849 ծխկ., արականը շատ է իգականից 4661 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 977 ծխկ., մի քահանային 959 ծխկ.: 51 եկեղեցին ունին ի միասին 20009 ր. 14 կ. դրամագլ., 4631 ր. 28 կ. մուտք, 1752 ր. 85 կ. ելք: վանքերի նիւթական վիճակի մասին ոչինչ չկայ տեղեկագրում:

Քուրայիս նահանգի եւ նոյն գաւառի Քուրայիս փաղափում—
1 եկեղ., 2 քահանայ, 516 ար., 500 իգ., ընդամ. 1016 ծխկ.,
արականը շատ է իգականից 16 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է
1016 ծխկ., մի քահանային 508 ծխկ.: եկեղեցին ունի 824 ռ.
88 կ. դրամագլ. 1558 ռ. 22 կ. մուտք, 1202 ռ. 56 կ. ելք:

Փօրի փաղափում—1 եկեղ., 1 քահանայ, 59 ար., 39 իգ.,
ընդամ. 98 ծխկ., արականը շատ է իգականից 20 ուլ: եկեղե-
ցին ունի 336 ռ. 15 կ. դրամագլ., 848 ռ. 50 կ. մուտք,
250 ռ. 6 կ. ելք:

Նարոպանի գաւառի 2 գիւղում— 2 եկ., 2 քահանայ,
442 ար., 420 իգ., ընդամ. 862 ծխկ., արականը շատ է իգա-
կանից 22 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 431 ծխկ., մի քահա-
նային 431 ծխկ.: 2 եկեղեցին ունին ի միասին 979 ռ. 50 կ.
դրամագլ., 503 ռ. 75 կ. մուտք, 446 ռ. 9 կ. ելք:

Լեյխումի գաւառի Լայլաւ գիւղում—1 եկ., 1 քահանայ,
90 ար., 90 իգ., ընդամ. 180: եկեղեցին ունի 561 ռ. 54 կ.
դրամգլ., 36 ռ. 36 կ. մուտք, 5 ռ. 26 կ. ելք:

Խաչինեան գաւառի Օնի գիւղում—1 եկ., 1 քահանայ,
85 ար., 82 իգ., ընդամենը 167 ծխկ., արականը շատ է իգա-
կանից 3 ուլ: եկեղեցին ունի 140 ռ. 10 կ. դրամագլ., 58 ռ.
13 կ. մուտք, 30 ռ. 37 կ. ելք:

Բաքումի Երջանի եւ նոյն Երջանակի Բաքում փաղափում—
1 եկեղ., 2 քահանայ, 812 ար., 722 իգ., ընդամ. 1534 ծխկ.,
արականը շատ է իգականից 90 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է
1534 ծխկ., մի քահանային 747 ծխկ.: եկեղեցին ունի 279 ռ.
97 կ. դրամագլ., 5509 ռ. 75 կ. մուտք, 5056 ռ. 50 կ. ելք:

Արդուիքի Երջանակի Արդուիք փաղափում—1 եկեղեցի, 2
քահանայ, 664 ար., 668 իգ., ընդամ. 1332 ծխկ., իգականը
արականից շատ է 4 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 1332 ծխկ.,
մի քահանային 666 ծխկ.: եկեղեցին ունի 2057 ռ. 10 կ. դրա-
մագլ., 1052 ռ. 87 կ. մուտք, 1288 ռ. 85 կ. ելք:

Արսանուլի գաւառակի 2 գիւղում—2 եկ., 2 քահանայ,
369 ար., 363 իգ., ընդամ. 732 ծխկ., արականը շատ է իգա-
կանից 6 ուլ: Մի եկեղեցուն և մի քահանային ընկնում է 366
ծխկ.: 2 եկեղեցին միասին ունին 2589 ռ. 24 կ. դրամագլ. 540 ռ.
36 կ. մուտք, 226 ռ. 8 կ. ելք:

Մաւեքի գաւառակի 2 գիւղում—2 եկեղ., 2 քահանայ,
551 ար., 466 իգ., ընդամ. 1017 ծխկ., արականը շատ է
իգականից 85 ուլ: Մի եկեղեցուն և մի քահանային ընկնում է
508 ծխական: Երկու եկեղեցին միասին ունին 1795 ռ. 47 կ.,

դրամագլ., 468 ռ. 72 կ. մուտք, 566 ռ. 35 կ. ելք:

Սոխումի Երջանակի Մցարա գիւղում—1 եկ., 1 քահանայ, 654 ար., 503 իգ., ընդամ. 1057 ծխկ., արականը շատ է իգականից 51 ուլ: Եկեղեցին ունի 200 ռ. 10 կ. դրամգ., 116 ռ. 93 կ. մուտք, 206 ռ. 53 կ. ելք:

Ամբողջ Վրաստանի և Իմէրէթի թեմում կայ ընդամենը 356 եկեղեցի, 14 վանք, 2 եպիսկոպոս, 8 վարդապետ, 370 քահանայ, 19 եկեղ. սպաս., 160379 տրական, 140147 իգական, ընդամենը 300526 ծխական, որից 88117 ը քաղաքաբնակ, 212409 ը գիւղաբնակ: Մի եկեղեցուն միջին թւով ընկնում է 844 ծխակ., մի քահանային 815 ծխկ.: 356 եկեղեցին միասին ունին 287067 ռ. 5 կ. դրամագլուխ, 121816 ռ. 65 կ. տարեկ. մուտք, 100230 ռ. 8 կ. տարեկ. ելք: 14 վանքը միասին ունին 38 ռ. 25 կ. դրամագլուխ, 2048 ռ. 52 կ. մուտք, 2054 ռ. 24 կ. ելք: Թեմում կայ 1 թեմական դպրանոց 597 աշակերտով և 24 ուսուցչով:

Գ.

ՂԱՐԱՐԱՂԻ ԹԵՄ

Գանձակ նահանգի Նուբուայ գաւառի Նուբի ֆաղափում—4 եկեղ., 1 կուռանոց վանք, 1 եպիսկոպոս, 2 վարդապետ, 3 կոյս, 19 քահանայ, 7 եկեղեցական սպասաւոր, 7052 արական, 7232 իգ., ընդամ. 14284 ծխկ., իգականը շատ է արականից 180 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 3571 ծխկ., մի քահանային 752 ծխական: 4 եկեղեցին միասին ունին 14977 ռ. 15¹/₂ կ. դրամագլուխ, 5885 ռ. 91¹/₂ կ. տարեկան մուտք, 4966 ռ. 42 կ. տար. ելք: Կուսանոց վանքն ունի 300 ռ. դրամագլուխ, 185 ռ. 20 կ. մուտք, 185 ռ. 20 կ. ելք: 1 թեմական դպրանոց 17 ուսուցչով և (?) աշակերտով:

Նուբի. Զեբրայիլ, Զիււնօբի եւ Արեօ գաւառների 168 հայաբնակ գիւղում—153 եկեղեցի, 10 վանք, 166 քահանայ, 25 եկեղեց. սպասաւոր, 60522 արակ., 47693 իգակ., ընդամ. 108215 ծխական, արականը շատ է իգականից 12820 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 707 ծխական, մի քահանային 649 ծխկ.: 153 եկեղեցին միասին ունին 11290 ռ. 82 կ. դրամագլուխ, 2706 ռ. 69 կ. մուտք, 2119 ռ. 23 կ. ելք: 10 վանքը միասին ունին 79 ռ. 13 կ. դրամագլուխ, 6681 ռ. 19 կ. մուտք, 6403 ռ. 90 կ. ելք:

Նուխի գաւառի Նուխի փաղափում—2 եկեղեցի, 1 վարդապետ, 5 քահանայ, 4 եկեղ. ոպասո., 1859 տրական, 1567 իգական, ընդամ. 3426 ծխական. տրականը շատ է իգականից 292 ով: Մի եկեղեցուն ընկնում է 1713 ծխակ., մի քահանային 856 ծխական: 2 եկեղեցին միասին ունին 10857 ը. 41 կ. դրամագլուխ, 885 ը. 96 կ. մուտք, 878 ը. 51 կ. ելք:

Նոյն գաւառի 50 հայաբնակ գիւղում—48 եկեղեցի, 2 վանք, 45 քահանայ, 2 եկեղ. սպասաւոր, 16549 տրակ., 14769 իգակ., ընդամենը 31315 ծխական. տրականը շատ է իգականից 1783 ով: Մի եկեղեցուն ընկնում է 652 ծխկ., մի քահանային 696 ծխական: 48 եկեղեցին միասին ունին 8160 ը. 37 կ. դրամագլուխ, 1386 ը. 54 կ. մուտք, 1270 ը. 16 կ. ելք: Վանքերի ունեցածը յայտնի չէ:

Բագու նահանգի Լեւոնուրան գաւառի Լեւոնուրան փաղափում—1 քահանայ, 1 եկեղեցի. այլ ևս ոչինչ յայտնի չէ:

Ըստ այսմ ամբողջ Ղարաբաղի թեմում կայ 208 եկեղ., 13 վանք, 1 եպիսկոպոս, 3 վարդապետ, 3 կոյս, 236 քահանայ, 38 եկեղեց. ոպասաւոր, 85982 տրական, 71258 իգական, ընդամ. 157240 ծխական: Երկից 17710 քաղաքաւանակ, 139530 գիւղաւանակ: Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 756 ծխական, մի քահանային 666 ծխական: 20 եկեղ. միասին ունին 45285 ը. 76 $\frac{1}{2}$ կ. դրամագլուխ, 10865 ը. 10 $\frac{1}{2}$ կ. տար. մուտք, 9234 ը. 32 կ. ելք: 13 վանքը միասին ունին 379 ը. 13 կ. դրամագլուխ, 6816 ը. 36 կ. մուտք, 6589 ը. 10 կ. ելք: 1 թեմական դպրանոց:

Դ.

Շ Ա Մ Ա Խ Ո Ւ Թ Ե Մ

Բագու նահանգի եւ նոյն գաւառի Բագու փաղափում—2 եկեղ., 1 վարդապետ, 11 քահանայ, 2 եկեղ. ոպասաւոր, 3973 տրական, 3697 իգական, ընդամ. 7670 ծխական. տրականը իգականից շատ է 276 ով: Մի եկեղեցուն ընկնում է 3835 ծխակ., մի քահանային 697 ծխակ.: 2 եկեղեցին միասին ունին 49445 ը. 29 կ. դրամագլ., 25937 ը. 19 կ. մուտք, 11886 ը. 35 կ. ելք: Ծխականների թիւը մեր կարծիքով չափազանց քիչ է ցոյց տրուած:

Շամախու գաւառի Շամախի փաղափում—*Յ եկեղեցի*, 1 *եպիսկոպոս*, 1 *վարդապետ*, 1 *քահանայ*, 3 *եկեղեցական սպասաւոր*, 2066 *արական*, 2026 *իգական*, *ընդամենը* 4062 *ծխական*, *արականը շատ է իգականից* 40 *ով*: Մի *եկեղեցուն* և *մի քահանային* *ընկնում է* 4092 *ծխական*: 2 *եկեղեցին* *միասին ունին* 9902 *ր.* 24 *կ.* *դրամագլուխ*, 538 *ր.* 72 *կ.* *մուտք*, 1253 *ր.* 27 *կ.* *ելք*:

Նոյն գաւառի 23 *հայաբնակ գիւղում*—13 *եկեղեցի*, 2 *վանք*, 11 *քահանայ*, 7768 *արակ.*, 6621 *իգ.*, *ընդամ.* 14389 *ծխական*. *արականը իգականից շատ է* 1147 *ով*: Մի *եկեղեցուն* *ընկնում է* 1107 *ծխակ.*, *մի քահանային* 1308 *ծխական*: 13 *եկեղեցին* *միասին ունին* 10484 *ր.* 59 *կ.* *դրամագլուխ*, 1270 *ր.* 33 *կ.* *մուտք*, 961 *ր.* 57 *կ.* *ելք*: 2 *վանքը* *միասին ունին* 3 *ր.* *դրամագլուխ*, 1177 *ր.* 37 *կ.* *մուտք*, 1179 *ր.* 98 *կ.* *ելք*:

Գեօֆչայի գաւառի 21 *հայաբնակ գիւղում*—17 *եկեղ.*, 11 *քահանայ*, 8989 *արական*, 6826 *իգակ.*, *ընդամ.* 14815 *ծխակ.*, *արականը շատ է իգականից* 1163 *ով*: Մի *եկեղեցուն* *ընկնում է* 1347 *ծխակ.*, *մի քահանային* 871 *ծխակ*: 17 *եկեղեցին* *միասին ունին* 8389 *ր.* 66 *կ.* *դրամագլուխ*, 764 *ր.* 25 *կ.* *մուտք*, 891 *ր.* 19 *կ.* *ելք*:

Ղուբայի գաւառի Ղուբա փաղափում—1 *եկեղեցի*, 2 *քահանայ*, 390 *արակ.*, 428 *իգակ.*, *ընդամ.* 818 *ծխական*. *իգականը շատ է արականից* 38 *ով*: Մի *եկեղեցուն* *ընկնում է* 848 *ծխակ.*, *մի քահանային* 409 *ծխակ.*: *եկեղեցին ունի* 16095 *ր.* 85 *կ.* *դրամագլուխ*, 1021 *ր.* 73 *կ.* *մուտք*, 1149 *ր.* 53 *կ.* *ելք*:

Նոյն գաւառի 2 *հայաբնակ գիւղում*—2 *եկեղեցի*, 3 *քահանայ*, 337 *արակ.*, 222 *իգակ.*, *ընդամ.* 559 *ծխական*. *արականը շատ է իգականից* 115 *ով*: Մի *եկեղեցուն* *ընկնում է* 279 *ծխական*, *մի քահանային* 186 *ծխական*: 2 *եկեղեցին* *միասին ունին* 1585 *ր.* 55 *կ.* *դրամագլուխ*, 85 *ր.* 25 *կ.* *մուտք*, 11 *ր.* 40 *կ.* *ելք*:

Դաղստանի Երջանի Դեբեհն փաղափում—1 *եկեղեցի*, 1 *քահանայ*, 1 *եկեղ.* *սպասաւոր*, 314 *արակ.*, 386 *իգակ.*, *ընդամ.* 700 *ծխական*. *իգականը շատ է արականից* 72 *ով*: *եկեղեցին* *ունի* 5007 *ր.* 94 *կ.* *դրամագլուխ*, 1298 *ր.* 75 *կ.* *մուտք*, 938 *ր.* 8 *կ.* *ելք*: *

* Բայ է Թողուած Ձեւատի գաւառը ուր մօտ 700 ծխական կայ. ի Թիւս որոց մօտ 400 ծխական Սաղեան աւանում.

Ըստ այսմ ամբողջ Նամական թեմում կայ 38 եկեղ., 2 վանք, 1 եպիսկոպոս, 2 վարդապետ. 40 քահանայ, 6 եկեղ. սպասաւոր, 22837 արական, 20206 իգական, ընդամ. 43043 ծխական, որից 13280 ը քաղաքաբնակ, 29763 ը գիւղաբնակ: Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 1133 ծխական, մի քահանային 1076 ծխական: 38 եկեղեցին միասին ունին 100211 ը. 12 կ. դրամագլուխ, 31016 ը. 22 կ. մուտք, 17091 ը. 39 կ. ելք տարեկան: 2 վանքը միասին ունին 3 ը. դրամագլուխ, 1177 ը. 37 կ. մուտք, 1179 ը. 98 կ. ելք:

Ե

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ

Աստրախան նահանգի Աստրախան փաղափում—5 եկեղեցի, 1 արք-եպիսկոպոս, 10 քահանայ, 9 եկեղեցական սպասաւոր, 3852 արակ., 3951 իգակ., ընդամենը 7803 ծխական. իգականը արականից շատ է 99 ու: Մի եկեղեցուն ընկնում է 1560 ծխական, մի քահանային 780 ծխական: 5 եկեղեցին միասին ունին 177,667 ը. 22 կ. դրամագլուխ, 24116 ը. 16 կ. մուտք, 30750 ը. 8 կ. ելք տարեկան: Կայ 1 անկեղանոց, ուր պատասպարւում են 17 արական, 27 իգական, ընդամենը 44 ծխական:

Նիժնեգորոդեան նահանգի Նիժնի Նովգորոդ փաղափում (սոցալանաւանդում)—1 եկեղեցի, որը ունի 12942 ը. 50 կ. դրամագլուխ, 790 ը. մուտք, 940 ը. 53 կ. ելք տարեկան:

Սաււրապոլի նահանգում—6 եկեղ., 7 քահանայ, 7 եկ. սպասաւոր, 4164 արական, 3747 իգական, ընդամ. 7911 ծխկ., արականը շատ է իգականից 417 ու: Մի եկեղեցուն ընկնում է 1318 ծխական, մի քահանային 1130 ծխական: 6 եկեղեցին միասին ունին 20693 ը. 70 կ. դրամագլուխ, 5668 ը. 64 կ. մուտք, 4601 ը. 37 կ. ելք:

Թերեբեան քաղաքում—12 եկեղ., 19 քահ., 15 եկեղ. սպասաւոր, 5662 արական, 4840 իգական, ընդամ. 10502 ծխական. արականը իգականից շատ է 822 ու: Մի եկեղեցուն ընկնում է 875 ծխական, մի քահանային 553 ծխական: 12 եկեղեցին ունին միասին 213541 ը. 63 կ. դրամագլուխ: 21860 ը. մուտք, 20711 ը. 27 կ. ելք տարեկան:

Կուբանեան քաղաքում—6 եկեղեցի, 11 քահանայ, 9 եկեղ. սպաս., 4085 արակ., 3744 իգակ., ընդամ. 7829 ծխկ., արա-

կանը իգականից շատ է 341 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 1305 ծխակ., մի քահանային 713 ծխակ.: 6 եկեղեցին միասին ունին 62007 ռ. 12 կ. դրամագլուխ, 13941 ռ. 32 կ. մուտք, 15260 ռ. 32 կ. ելք:

Դադստանի երջանում—2 եկեղ., 2 քահանայ, 267 արակ., 288 իգական, ընդամենը 555 ծխական: Իգականը արականից շատ է 21 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 277 ծխակ., մի քահանային նոյնպէս: 2 եկեղեցին միասին ունին 3458 ռ. 39 կ. դրամագլ., 695 ռ. մուտք, 720 ռ. 80 կ. ելք:

Անդրկասպեան երկրում—4 եկեղեցի, 5 քահանայ, 4 եկեղ. սպասաւոր, 1826 արակ., 1700 իգակ., ընդամ. 3526 ծխական. արականը շատ է իգականից 136 ուլ: Մի եկեղեցուն ընկնում է 882 ծխական, մի քահանային 705 ծխական: 4 եկեղեցին միասին ունին 10121 ռ. 80 կ. դրամագլուխ, 2745 ռ. 85 կ. մուտք, 3301 ռ. 75 կ. ելք:

Քուրեստանի երջանում—1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպաս., 280 արական, 194 իգական, ընդամ. 474 ծխակ., արականը իգականից շատ է 86 ուլ: Մի եկեղեցուն և քահանային ընկնում է 474 ծխակ.: Եկեղեցին ունի 24 ռ. 18 կ. դրամագլուխ, 1112 ռ. մուտք, 1088 ռ. 17 կ. ելք:

Սարասովի նահանգում—1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպասաւոր, 103 արական, 98 իգական, ընդամ. 201 ծխակ., արականը իգականից շատ է 5 ուլ: Մի եկեղեցուն և քահանային ընկնում է 201 ծխական: Եկեղեցու դրամագլուխը, մուտքն ու ելքը չկայ:

Սիբիրիայում—1 եկեղեցի, 1 քահանայ, 158 արակ., 42 իգական, ընդամենը 200 ծխական, արականը իգականից շատ է 160 ուլ: Մի եկեղեցուն և քահանային ընկնում է 200 ծխակ.: Եկեղեցու մուտքն ու ելքը յայտնի չէ: *

Ուրեմն ամբողջ Աստարախանի թեմում կայ 39 եկեղ., 1 արքեպիսկոպոս, 57 քահանայ, 46 եկեղ. սպաս., 20397 արական, 18604 իգական, ընդամ. 39001 ծխական, որից 29622-ը քաղաքաբնակ, 9379-ը գիւղաբնակ: Մի եկեղեցուն ընկնում է մի-

*) Բաց է թողնուած Զերնամորեան շրջանը. ուր մօտ 6000 ծխական կայ:

Ջին Թուով 1003 ծխական, մի քահանային 686 ծխակ.։ 39 եկեղեցին ունին միասին 500456 ռ. 54 կ. դրամագլուխ, 70928 ռ. 97 կ. տարեկան մուտք, 77374 ռ. 29 կ. ելք։ Կայ 1 անկեւանոց, ուր պատասպարուում են 17 արական, 27 իգական, ընդամենը 44 ծխական։

Զ

ՆՈՐ-ՆԱՆԻՋԵՏԻԱՆԻ ՆԻ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄ

Բեսարաբիայի նահանգում—6 եկեղ., 1 արքեպիսկոպոս, 1 վարդապետ, 5 քահանայ, 6 եկեղ. սպաս., 661 արական, 783 իգական, ընդամ. 1444 ծխկ., իգականը շատ է արականից 122 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 241 ծխական, մի քահանային 289 ծխկ.։ 6 եկեղեցին միասին ունին 16215 ռ. 32 կ. դրամագլուխ, 4206 ռ. 97 կ. մուտք, 3203 ռ. 89 կ. ելք։

Խերսոնի նահանգում—3 եկեղ., 4 քահանայ, 3 եկեղ. սպասաւոր, 790 արական, 590 իգակ., ընդամ. 1370 ծխկ., արականը իգականից շատ է 190 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 457 ծխական, մի քահանային 342 ծխական։ 3 եկեղեցին միասին ունին 9735 ռ. 50 կ. դրամագլուխ, 2550 ռ. 75 կ. մուտք, 929 ռ. 88 կ. ելք։

Ս. Պեթերբուրգ մայրաքաղաքում—2 եկեղեցի, 1 վարդապետ, 2 քահանայ, 4 եկեղ. սպասաւոր, 386 արակ., 195 իգակ., ընդամ. 581 ծխական, արականը իգականից շատ է 191 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 290 ծխական, մի քահանային նոյնպէս։ 2 եկեղեցին միասին ունին 260242 ռ. 42 կ. դրամագլուխ, 117019 ռ. 59 կ. մուտք, 84451 ռ. 2 կ. ելք։

Մոսկուա մայրաքաղաքում—3 եկեղեցի, 2 քահանայ, 3 եկեղ. սպասաւոր, 442 արական, 327 իգական, ընդամենը 769 ծխկ., արականը շատ է իգականից 115 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 256 ծխակ., մի քահանային 384 ծխկ.։ 3 եկեղեցին միասին ունին 30821 ռ. 25 կ. դրամագլուխ, 17749 ռ. 82 կ. մուտք, 25358 ռ. 42 կ. ելք։ Կայ 1 անկեւանոց, ուր պատասպարուում են 1 արական, 17 իգական, ընդամենը 18 ծխական։

Դոնեան գօրաց քաղաքում—14 եկեղեցի, 1 վանք, 2 վարդապետ, 32 քահանայ, 32 եկեղ. սպաս., 4701 արակ., 4509 իգական, 9216 ծխական, արականը շատ է իգականից 192 ով։

Մի եկեղեցուն ընկնում է 658 ծխական, մի քահանային 257 ծխական: 14 եկեղ. միասին ունին 26451 ռ. 80 կ. դրամագլուխ, 32909 ռ. 17 կ. մուտք 24623 ռ. 15 կ. ելք: Վանքը ունի 167 ռ. 94 կ. դրամագլ., 4912 ռ. 19 կ. մուտք, 4744 ռ. 25 կ. ելք: Կայ 1 թեմական դպրանոց 289 աշակերտով և 17 ուսուցչով և 1 ան-կեղանոց, ուր պատասպարւում են 20 արական, 40 իգական, ընդամենը 60 ծխական:

Խարբովի նահանգում—1 վարդապետ, 1 եկեղ. սպաս., 120 արական, 95 իգական, ընդամենը 215 ծխկ., արականը իգականից շատ է 25 ով:

Տաւրիկեան նահանգում—14 եկեղ., 2 վանք, 1 վարդապետ, 10 քահանայ, 13 եկեղ. սպասաւոր, 1834 արակ., 1912 իգակ., ընդամ. 3746 ծխական, իգականը արականից շատ է 78 ով: Մի եկեղեցուն ընկնում է 268 ծխական, մի քահանային 375 ծխական: 14 եկեղեցին միասին ունին 4158 ռ. 80 կ. դրամա-գլուխ, 9078 ռ. 23 կ. մուտք, 7341 ռ. 19 կ. ելք: 2 վանքը միասին ունին 611 ռ. 56 կ. դրամագլուխ, 1350 ռ. 94 կ. մուտք, 1714 ռ. 62 կ. ելք:

Եկեաճաճնոսյաւեան նահանգում—1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպասաւոր, 200 արական, 125 իգական, ընդամ. 325 ծխական. արականը իգականից շատ է 75 ով: Մի եկեղեցուն և մի քահանային ընկնում է 325 ծխական: Եկեղեցին ունի 2584 ռ. 68 կ. դրամագլուխ, մուտքն ու ելքը յայտնի չէ:

Ըստ այսմ ամբողջ Նոր-Նախիջևանի և Բեհարաբիայի թե-մում կայ 43 եկեղեցի, 3 վանք, 1 արքեպիսկոպոս, 6 վարդա-պետ, 56 քահանայ, 63 եկեղ. սպասաւոր, 9124 արական, 8536 իգական, ընդամենը 17660 ծխական, որից 12904 ը քաղա-քաբնակ, 4756 ը գիւղաբնակ: Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 411 ծխական, 1 քահանային 315 ծխկ.: 43 եկեղեցին միասին ունին 350209 ռ. 77 կ. դրամագլուխ, 183514 ռ. 53 կ. տարեկտն մուտք, 145907 ռ. 55 կ. ելք: 3 վանքը միասին ունին 779 ռ. 50 կ. դրամագլ., 6263 ռ. 13 կ. մուտք, 6458 ռ. 87 կ. ելք: Կայ 1 թեմական դպրանոց 289 աշակերտով և 17 ուսուցչով. 2 անկեղանոց 21 արական, 57 իգական, ընդամենը 78 պա-տըռպարուածներով:

Սոյն տեղեկագրի համեմատ ամբողջ Ռուսաստանի 6 հայ-քաւաւորչական թեմում կայ 1327 եկեղեցի, 79 վանք, 7 եպիս-

կուպոն, 34 վարդապետ, 1547 քահանայ, 360 եկեղ. ոպտասու-
ւոր, 600483 արական, 530991 իգական, ընդամենը 1131474
ժխական, որից 217133 ը քաղաքաբնակ, 914331 ը գիւղաբնակ:

Միջին թուով մի եկեղեցուն ընկնում է 853 ժխական, մի
քահանային 731 ձխական:

1327 եկեղեցին միասին ունին 1522513 բ. 45 $\frac{1}{2}$ կ. գրա-
մագլուխ, 478472 բ. 71 $\frac{1}{2}$ կ. տարեկ. մուտք, 393636 բ. 35 կ.
տարեկան ելք:

79 վանքը միասին ունին 5746 բ. 61 կ. գրամագլուխ,
43762 բ. 96 $\frac{1}{2}$ կ. տարեկան մուտք, 45248 բ. 11 կ. տարեկան
ելք:

Ամբողջ Ռուսաստանում կայ 4 թեմական դպրանոց, 3
անկեկանոց:

Առանձին ուշադրութիւն դարձնելով ժխականների թուի
վրայ և այն համեմատելով այլ աղբիւրներից վերցրած թուերի
հետ՝ կարելի է եզրակացնել, որ տեղ տեղ տեղեկագրում ժխա-
կանների թիւը իրականից շատ է ցոյց տրուած, իսկ տեղ տեղ
ընդհակառակն սակաւ: Այոպէս օրինակ՝ տեղեկագրում նշա-
նակուած է Աղէքսանդրապօլ քաղաք—14773 արական, 13058
իգական, ընդամ. 27831 ժխական. այն ինչ բարձր. 8. Մատ-
թէոս վարդապետը իր 1600 թուին կազմած ցուցակում դնում
է նոյն տեղում 9227 արակ., 9229 իգական, ընդամենը 18456
ժխական: Տեղեկագրում Աղեքսանդրապօլի գիւղերի համար
նշանակուած է՝ 6 $\frac{1}{2}$ 514 արակ., 57331 իգական, ընդամենը 118845
ժխակ. իսկ վերոյիշեալ ցուցակում նոյն գիւղերի համար գրուած
է 57272 արակ., 51992 իգական., ընդամ. 109264 ժխական: Նոյն
գիւղերի համար բարեկ. Տէր Ներսէս քահ. Նիկողոսեանը (տե՛ս
Մուրճ Խ 8, 1904 թ.) դնում է 57342 արական, 52118 իգակ.,
ընդամ. 109,360 ժխական: Անշուշտ, սոյն թուերը նոյնպէս ան-
պայման ճիշդ համարել չէ կարելի, քանի որ կազմուած են
համարեա նոյն եղանակով, ինչպէ՛ս և մեր առաջ գրուած տե-
ղեկագիրը, և ստուգուած գիւղական դատարաններում գտնուած
ընտանեկան ցուցակներից, որոնք կազմուած են 1886 թուին:

Տեղեկագրում Շամախու թեմի ժխականների թիւը նշա-
նակուած է 22837 արական, 20206 իգական, ընդամ. 43043
ժխական, որից 700 ը Դաղստանի Նըջանի Դերբէնտ քաղաքում,
իսկ մնացած 42343 ը Բաղուայ նահանգում: Այն ինչ լ. Պ.

Ջագուրսկու դեռ ևս 1886-ին կազմած ցուցակով Բագու նահանգում կար մօտաւորապէս 55000 հայ լուսաւորչական: Ուստի և մեզ թւում է, որ այս թեմում ծխականների թիւը չափազանց պակաս է ցոյց տրուած:

Նոյնը պէտք է ասենք Աոտրախանի և մանաւանդ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի համար, ուր ծխականների թիւը ըստ տեղեկագրի է 9124 արակ., 8536 իգակ., ընդամ. 17660 ծխական, այն ինչ, եթէ չենք սխալւում, Պեր. Յուսիկեպիսկոպոսի դեռ ևս 1895 թուին կազմած ցուցակում ծխականների թիւը այդ թեմում անց էր կենում 25000-ից: Ափսոս որ այդ ցուցակը ձեռքի տակ չունինք:

Իսկ ինչ վերաբերւում է ամբողջ Ռուսաստանի հայ լուսաւորչական ծխականների ընդհանուր թուին, որ տեղեկագրում ցոյց է տրուած 600483 արական, 530991 իգական, ընդամ. 1131474 ծխական, պէտք է ասենք, որ այդ թիւը մեր կարծիքով իրականութեան մօտ է, յամենայն դէպս հաւանական է, որ իրականութիւնից աւելի սակաւ է ցոյց տրուած, քան թէ շատ: 1901 թւի «Кавказскій календарь»-ում տպուած է Լ. Պ. Ջագուրսկու 1886-ին կազմած ցուցակը, որից քաղում ենք համեմատութեան համար հետևեալ թուերը: 1886-ին կար Քիֆլիսի նահանգում 493610 հայ, Քութայիսի նահանգում 16399, Երևանի նահանգում 375700, Պանծակի նահանգում 258324, Բագուայ նահանգում 55459, Դաղստանի շրջանում 1054, Կարսի շրջանում 37094, Սև-ժովեան նահանգում 970, Ջաբաթալայի շրջանում 521, Քերեքեան շրջանում 13721, Կուբանեան շրջանում 13095, Ստաւրապօլի նահանգում 4709, ընդամենը 970656 հոգի ամբողջ Կովկասում: Սոյն թիւը վերաբերւում է բացի լուսաւորչականներից՝ նաև կաթոլիկ և բողոքական հայերին, որոնց թիւը 1886-ին կազմուած ընտանեկան ցուցակով էր մօտաւորապէս 31200, որը հանելով 970656-ից, միայն լուսաւորչական հայերի թիւը մնում է 939456: Իսկ 1900 թուի Ա. Բ. Պ. տեղեկագրի համեմատ լուսաւորչական հայերի (կաթոլիկ և բողոքական հայերը հաշուի առնուած չեն) թիւը ամբողջ Կովկասում 1900 թուին էր ընդամենը 1101710 հոգի (իսկ Կովկասից դուրս 29764 հ): Եթէ ի նկատի առնենք, որ 1886-ից մինչև 1900 թիւը տարեկան մօտաւորապէս $1\frac{1}{2}\%$ բազմանալով 939456-ը կարող էր դառնալ 1900-ին $939456 + 225000 = 1164456$, կտեսնենք, որ տեղեկագրում հայերի թիւը Կովկասում համեմատաբար աւելի քիչ է ցոյց տրուած: Կովկասից դուրս, Ռուս-

տառտանում, Բեսարաբիայի թեմում, նոյնպէս տեսանք, որ ծխականների թիւը պակաս է ցոյց տրուած: Բայց և այնպէս, ամբողջ Ռուսաստանում հայ ծխականների 1131474 թիւը ըստ մեզ իրականութիւնից շատ հեռու չէ: Ինչպէս տեսանք Ռուսաստանում մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 853 ծխկ., մի քահանային 781 ծխական. մեր կարծիքով սոյն թուերն էլ մօտաւորապէս համապատասխանում են իրականութեան: Սակայն, կասկած չկայ, որ կարծիքներով անհնար է թուեր ստուգել. ուստի և խնդրում ենք այն անձանց, որոնք հնարաւորութիւն ունին աւելի ոտոյգ աղբիւրներից որեւիցէ տեղեկութիւն տալու սոյն հետաքրքիր նիւթի մասին, չզլանան ասպարէզ դուրս գալ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱԻՈՐՉԱԿԱՆ, ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

Ա. Երեւանի թեմ.—Սոյն թեմի Հայոց եկեղեցիները ունին հետեւեալ անշարժ կալուածները—8 այգի, 4 պարտէզ, 1 բանջարանոց, մօտ 700 դ. վարելահող, 6 տուն, 1 բաղանիք և 24 կրպակ. (Աղէքսանդրապօլում գտնուած կալուածները հաշուի չէ առնուած):

Բ. Ղարաբաղի թեմ.—Ղզըլ-Ղչլախ, Այնաձոր և Բաղաջուր կալուածների կէտը (այս կալուածը նուիրել է Ս. Թառումեանը և գտնւում է Շարուր-Դարալագեազում), 1 պարտէզ 9 տուն, 21 կրպակ, 1 կտոր շինութեան համար դատարկ գետին:

Գ. Ճամախու թեմ.—176 դ. վարելահող, 1 բանջարանոց, 6 տուն, 1 քարվանսարա:

Դ. Աստախանի թեմ.—3 այգի, 3 պարտէզ, 47 տուն, 2 շտեմարան, 3 կտոր դատարկ գետին շինութեան համար:

Ե. Նոր Նախեջեւանի եւ Բեսարաբիայի թեմ.—3 այգի, 3 պարտէզ, 39 տուն, 16 կրպակ, 1 քարվանսարա:

Զ. Վրաստանի եւ Իմերեթի թեմ.—1) Ախալցխայի Ս. Փրկչ եկեղեցու կալուածը Ախալքալաքի գաւառում—Կարգախ, Խնաւէտ, Դատէշ և Սուլաա գիւղերը, իրանց աւերակներով, լեռներով, արօտատեղիներով և այլն. մօտ 19000 դ. տարածութեամբ:

2) Մօտ 100 դ. վարելահող, 1 այգի, 16 պարտէզ, 148 տուն, 1 քարվանսարա, 2 բաղանիք, 1 ջրաղաց, 132 կրպակ,

2 կրպակատեղի, 9 կտոր դատարկ գետին շինութեան համար և 1 կղզի Գուր գետում:

Վերայիշեալ բոլոր կալուածներէ եկամուտը եկեղեցիներէ ընդհանուր եկամուտի հետ միասին է ցոյց տրուած Ա. Բ. Գ. Գ. տեղեկագրում, այնպէս որ անհնար էր կալուածներէ յատուկ եկամուտը որոշել: Եկեղեցական տներէց մի մեծ մասը գործադրուած է եկեղեցական պիտոյքներէ համար և վարձ չէ բերում: Բոլոր եկեղեցիները միասին մօտ 20000 դ. հող ունին: Դժբախտաբար տեղեկագրի մէջ կալուածներէ չափի, տարածութեան և արժէքի մասին կարեւոր մանրամասնութիւնները պակասում են:

Ս. ԷՋՄԻԱՇՆԻ 1906 ԹՈՒԻ ՆԱԽԱՀԱՇԻԻԸ

Նախահաշիւ կազմելու սովորութիւնը չատ էլ հին չէ ս. Էջմիածնում: Առաջին տարիներում ելեմտից լիակատար նախահաշիւ չէր կազմուում սովորական ձևով, այլ միայն ծախսերի ցուցակը: Բայց վերջին տարիներս համեմատաբար աւելի կանոնաւոր կերպով է կազմուում նախահաշիւը գոնէ ըստ արտաքինին: Տարուայ վերջերին Վեհափառի կողմից նշանակուում է առաջիկայ տարուայ նախահաշիւ կազմելու համար մի յանձնաժողով, վանքի ներքին հաստատութիւնների—Վեհարանի, Վանական Կառավարութեան, Ճեմարանի և Տպարանի ներկայացուցիչների, այլև Սինոդի մի կամ երկու անդամների մասնակցութեամբ: Յանձնաժողովը ինկատի առնելով իւրաքանչիւր վարչութեան կողմից այլև Սինոդի կանցեւարիայից ստացուած ելեմտից տեղեկագրերը, կազմում է նախահաշիւ և ներկայադնում Վեհափառին, որը հաւանութիւն տուած դէպքում՝ առաջարկում է Սինոդին հաստատել նախահաշիւը:

Անշուշտ նախահաշիւը կարող է ճշդութեամբ նախատեսել ելեմուտքը միայն այն դէպքում երբ ճիշդ որոշուած են այն աղբիւրները, որոնց վրայ հիմնուում է: Թէև համարեա անհնար է սկզբից թուաբանական ստուգութեամբ որոշել ենթադրելի ելեմուտքը, սակայն ամէն մի նախահաշիւ կազմողի ձգտումը պէտք է լինի ենթադրելի և իրական թուերի տարբերութիւնը նուազագոյն չափի հասցնել: Իսկ այս հնարաւոր է միայն այն դէպքում՝ երբ կան վստահելի աղբիւրներ և այդ աղբիւրներից բարեխիղճ օգ-

տուողներու Այս տեսակէտից նայելով ս. էջմիածնում կազմուած նախահաշիւները առ այժմ կատարեալ լինելուց բաւական հեռու են: Փորձը ցոյց է տալիս, որ նախահաշիւները այնպիսի անկատար կերպով են կազմուած լինում, որ թէ նախահաշուով ղեկավարուող հաստատութիւնները և թէ նոյն իսկ նախահաշիւը հաստատող ատեանը ինքը ստիպուած է լինում «արտաքոյ նախահաշուի» վարուիլ:

1906 թուի նախահաշիւը թէ կազմութեան եղանակով և թէ այլ տեսակէտներով նախկին տարիների նախահաշիւներից աւելի կատարեալ համարել չի կարելի: Քանի տարին դեռ չէ վերջացել մենք հնարաւորութիւն չունինք նախատեսուած ելմուտքի յօդուածները համեմատել իրական ելմուտքի հետ: Բայց որովհետև 1906 թուի նախահաշուի հետ յարակից այստեղ ընդարձակ քաղուածներ ենք անելու նաև 1902 թուի, այն է կալուածները գրաւելու նախընթաց տարուայ, նախահաշուից և ելմտից մատեանից, ուստի և ընթերցողը կարող է մօտաւոր գաղափար կազմել ընդհանրապէս ս. էջմիածնի տարեկան նախահաշուով ենթադրելի և իրական ելմուտքի վրայ:

1906 թուի նախահաշիւը

Մ Ո Ւ Տ Ք

ա. Ուղղակի գանձաւաճի մուտք.—Այգիներից 2118 ու., Վաղարշապատի վանքապատկան կրպակներից 4478 ու., վերին ջրաղացից 600 ու. Վաղարշապատի վանքապատկան տներից 230 ու., վարելահողերից 7327 ու., արօտատեղիներից 750 ու., քարհանքից 400 ու., Մուղնի գիւղից 400 ու., Վաղարշապատի և Օշականի ծխահարկ 6200 ու., պատահական արդիւնք 1500 ու., Քիչնեի կալուածներից 21000 ու., Թիֆլիսի կալուածներից 12000 ու., Երևանի կալուածներից 4000 ու., Աղէքսանդրապօլի կալուածներից 4000 ու., թեմերից՝ վիճակային արդիւնք 35000 ու., դրամագլխի տոկոսիւք 16000 ու. վանքապատկան գիւղերից 15000 ու., անակնկալ արդիւնք 5000 ու., ընդամէնը 139003 ու.:

բ. Հեմարանի մուտք.—Աշակերտական թօշակ 1000 ու.:

գ. Տպաւաճի մուտք.—Արարատի բաժանորդագին 7000 ու., օրացոյցներից 2000 ու., չափաբերական մատեաններից 4000 ու., գրքերի տպագրութիւնից 1500 ու., զանազան բլանկների տպագրութիւնից 1500 ու., ընդամէնը 16000 ու.:

Ուրեմն 1906 թուին ընդհանուր մուտք նախատեսուում էր 156003 ռ.:

Ե Լ Ք

ա. Վանական կառավարութիւն. Վեհափառ Հայրապետի տրամադրութեան տակ դնելու համար 6000 ռ., միաբանների ունեւոր 17840 ռ., *) ժամոցադրամ 300 ռ., Մ. Տաճարի ծախք 922 ռ., կալուածների հարկ 3800 ռ., հիւրատան 472 ռ., Վան. կառավարութեան դիւանական ծախք 222 ռ., Վանակ. կառավարութեան քարտուղարի ունեւոր 540 ռ., սնունդ միաբանների (քացի հացից) 9788 ռ., ծառաների ունեւոր 2812 ռ., ագարկի ծախք 4500 ռ., այգիների ծախք 1723 ռ., մշակագործութեան 800 ռ. քանքաններու մաքրելու և նոր հորեր փորելու 600 ռ., դեղատան 424 ռ., նաւթի և վառելիքի 650 ռ., բաղանիքի ծախք 344 ռ., մատենադարանին 150 ռ., փոխտան և ցրաղաղի 1760 ռ., Սաղմոսավանքի վանահօր ունեւոր 120 ռ., մանր ծախք 2000 ռ., ընդամենը 55767 ռ.:

բ. Տպարան. Գործաւորների ունեւոր 3756 ռ., քարտուղարին 540 ռ., նաւթ և բէնզին 300 ռ., փայտ և ածուխ 250 ռ., դիւա-

*) Սինօղը Վեհափառ Հայրապետի հաւանութեամբ կարգադրել է ունեւորները բաշխել ըստ այսմ.— 1) Վեհափառի տրամադրութեան տակ դնել 6000 ռ. 2) Սինօղի անդամներին (եպիսկոպոս վարդապետ անխտիր), ընդհանրապէս եպիսկոպոս պաշտօնեաներին, ճեմարանի տեսուչ եւ Արարատի խմբադիր վարդապետներին 720 ռ. 3) անպաշտօն եպիսկոպոսներին, Վանական Կառավարութեան նախագահ, Տպարանի Տեսուչ եւ Մատենադարանապետ վարդապետներին 600 ռ. 4) Վանական Կառավարութեան եւ տպարանական ժողովի անդամ վարդապետներին 480 ռ. 5) Ագարակի Կառավարիչ, Հիւրընկալ, Մառանապետ, Շտեմարանապետ եւ Տնտես վարդապետներին 420 ռ. 6) անպաշտօն վարդապետներին եւ պաշտօնեայ սարկաւակներին 360 ռ. 7) անպաշտօն սարկաւակներին 240 ռ.:

Իսկ ճեմարանի տեսուչ եւ ուսուցիչ վարդապետները քացի վանքում ի շարս միաբանների ստացած իրանց ունեւորներից. ստանուում են նաեւ ճեմարանում աշխարհականների համար սահմանուած դասագինի կէտը՝ ըստ իրանց աւանդած դասերի, ճեմարանում աշխարհականների համար հետեւեալ դասագիններն են սահմանուած:—Նախակրթարանում 25 ռ. I—III դաս. 30 ռ. IV—VI դ. 75 ռ. խարանները 400 ռ.:

նական ծախք և նիւթերի ճանապարհածախք 500 ո., Արարատի փոստի ծախք 600 ո., լրագրների 120 ո., կազմատան ծախք 1200 ո., նորոգութեան և նոր գնուած իրերի 400 ո., տպագրելի գրքերի թղթի գին 3500 ո., Արարատի աշխատակիցների վարձատրութիւն 600 ո., մանր և անակնկալ ծախս 200 ո., ընդամէնը 11966 ո.:

գ. Վեհաւան. Դիւանական ծախք 450 ո., տնտեսական ծախք 1200 ո., ծառաների հանդերձագին 300 ո., վառելիքի, ածուխի և այլն 500 ո., գրագրի ոսճիկ 480 ո., ծառաների ոսճիկ 580 ո., ընդամէնը 3510 ո.:

դ. Ճեմարան. աշխարհական ուսուցիչների ոսճիկ 18825 ո., վարդապետ ուսուցիչների ոսճիկ 2651 ո., մատենադարանի հիմնական բաժնին 400 ո., մատենադարանի աշակերտական բաժնին 200 ո., դասագրքի 300 ո., դասական պիտոյքի 400 ո., ընագիտական պարագաների 400 ո., դասագրքերի և այլ գրքերի կազմ 250 ո., դասական և այլ կարասիների նորոգութեան 400 ո., վերակացունների ոսճիկ 2400 ո., քարտուղարին 600 ո., տնտեսին 400 ո., մատենադարանապետին 300 ո., դիւանական ծախք 150 ո., սպասաւորների և ծառաների ոսճիկ 1500 ո., ճեմարանի և միաբանութեան բժշկին 1800 ո., հիւանդապահին (Ֆէլդշէր) 240 ո., հիւանդանոցի ծառային 85 ո., հիւանդանոցի ծախք 150 ո., աշակերտների ամբարային և ձմերային վերնազգեստ 3200 ո., նոր վերարկուներ 1300 ո., ներքնազգեստ (գօտի, ֆէս, թաշկինակ և այլն) 2000 ո., կօշիկ, կրկնակօշիկ, կարկատան և գուլպայ 3300 ո., անկողին և սպիտակեղէն 325 ո., լուացք և կարկատան 700 ո., նոր ներքնարկների և մահճակալների 400 ո., թէյ և շաքար 2460 ո., սնունդ (բացի հացից) 9000 ո., սեղանատան սպասաւորների և խոհարարների ոսճիկ 960 ո., խոհանոցի և սեղանատան զանազան անօթների և պարագաների 400 ո., խոհանոցի վառելիքի, լուացատան և թէյի(*) 1000 ո., տարեկան հանդէսի, տօնի և զբօսանքի 300 ո., վարսավիրայ, սանր, սապոն և այլն 230 ո., բաղանիք 100 ո., նաւթ, բէնզին և մոմ 550 ո., բենզինի լամպեր, ապակիներ և այլ պարագաներ 100 ո., փայտ և ածուխ 800 ո., յատակների մաքրութեան 80 ո., յատակները, պատերը, դռները, լուսամուտները և այլն ներկելու 1000 ո., շինութեան արտաքին կարկատան 150 ո., պարտէզի մաքրութեան և մշակագործութեան 250 ո., իւռատի ոսճիկ 144 ո., անակնկալ և մանր ծախքեր 300 ո., աշակերտական լուացարանի նորոգութեան 100 ո., կենսաթոշակ Ս. Մանդինեանի 500 ո., ընդամէնը 56100 ո.:

Իսկ բոլոր վանական վարչութիւնների ընդհանուր ելքի գումարն է 127343 ո., որը հանելով 156003 ո. մուտքից՝ տարուաբ

վերջը ըստ նախահաշուի սպասուում է մնացորդ 28660 ռ.:

Ստեփան այս մնացորդի մասին խօսք անգամ չի կարող լինել, քանի որ մինչև այժմ, այսինքն տարուայ կէտը, Սինոզը ստիպուած է եղել մի քանի հազար «արտաքոյ նախահաշուի» բաց թողնել: Հաւանականն այն է, որ այս տարին էլ միւս տարիների նման մի քանի հազար բացով կվերջանայ: Այլապէս լինել էլ չի կարող, քանի որ նախահաշիւը կազմուած չի եղել ստոյգ հիմունքների վրայ:

Այժմ այստեղ համեմատութեան համար դնենք 1902 թուին, այն է կալուածները գրաւելու նախընթաց տարին, Մայր Աթոռի ունեցած իսկական մուտքը, յարակցելով, որ ներկայումս ձեռքի տակ չունինք 1902-ի նախահաշուի մուտքի մասը, ուստի և անկարող ենք ասել թէ ինչ մուտք էր նախատեսուած:

1902-ի մուտք. Մայր Աթոռի տպարանում տպուած գրքերից 14188 ռ. 65 կ., զանազան ուխտատեղիներից 6525 ռ., յանուն Խ. Էջմիածնի Հայոց եկեղեցիներում հաւաքուած գանձանակադրամ 1403 ռ. 23 կ., միանուագ նուիրադրամներից 942 ռ. 50 կ., կտակներից 7828 ռ., վիճակային արդիւնք 26063 ռ. 23 կ., Մայր Տաճարի Թանգարանի այցելուներից 676 ռ. 17 կ., Տաճարի մոմից 299 ռ., արժէթղթերի 0/0-ից 14683 ռ. 77 կ., պատահական մուտք 11522 ռ. 86 կ., անշարժ կալուածներից 58910 ռ. 5 կ., մի արժէթուղթ 100 ռ., գրաւուած գրաւական 450 ռ., Վաղարշապատի այգէհարկ և ծխահարկ 2381 ռ. 42 կ., վանքի ագարակի անասնեղէնի վաճառումից 1974 ռ. 76 կ., գինու տրտից 79 ռ. 50 կ., ճեմարանի աշակերտների թոշակադրամ 2600 ռ., նպաստադրամ յանուն ճեմարանի 6507 ռ. 29 կ., վանքի շտեմարանից վաճառուած ցորենից 13623 ռ. 15 կ., վաճառուած հանդերձներից, պղնձի և երկաթի ամաններից և մի կիսամաշ կաթսայից 115 ռ. 20 կ., Եօթնվիրաց պատկերից 489 ռ. 10 կ., «դարբանից» 330 ռ. 21 կ., ընդամէնը 171688 ռ. 38 կ.:

Բայց ի նկատի ունենալով, որ այս մուտքից 7828 ռ. կտակադրամ է, պատահական մուտքից 10000 ռ. Ախալցխայի Խ. Փրկիչ եկեղեցու գումարն է՝ փոխարինաբար բերուած, 1974 ռ. 76 կ. անասնեղէնի գին է, 6507 ռ. 29 կ. ճեմարանի 25—ամեայ յօբելեանի առթիւ հաւաքուած գումարն է, իսկ 13623 ռ. 15 կ. վաճառուած ցորենի գին է, ուրեմն ընդամէնը 39933 ռ. 20 կ. արտակարգ մուտք է, ուստի և 1902-ի սովորական մուտքը պէտք է համարել 131755 ռ. 18 կ.:

Հետաքրքիր է մանրամասնաբար առաջ բերել նաև նոյն 1902-ի իսկական ելքը իւրաքանչիւր յօդուածի դիմաց փակագծում նշա-

նակելով նոյն յօդուածի համար նախահաշուով նախատեսուած գումարը կամ եթէ չէ նախատեսուած, գրելով «նախահաշուած չկայ», այլև առանձին յիշելով այն յօդուածները, որ նախահաշուած կան, բայց իսկական ելքի մէջ չկան:

1902-ի ելՔԸ.

ա. Վանական Կառավարութիւն. *անունդ միաբանութեան և աշակերտների**) 16830 ո. 71 կ. (նախ. 12000 ո.), *միանուագ նպաստ և ճանապարհածախս միաբաններին և սուրհանդակներին* 1146 ո. 6 կ. (նախ. չկայ), *հիւրատան* 200 ո. 71 կ. (200 ո.), *երկաթագործի և այլ վարպետների* 417 ո. 85 կ. (նախ. չկայ), *նաւթ* 1456 ո. 44 կ. (նախ. չկայ), *կալուածների հարկ* 3791 ո. 49 կ. (3600), *միաբանների հանդերձ* 184 ո. 14 կ. (նախ. չկայ), *Շահարխի և այլ վերանորոգութիւնների* 268 ո. 84 կ. (266 ո.), *ջրաղացի, դնկի վերանորոգութեան և այլ ծախսեր* 1128 ո. 57 կ. (200 ո.), *դիւանական ծախք Վանական Կառավարութեան* 43 ո. 23 կ. (150 ո.), *Սինօդի հեռագրների և դրամաւոր ծրարների ծախք* 56 ո. 82 կ. (նախ. չկայ), *տաճարի, խնկի, մոմի, կնդրուկի և այլն* 1200 ո. (700 ո.), *դեղատուն, դեղագործ, պատահական բժիշկ* 716 ո. 99 կ. (750 ո.), *ագարակ* 7494 ո. 60 կ. (6800 ո.), *Ամբերդի համար* 96 ո. 43 կ. (նախ. չկայ), *պահապանի, սուրհանդակի, սայլապանի, մշակի և մշակագործութեան* 3371 ո. 77 կ. (1200 ո.), *հանդերձագին սուրհանդակների և շատիրների* 314 ո. 38 կ. (նախ. չկայ), *Վան. Կառավարութեան քարտուղարին* 399 ո. 96 կ. (400 ո.), *ռօճիկ սեպական և պատահական փաստաբանների* 1834 ո. 45 կ. (1000 ո.), *դատաստանական ծախք* 32 ո. 50 կ. (նախ. չկայ), *ժամոցադրամ* 269 ո. (300 ո.), *երկրաչափի* 55 ո. 66 կ. (նախ. չկայ), *շտեմարանի վարձ* 15 ո. (նախ. չկայ), *գինէտան* 30 ո. 53 կ. (նախ. չկայ), *տպարանի ծախս* 403 ո. 38 կ. (նախ. չկայ), *Աստուածաշունչ համեմատողներին* 320 ո. (նախ. չկայ), *ցորեն աղալու* 57 ո. (նախ. չկայ), *ցէմէնտ, աւազ, կիր և այլն* 175 ո. 50 կ. (նախ. չկայ), *Հաղարծին վանքին* 160 ո. 25 կ. (նախ. չկայ), *Բջինի գիւղի համար ծախս* 423 ո. 80 կ. (540 ո.), *Իււրականի համար ծախսուած* 17 ո. 20 կ. (նախ. չկայ), *ապրանքի փոխադրութեան վարձ* 1736 ո. 31 կ. (200 ո.), *Սազմոսավանքի վանահօր ռօճիկ* 70 ո. (նախ. չկայ), *գաղթականներին* 202 ո. 52 կ. (նախ. չկայ), *մաքրութեան ար-*

*) Այդ տարին վաւերի եւ օճաւանի սեղանը ընդհանուր էր:

տաքնոցների 45 ո. (նախ. չկայ), Գայիանէ վանքին 173 ո. 45 կ. (նախ. չկայ), Շողակաթ վանքին վերադարձրած 270 ո. (նախ. չկայ), Ժառանների ոսճիկ 8426 ո. 18 կ. (7771 ո.), Վաղարշապատի և Օշականի հարկաժողովներին ոսճիկ 602 ո. 20 կ. (500 ո.), գին ցուցահանդէսից ստացուած մեդալի 25 ո. 34 կ. (նախ. չկայ), գործիքներ, չիշ, աւել և այլն 1565 ո. 72 կ. (700 ո.), նստարական ծախք 59 ո. 86 կ. (նախ. չկայ), ողորմութիւն Վեհափառի հրամանով 124 ո. 15 կ. (նախ. չկայ), սև ջրին 7 ո. (նախ. չկայ), յորդանան չինելու 9 ո. 60 կ. (ն. չկայ), մատենադարան 3 ո. (200 ո.), մակարդակ 25 ո. (ն. չկայ), լուսաւորութեան զանազան պարագաներ 79 ո. 60 կ. (ն. չկայ), տուգանադրամ 6 ո. (ն. չկայ), կաստոր ի պէտս անդամոց Վ. Կառավարութեան 66 ո. (նախ. չկայ):

Նախահաշուի մէջ առանձին յօդուածներով կան նաև 1) ոսճիկ միաբանների 11600 ո., որը յետոյ Սինօզի դանձապահը բաժանելով մտցրել է աթոռային մատենանի մէջ:

2) Վանքանների մաքրութեան ծախք 200 ո., որը ելից մատենադրամ առանձին ելք չէ ցոյց տրուած:

3) Մանր ծախք 1000 ո. որը վերոյիշեալ մի քանի յօդուածներով ցոյց տրուած մանր ծախքերի գումարն է:

4) Դարաւակեազի ս. Խաչի ջուրը բերելու համար 2000 ո., որը նոյնպէս Սինօզի ձեռքով է ծախսուած:

Այնպէս որ Վանական կառավարութիւնը ըստ նախահաշուի պէտք է ծախսէր 52277 ո., կամ աւելի ճիշտ միաբանների ոսճիկը և ս. Խաչի ջրի փողը դուրս հանելով՝ պէտք է ծախսէր 38627 ո., այն ինչ իսկապէս ծախսել է 56551 ո. 32 կ., այսինքն նախահաշուից 18124 ո. 32 կ. աւելի: Բացի սրանից մի յօդուածի համար յատկացրուած գումարից ըստ յարմարագատութեան ծախսել է մի այլ յօդուածի վրայ:

Բ. Վեհափառ. Վեհի տրամադրութեան տակ դրուած, վեհարանի տնտեսութեան, պաշտօնեաների, դիւանի և այլն համար ծախսուած է ընդամէնը 10428 ո. 71 կ. (8120 ո.)

Ուրեմն նախահաշուից 2808 ո. 71 կ. աւելի:

Գ. Զեմարան. Ուսուցիչների և պաշտօնեաների ոսճիկ 23769 ո. 16 կ. (19100 ո.), զանազան վարպետների 567 ո. 35 կ. (նախ. չկայ), հիւանդանոցի 1362 ո. 18 կ. (280 ո. նախատեսուած էր հիւանդանոցի ծախքի համար, իսկ մնացեալը՝ որ գործադրուել է հիւանդանոցի նոր շինութեան համար, նախատեսուած չէր): Դիւանական ծախք 55 ո. 77 կ. (150 ո.), նաւթ 94 ո. 96 կ. (600 ո.), ծառաների ոսճիկ 517 ո. 42 կ. [(1800 ո.) մնացածը հաշուած է պաշտօնեաների ոսճիկի հետ], ածուխ 41 ո. 50 կ. (50 ո.), հան-

դերձեղէն, լուաքք և կարկատան 3764 ո. 84 կ. (5600 ո.), զանա-
զան իրեղէններ 1647 ո. 69 կ. (նախ. չկայ), թէյ և չաքար 1930 ո.
45 կ. (1800 ո.), առանձնապէս ծախսուած աշակերտների սննդեան
վրայ 115 ո. 44 կ. (նախ. չկայ), կօշիկ և կրկնակօշիկ 3296 ո.
70 կ. (300 ո.), գիրք, տետրակ և հիմնական մատենադարան 271 ո.
41 կ. (300 ո.), անօթ, կարասի 162 ո. 87 կ. (550 ո.), մաքրու-
թիւն արտաքնոցների 80 ո. (նախ. չկայ), մշակագործութիւն 154 ո.
20 կ. (նախ. չկայ), վառելիք 980 ո. (800 ո.), տնտեսին և աշա-
կերտներին ճանապարհածախս և մանր ծախք 213 ո. 83 կ. (500 ո.),
ընդամէնը 39030 ո. 37 կ.:

Բացի սրանից նախահաշուով կան հետեւեալ յօդուածները՝
մոմ, լամպ, պատրոյկ—130 ո., մատենադարանին 200 ո., կազմի
200 ո., բնագիտական պարագայ 300 ո., դասական պիտոյք 460 ո.,
պահարան մատենադարանի համար 200 ո., վարսավիրայ և այլն
100 ո., մաքրութեան և կարկատանաց 480 ո., անակնկալ ծախք
200 ո., թոշակ Ս. Մանդինեանի 500 ո., վարդապետ ուսուցիչներին
2600 ո.: Սոյն յօդուածներում յատկապէս յիշուած գումարներից
վարդապետ ուսուցիչների ոսճիկը երևի պաշտօնեաների ոսճիկի հետ
միասին է հաշուած, Ս. Մանդինեանը իր թօշակը ստացել է թերեւս
ուղղակի Սինօդի գանձապահից, իսկ մնացեալ յօդուածներում
յիշուած գումարները մասամբ ծախսուել են նախահաշուով չնա-
խատեսուած առարկաների վրայ և մասամբ ներկայացնում են
տարուայ վերջի մնացորդը:

Նախահաշուով սահմանուած էր ձեմարանի ծախս ընդամէնը
39900 ո., բայց ծախսուած է 39030 ո. 37 կ., ուստիև մնացորդ
եղել է 869 ո. 63 կ.:

դ. Տպարան. Որովհետև տպարանը մասամբ արդիւնաբերական
հաստատութիւն է, ուստիև նրա ծախսի մանրամասն յօդուածները
առաջ ընբելը աւելորդ եւք համարում, միայն նկատենք, որ նա-
խահաշուով եւք նշանակուած եր 15600 ո. 50 կ., այն ինչ իս-
կական եւք եղել է 12248 ո. 1 կ., այսինքն նախատեսուածից
3352 ո. 49 կ. պակաս:

1902-ի նախահաշուով վան. կառավարութիւնը պէպք է ծախ-
սէր 38627 ո., ձեմարանը—39900 ո., վեհարանը 8120 ո. Տպա-
րանը 15600 ո. 50 կ., ընդամէնը 102247 ո. 50 կ.: Այն ինչ վան.
կառավարութիւնը ծախսել է 56551 ո. 32 կ., ձեմարանը 39030 ո.
37 կ., վեհարանը 10428 ո. 71 կ., Տպարանը 12248 ո. 1 կ., ըն-
դամէնը 118258 ո. 41 կ., այսինքն նախահաշուից 16010 ո. 91 կ.
աւելի:

Մի կողմ թողնելով Տպարանը, կաեսնեւք, որ վ. կառավարու-

թիւնը, Վեհարանը և ճեմարանը ծախսել են ընդամենը 106010 ռ. 48 կ.: Սրա վրայ պէտք է աւելացնել մօտ 14000 ռ. գործածուած ցորենի, իւղի և պանրի գին, որոնք ստացուում են բնական բերքով և նախահաշուի մէջ չեն մտած, այլև միաբանութեան 11600 ռ. ոօճիկը, որը տրուած է Սինօդից, այն ժամանակ կլոր թուով տարեկան ծախս կստանանք 131600 ռ.:

Իսկ 1906-ի նախահաշուով նոյն ծախքը ենթադրուում է 129500 ռ. մօտաւորապէս:

Ինչպէս տեսանք՝ 1902-ի սովորական մուտքն էր 131755 ռ. 18 կ.: 1906-ի մուտքի մասին դեռ ոչինչ չի կարելի ասել:

Վերոյիշեալ երկու տարիների ելումտից յօդուածների սոյն համեմատական թուերը մէջ բերելով, մենք շօշափեցինք միայն խնդրի արտաքին, մեքենայական կողմը, իսկ ինչ վերաբերում է թուերի բովանդակութեան և ներքին իմաստին, այլ խօսքերով՝ թուերի լեզուին, դրա մասին մի այլ անգամ:

Մ. Աթոռի տարեկան միջին մուտք 1897, 1898, 1899, 1900 եւ 1901 թուերի նկատմէայ օրհանում:

Կալուածներից 43897 ռ. 14 կ., ուխտատեղիներից 4078 ռ. 38 կ., յանուն ճեմարանի նուէրներից և աշակերտական թոշակադրամներից 10617 ռ. 52 կ., յանուն Մ. Աթոռի կտակներից և նուէրներից 1076 ռ. 71 կ., զանազան իրերի վաճառումից 6372 ռ. 76 կ., Մ. Տաճարի արդիւնք 1245 ռ. 33 կ., շուկայի մաքրութեան համար ստացուած տուրք 432 ռ. 16 կ., վախճանուած կուսակրօն հոգևորականներից մնացած դրամ 4023 ռ. 89 կ., Աղեքսանդրապօլի Եօթնվիրաց պատկերից 775 ռ. 2 կ., Վազարչապատի ծխահարկ և այգեհարկ 2346 ռ. 26 կ., Օշականի ծխահարկ և այգեհարկ 2259 ռ. 36 կ., Եղուարդայ և Մաստարայի ծխահարկ և այգեհարկ 106 ռ. 68 կ., Մ. Աթոռում տպուած օրացոյցներից 2255 ռ. 95 կ., չափաբերական և այլ մատենաններից 3876 ռ. 6 կ., Արարատ ամսագրի բաժանորդագին 5263 ռ. 6 կ., գրքերի վաճառումից 5859 ռ. 90 կ., տուգանադրամ 68 ռ. 20 կ., պսակադրամ, հոգեբաժին և առհասարակ վիճակային արգիւնք 16969 ռ. 10 կ., պտղի 1267 ռ. 49 կ., դարբաս 367 ռ. 64 կ., զանձանակադրամ 2479 ռ. 55 կ., արժէթղթերի 0/0—16000 ռ. (մօտաւորապէս), ընդամենը 131638 ռ. 16 կ.:

Հարկաւոր ենք համարում աւելացնել, որ սոյն 131638 ռ. 16 կ.-ը խիստ քիչ մուտքն է: Այս հաշուի մէջ չեն մտած հետեւեալ ձևական

մուտքերը—նոր գնուած արժէթղթերը, կուսակրօն հոգևորականներից յետ ստացուած փոխարինաբար տրուած գումարները, կուսակրօնների ոսճիկներից աւելացածը և տարուայ վերջին վանքի ներքին վարչութիւններից վերադարձրած աւելացած գումարները: Ի նկատի չէ առնուած նաև բնական բերքով վանքապատկան գիւղերից ստացուած հասոյթները:

Վիճակային եւ օտարային արդիւնք

Վիճակային արդիւնք կոչուում է այն կամաւոր տուրքը, որը պատկադրամ, հոգեւածին և այլ անուններով ստացւում է ծխականներից թեմական հաստատութիւնների և Մ. Աթոռի պահպանութեան համար: Վիճակային Կոնսիստորիաները և Հ. Կառավարութիւնները այդ դրամից են վճարում թեմական առաջնորդների, փոխանորդների և առհասարակ թեմական հաստատութիւնների մէջ ծառայողների ուժիկները և կանցեւարիական ծախքը: Կոնսիստորիաները վիճակային արդիւնքը գրում են «վիճակային արդեանց» մատեանի մէջ: Բացի վիճակային արդիւնքից Կոնսիստորիաները գանձում են նաև «օտարային» կոչուող արդիւնքները—Մ. Աթոռի տպարանի գրքերի գինը, աթոռապատկան գանձանակադրամը, կուրաց և զեմօ-աւչալեան ապաստարանի գանձանակները և առհասարակ այնպիսի կողմնակի եկամուտները, որոնք մտնում են որպէս աւանդ: Այս աւանդներից մի մասը—գրքերի գին, աթոռապատկան գանձանակադրամ և այլն, որոնք Մ. Աթոռի հասոյթներ են, թէև Կոնսիստորիաների համար «օտարային» են, բայց հասնելով Մ. Աթոռ մտնում են աթոռային մատեանի մէջ, իսկ մնացեալ գումարները—կուրաց և զեմօ-աւչալեան գանձանակները և այլն—որոնք կողմնակի հաստատութիւններին են պատկանում, Սինծղը մտցնում է աւանդադրամոց մատեանի մէջ և ուղարկում ըստ պատկանելոյն: Կոնսիստորիաները օտարային արդիւնքները պէտք է գրեն «օտարային արդեանց» մատեանի մէջ:

Որպէսզի ընթերցողը գաղափար կազմի վերոյիշեալ արդիւնքների մասին և թէ այդ արդիւնքներից ինչ է հասնում Մ. Աթոռին, այստեղ մտադիր էինք առաջ բերել վիճակային Կոնսիստորիաների 1902-ի ելմուտքը, բայց որովհետև տոյն յօդուածը գրելիս Սինծղում չկարողացանք գտնել Շամախու Կոնսիստորիայի 1902-ի մատեանները և Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիայի

1902-ի և 1901-ի մատենաները, ուստի ամբողջութեան և համեմատութեան համար բարեղք համարեցինք նշանակել Շամախու Կոնսիստորիայի 1901-ի ելեմուտքը, Ն. Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիայի 1900-ի ելեմուտքը, իսկ մնացեալ Կոնսիստորիաների 1902-ի ելեմուտքը: Յատկապէս 1902-ի հաշիւը ցանկացանք տալ, ի նկատի ունենալով սոյն յօդուածի կապը նախընթացի հետ:

ա. Երեւանի Հայոց Վիճ. Կոնսիստորիան 1902-ին վիճակային և օտարային արդիւնքը խառն գրել է մի մատենանի մէջ: Տարեկան մուտք եղել է 38912 ռ. և ելք նոյնքան: Բայց սոյն գումարից 7244 ռ. 98 կ.-ը Մ. Աթոռի կալուածների արդիւնքն է՝ Կոնսիստորիայի միջոցով ժողովուած և ուղարկուած Մ. Աթոռին, այնպէս որ իսկական մուտքն և ելքն է 31697 ռ. 2 կ., որից Մ. Աթոռին է ուղարկուած 31581 ռ. 83 կ.: Նաև պէտք է գիտենալ, որ սոյն գումարից նախահաշիւով Կոնսիստորիան Մ. Աթոռից յետ է ստացել իր ծախսերի և փոխ-թեմակալի ոսճկի համար 6904 ռ., ուրեմն Մ. Աթոռը ստացել է Կոնսիստորիայից վիճակային և օտարային արդիւնք 24677 ռ. 83 կ.:

բ. Վրաստանի եւ Իմերեթի Վիճ. Կոնսիստորիան 1902-ին նոյնպէս վիճակային և օտարային արդիւնքը մի մատենանի մէջ է գրել: Մուտք եղել է 18384 ռ. 87 կ., ելք նոյնքան: Սոյն ելքից Մ. Աթոռին է ուղարկուել 5 ռ.:

գ. Ղարաբաղի Վիճ. Կոնսիստորիան 1902-ին ունեցել է 1) վիճակային արդիւնք—1901-ից մնացորդ 2221 ռ. 39 կ., տարեկան մուտք 6747 ռ. 36 կ., ընդամէնը 8968 ռ. 75 կ., իսկ ելք 6876 ռ. 27 կ.: Տարուայ վերջը մնացորդ մնացել է 2092 ռ. 48 կ.: Մ. Աթոռին ոչինչ չէ ուղարկուած: 2) Օտարային արդիւնք—մնացորդ 1901-ից չկայ, տարեկան մուտք 1377 ռ. 96 կ., ելք նոյնքան, որից 1326 ռ. 99 կ. ուղարկուած է Մ. Աթոռին:

դ. Շամախու Վիճ. Կոնսիստորիան 1901-ին ունեցել է 1) վիճակային արդիւնք—1900-ից մնացորդ 1339 ռ. 31 կ., տարեկան մուտք 5920 ռ. 40 կ., ընդամէնը 7259 ռ. 71 կ., ելք 6664 ռ. 86 կ.: Տարուայ վերջը մնացորդ է մնացել 594 ռ. 85 կ.: 6664 ռ. 86 կ. ելքից Մ. Աթոռին է ուղարկուել 3389 ռ. (որից 2000 ռ. հանգստեցեալ առաջնորդի ոսճիկը): 2) օտարային արդիւնք—մնացորդ 1900-ից 11255 ռ. 86 կ. (թեմակ. ուսում., ինչմազի ուսումնար. Ղալազէի եկեղ. և այլն գումարներն են), տարեկան մուտք 826 ռ. 49 կ., ընդամէնը 12082 ռ. 35 կ., իսկ ելք 777 ռ. 15 կ.: Տարուայ վերջը մնացորդ է եղել 11305 ռ. 20 կ.: Վերոյիշեալ 777 ռ. 15 կ. ելքից Մ. Աթոռին է ուղարկուել 512 ռ. 62 կ.:

Ե. ԱՍՏՐԱԽԱՆԻ ՎԻՃ. ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՆ 1902-ին ունեցել է 1) վիճակային արդիւնք—մնացորդ 1901-ից 2604 ռ. 63 կ., տարեկան մուտք 5726 ռ. 11 կ., ընդամենը 8330 ռ. 74 կ., ելք 5566 ռ. 40 կ., տարուայ վերջը մնացել է 2764 ռ. 25 կ.: Մ. Աթոռին փող չէ ուղարկուած: 2) օտարային արդիւնք—մնացորդ 1901-ից 736 ռ. 94 կ., տարեկան մուտք 2780 ռ. 21 կ., ընդամենը 3517 ռ. 15 կ., ելք 1519 ռ. 38 կ., որից Մ. Աթոռին է ուղարկուած 573 ռ. 17 կ.: Տարուայ վերջը մնում էր 1997 ռ. 77 կ.:

Գ. ՆՈՐ ՆԱԽԻԶԵԼԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՆ 1900-ին վիճակային և օտարային արդիւնքները միասին գրել է մի մատեանում: Այդ երկու տեսակ արդիւնքների ընդհանուր մուտքը նախընթաց տարուայ մնացորդի հետ եղել է 10946 ռ. 20 կ., իսկ ելքը 10469 ռ. 14 կ.: Տարուայ վերջը մնացորդ կար՝ 477 ռ. 6 կ.: Վերոյիշեալ 10469 ռ. 14 կ. ելքից Մ. Աթոռին ուղարկուել է 152 ռ.:

Հարկաւոր է նկատել, որ թէև տարբեր տարիներում բայց միամիայ չըջանում՝ վեց Կոնսիստորիան վիճակային և օտարային մուտք ունեցել է ընդամենը 100809 ռ. 73 կ., կամ դուրս գալով՝ չալուածների մուտքը՝ 93564 ռ. 75 կ.: Սոյն 93564 ռ. 75 կ.-ից Մ. Աթոռ է ուղարկուել 30586 ռ. 92 կ.: Այս 30586 ռ. 92 կ.-ից 26063 ռ. 23 կ. վիճակային արդիւնք է և 4523 ռ. 69 կ. օտարային արդիւնք, որից 4240 ռ. 90 կ. աթոռահաս, 282 ռ. 79 կ. օտարահաս աւանդ: Ուրեմն Մ. Աթոռը միամիայ չըջանում Կոնսիստորիաներից հասոյթ է ստացել ընդամենը 30304 ռ. 13 կ.:

Մ. Աթոռին ամենից չափ արդիւնք ուղարկում է Երևանի Կոնսիստորիան և համեմատաբար Շամախու Կոնսիստորիան, իսկ մնացեալ Կոնսիստորիաները չնչին արդիւնք են տալիս: Որովհետև թեմական հաստատութիւնները վիճակային արդիւնքով նախ հոգում են իրանց ծախքերը և մնացորդը միայն ուղարկում Մ. Աթոռին, ուստի և Սինօդը որոշ չափով կազմելով՝ չափ ու սահմանի մէջ է դրել այդ ծախսերը: Մենք այժմ ձեռքի տակ չունինք այդ շտառը, սակայն գիտենք, որ այդ շտառը հնացել է և նրանով համարեա թէ չեն ղեկավարուում այժմ: Վերջերում Սինօդը թեմական հաստատութիւնների ծախքերի համար մի նոր ցուցակ էր կազմել, բայց այդ ցուցակը՝ կարծեմ՝ անդործադրելի մնաց, գուցէ չհամապատասխանելով ներկայի իրական պահանջներին: Այնուամենայնիւ որոշ գաղափար տալու համար՝ աւելորդ չենք համարում քաղուածօրէն առաջ բերել թեմական հաստատութիւնների ծախքերի այդ ցուցակը:

Ա. Երևանի թեմ. Երևանի Վիճ. Կոնսիստորիային և փոխ. թեմակալին 7649 ռ., Աղեքսանդրապօլի Հ. Կառավարութեան և

փոխանորդին 2408 ռ., Կարսի Հ. Կառավարութեան և փոխանորդին 1828 ռ., Հին-Նախիջևանի Հ. Կառավարութեան և փոխանորդին 1828 ռ., Տաթևի Հ. Կառավարութեան և փոխանորդին 1868 ռ., Տաթևի Վանական տնտեսութեան 540 ռ., Նոր-Բայազիտի գործակալութեան 910 ռ., ընդամենը Երևանի թեմին 17031 ռ.: բ. Վրաստանի եւ Խմեդեթի թեմ. Վիճակային Կոնսիստորիային և թեմական առաջնորդին 8559 ռ., Գանձակի Հ. Կառավարութեան և փոխանորդին 2028 ռ., Գորիի Հ. Կառավարութեան և փոխանորդին 1828 ռ., Ախալցխայի Հ. Կառավարութեան և փոխանորդին 1828 ռ., Ախալքալաքի գործակալութեան 910 ռ., ընդամենը Վրաստանի և Իմէրէթի ամբողջ թեմին 15153 ռ.: գ. Ղարաբաղի թեմ. Վիճակային Կոնսիստորիային և թեմ. առաջնորդին 5959 ռ., Նուխիի Հ. Կառավարութեան և փոխանորդին 1828 ռ., ընդամենը Ղարաբաղի ամբողջ թեմին 7787 ռ.: դ. Շամախու թեմ. Վիճակային Կոնսիստորիային և թեմ. առաջնորդին 5719 ռ.: ե. Նոր Նախիջևանի եւ Բեռաբաբայի թեմ. Վիճ. Կոնսիստորիային և թեմ. առաջնորդին 5701 ռ. 64 կ., Նոր Նախիջևանի Հ. Կառավարութեան և փոխանորդին 1828 ռ., ընդամենը ամբողջ թեմին 7529 ռ. 64 կ.: զ. Աստախսանի թեմ. Վիճակային Կոնսիստորիային և թեմական առաջնորդին 5519 ռ., Ղզլարի Հ. Կառավարութեան և փոխանորդին 1588 ռ., ընդամենը ամբողջ թեմին 7107 ռ.:

Ուրեմն Ռուսահայոց բոլոր թեմական հաստատութիւնները համար այս ցուցակով նշանակուած էր ընդամենը 60326 ռ. 64 կ. տարեկան ծախք:

Ծ. Աթոռի դրամագլուխը եւ աւանդադրամները

1902-ի Յունուարի 1-ին Մ. Աթոռի գանձարանում կար հետեւեալ դրամագլուխը—արժէթղթով ոսկի ունեւոր 179962 ռ. 50 կ., ունեւոր 194739 ռ. և Փարիզ քաղաքի փոխառութիւն 4000 ֆ., իսկ զբաղով 2727 ռ. 31 կ., ընդամենը 377428 ռ. 81 կ. և 4000 ֆ.:

Բացի սրանից Մ. Աթոռի գանձարանում իբրեւ աւանդ նոյն ժամանակում պահւում էին նաեւ հետեւեալ գումարները.—ա. Յատուկ գումարներ. 1) Արդութեան ուսումնարանի դրամագլուխը 3457 ռ. 88 կ. զբաղով և 44900 ռ. արժէթղթով. 2) Հաղբատի դրամ. 174 ռ. 7 կ. զբաղով և 900 ռ. արժէթղթով. 3) Ալաշկերտի գաղթակ. դրամ.

948 ռ. 38 կ. դրամով և 15375 ռ. արժէթղթով. 4) Մեղուինեան գումար յանուն Տաճարի 284 ռ. 65 կ. դրամով և 1900 ռ. արժէթղթով. 5) Տաճարային դր. 109 ռ. 94 կ. դրամով և 600 ռ. արժէթղթով. 6) Խոր-Վիրապի դր. 109 ռ. 74 կ. դրամով և 600 ռ. արժէթղթով. 7) Զէմօ-Աւչալեան ընկ. գանձ. 80 ռ. 75 կ. 8) Գանձանակադրամ Երուսաղէմի 410 ռ. 5 կ., 9) Գանձանակադրամ կարմիր խաչի 63 ռ. 10 կ., 10) Ախալքալաքի արկածելոց դր. 33 ռ. 40 կ., 11) Արզուման Գրիգորեանցի դր. 20 ռ., 12) բաժանորդագին Աստուածաչնչի 628 ռ. 40 կ., 13) կուրաց գանձանակադրամ 13 ռ. 20 կ., 14) Յովակիմ Ադամեանի գում. 261 ռ. 96 կ. դրամով և 10600 ռ. արժէթղթով. 15) Թաղէոս քահանայ Բուդաղեանի դր. 57 ռ., 16) Ղըզլարի դպրոցի գում. 450 ռ. արժէթղթով. 17) Եօթնվիրաց պատկերի դր. 200 ռ. բ. Դաւականներ. արժէթղթով 4230 ռ. և դրամով 1887 ռ. ընդամենը դրամով 8739 ռ. 47 կ. և արժէթղթով 79555 ռ., ամբողջ աւանդը 88294 ռ. 47 կ.:

Ուրեմն 1902-ի Յունուարի 1-ին գանձարանում կար ընդամենը դրամազուլիս և աւանդադրամ արժէթղթով 454256 ռ. 50 կ. և 4000 ֆ., իսկ դրամով 11466 ռ. 78 կ., ամբողջ գումարը 465723 ռ. 28 կ. և 4000 ֆ.:

Հայերը Ռուսաստանում ըստ 1897 թուի առաջին ընդհանուր աշխարհագրի

Մինչև 1897 թիւը Ռուսաստանում բնակիչները հաշուելու համար ռէվիզիաներ էին անում: Ռէվիզիաների գլխաւոր նպատակն էր արականներին հաշուել պետական—ֆինանսական նպատակով: 1897-ին առաջին անգամ ընդհանուր աշխարհագիր եղաւ Ռուսաստանում: Այս աշխարհագրից ստացուած հետեանքները՝ Ն. Ա. Տրոյնիցկու ընդհանուր խմբագրութեամբ մշակուելով՝ լոյս տեսան Ս. Պետրբուրգում 1905 թուին երկու ընդարձակ հատորով՝ Բացի

* Первая всеобщая перепись населенія російской имперіи 1897 г., подъ редакціею Н. А. Тройницкаго, общій сводъ по имперіи результатовъ разработки данныхъ первой всеобщей переписи населенія, произведенной 28 января 1897 г., Т. I и II, С. Петербургъ 1905.

սրանից իւրաքանչիւր նահանգի վերաբերեալ վիճակագրական տեղեկութիւնները հրատարակուում են առանձին հատորներով և այդ հրատարակութիւնը դեռ չի վերջացած: Մենք օգտուելով այդ հրատարակութիւններից՝ կաշխատենք այստեղ ընդհանուր տեղեկութիւն տալ աշխարհագրից ստացուած հետեանքների մասին, մասնաւորապէս ծանրանալով հայերիս վերաբերեալ վիճակագրական տեղեկութիւնների վրայ:

Ն. Ա. Տրոյնիցկու հրատարակած երկու հատորներից առաջինում զետեղուած են հետեւեալ աղիւսակները.— 1) ներկայ ժողովուրդը և բնիկ ժողովուրդը: 2) Բնակիչների բաժանումը ըստ տնտեսութեան և վերջինս կազմը: 3ա) Բնակիչների թիւը ըստ սեռի, տասնամեայ հասակի և գրագիտութեան: 3բ) Բնակիչների բաժանումը ըստ սեռի, հասակի և գրագիտութեան: 4) Մի տարեկանից պակաս մանուկները ըստ ամսական հասակի: 5) Բնակիչների բաժանումը ըստ ընտանեկան վիճակի և հասակի: 6) Բնակիչների բաժանումը ըստ դասակարգի և ծննդավայրի: 7ա և 7բ) Եկւորների բաժանումը ըստ ծննդավայրի: 8) Բնակիչների բաժանումը ըստ դասակարգի և աստիճանի: 9ա և 9բ) Բնակիչների բաժանումը ըստ գրագիտութեան, կրթութեան, դասակարգի և հասակի: 10) Բնակիչների բաժանումը ըստ դասակարգի և ընտանեկան վիճակի: 11) Օտարահպատակների բաժանումը ըստ պետութեանց: 12) Բնակիչների բաժանումը ըստ դաւանութեան:

Բացի այս ընդարձակ աղիւսակներից հատորի մէջ կան նաև զանազան կարտօգրաւներ և դիագրաւներ: Հատորի բովանդակութեան մասին այս ընդհանուր տեղեկութիւնները տալուց յետոյ՝ այժմ համառօտակի առաջ բերենք մեղ հետաքրքրող վիճակագրական տեղեկութիւնները:

1897-ի աշխարհագրից երևեց, որ Ռուսաստանում՝ բացի Ֆինլանդիայից՝ կայ—

Եւրոպ. Ռուսաստանի	արական	0/0-ը	իգակ.	0/0-ը	երկսեռ.
50 նահանգներում	45749575	48,96	47693289	51,04	93442864
Պրիվիսլինեան 10 նն.	4712090	50,12	4690163	49,88	9402253
Կովկասի 11 նահանգներում և չրջաններ.	4886713	52,61	4402651	47,39	9289364
Սիբիրի 9 նահանգ.	2964419	51,48	2791403	48,52	5758822
Միջին Ասիայի 9 չրջ.	4164551	53,76	3582167	46,24	7746718
Բացի սրանից՝ հետև ծովերի վրայ՝ զինուորապահան նաւերում,					

Բուխարայի ռուսա-
կան պաղթավայրե-
րում, ռուսական
հպատակները խիւս-
յում ու ռուս ժողո-
վուրդը Ֆինլանդի-
այում, որոնք աշխար-
հագրի մէջ պէտք է
մտնէին

35350 86,94 5311 13,06 40661

ամբողջ պէտք. մեջ 62512698 49,74 63167984 50,26 125680682

Սոյն 40661 մարդը դուրս հանելով 125680682-ից՝ կստացուի
125640021—Ռուսաստանի բնակիչները, որոնց և վերաբերում են
վիճակագրական հաշիւները:

Առհասարակ կանանց թիւը շատ է քան տղամարդկանց, մա-
նաւանդ եւրոպական Ռուսաստանում. այնպէս որ՝ չնայելով որ
միւս մասերում տղամարդկանց թիւն է շատ, բայց այնուամե-
նայնիւ կանանց ընդհանուր թիւը գերակշռում է:

100 տղամարդուն ընկնում է ամբողջ կայսերութեան մէջ 101,1 կին,
Եւրոպ. Ռ. 104,2 Պրիվիս. նն. 99,5 Կովկաս 90,1 Բագ. ն. 80,5
Գանձ. ն. 83,0 Կարսի շ. 81,0 Քուլթ. ն. 92,6 Թիֆ. ն. 82,6
Չերնամոր. ն. 65,3 Երևանի ն. 87,7

Ըստ դաւանութեան 1000 տղամարդուն ընկնում է.

ռուղղափառ	1.028,3 կին	կաթոլիկ	1.016,1
լուսաւորչական	890,1	հրէայ	1.047,7
բողոքական	1.850,4	բուդդայական և	
մահմէտական	883,6	լամայիտ	802,2
հնադաւան	1.142,4		

932 քաղաքում ապրում են 8912140 ար. և 7916255 իգ.
այսինքն քաղաքներում 1000 տղամարդուն ընկնում է 888,2 կին:
Քաղաքացիները ազգաբնակչութեան 13,40/0 են:

Բնակիչները գետեղուած են հետևեալ կերպով.—ամբողջ պե-
տութեան մէջ մի | վերստի վրայ 6,66 հ. Սիբիրում 0,58
Պրիվիսլին. նն. 84,28 Կովկասում 22,56 Բագուի ն. 24,08
Դաղստանի շրջ. 21,86 Գանձակի նհնգ. 22,65 Կարսի շրջ. 17,48
Կուբ. շրջ. 23,63 Քուլթայիսի ն. 33,2 Սուրպ. ն. 16,64
Թերեքի շրջ. 15,3 Թիֆլիսի ն. 26,86 Չերնոմ. ն. 8,90
Երևանի ն. 35,71

Ամենից խիթ բնակուած են Պրիվիւիւան նահանգները, ամենից նօսր Սիբիրը:

Աշխարհագրի ժամանակ երևեց ,որ իրանց բնակավայրից ժամանակաւոր հեռացել էին 3,041,255 հ. (2,40/0), իսկ եկւոր էին 2,104,751 հ. (1,70/0): Այս տարբերութիւնից կասկած է ծագում, որ մի մարդը կարող է երկու տեղ գրուած լինել և աշխարհագրի մէջ անճշդութիւն մտած:

Բոլոր բնակիչները բաժանուած են 22,023,414 տնտեսութեան (ընտանիքի), որից 2,893.847 (130/0) քաղաքային տնտեսութիւն:

Բնակիչները ըստ հասակի հետեւեալ 0/0 էին ներկայացնում.

	1 ց. պակաս.	1—9 ց.	10—19 ց.	20—59 ց.	մնացածը
	ար. իգ.	ար. իգ.	ար. իգ.	ար. իգ.	ար. իգ.
Եւրոպ. Ռ.	3,7—3,5	24,0—23,4	21,3—21,4	44,1—44,5	6,9—7,2
Պրիվիւ. նն.	3,5—3,5	24,6—24,7	20,5—21,5	45,4—43,9	6,0—6,4
Կովկաս	2,9—3,0	26,8—28,2	20,3—19,8	44,4—42,9	5,6—6,1
Սիբիր	3,5—3,6	21,6—23,2	19,5—20,7	47,3—44,8	8,1—7,7
Միջ. Ասիա	1,2—1,4	21,4—24,6	19,1—19,6	51,9—48,3	6,4—6,1
Կյսրութ. մէջ	3,4—3,4	24,0—23,9	20,9—21,1	44,7—44,6	7,0—7,0

Այս տեղից երևում է, որ 1 տարեկանից պակաս մանուկներ բնակիչների թուի համեմատութեամբ ամենից քիչ կային Մ. Ասիայում, ամենից շատ Ե. Ռուսաստանում (ար.) և Սիբիրում (իգ.): 1—9 տարեկան շատ կային Կովկասում և ամենից քիչ Մ. Ասիայում (ար.) և Սիբիրում (իգ.): 10—19 տ. շատ կային Ե. Ռուսաստանում (ար.) և Պրիվիւիւան նահանգներում (իգ.), ամենից քիչ Միջին Ասիայում: 20—59 տ. ամենից շատ կային Մ. Ասիայում, ամենից քիչ Ե. Ռուսաստանում (ար.) և Կովկասում (իգ.):

Այժմ տեսնենք 1 տարեկանից պակաս մանուկների 0/0-ը Կովկասի մի քանի նահանգներում:

1 տարեկանից պակաս երկսեռ մանուկների 0/0-ը.

Կովկաս	2,9	Բագուի	ն. 2,0	Գանձակի	ն. 2,3
Կարսի շրջ.	2,7	Գուլիստի	ն. 2,2	Թիֆլիսի	ն. 2,5
Ջերնամոր	ն. 2,7	Երևանի	ն. 2,6		

1 տարեկանից պակաս մանուկներ բնակիչների թուի համեմատութեամբ ամենից շատ կային Կարսի շրջանում և Ջերնամորեան նահանգում, իսկ նոյն իսկ այդ նահանգներում նրանց 0/0-ը ընդհանուր Կովկասի միջին 0/0-ից ցածր էր: 1 տարեկանից պակաս մանուկներ ամենից քիչ կային Բագուի նահանգում:

Բնակիչների միջին հասակի տարիները կայսերութեան մէջ.

ֆաղաֆնեբում գիւղերում

	ար.	իգ.	երկսեռ	ար.	իգ.	ար.	իգ.
Եորոպ. Ռ.	24,98—25,54	25,26	26,43—27,41	24,75—25,28			
Պրիվիսլ. նն.	24,25—24,47	24,36	24,32—25,14	24,22—24,27			
Կովկաս	23,80—24,07	23,94	24,71—24,75	23,68—23,42			
Սիբիր	26,79—25,77	26,31	28,14—26,90	26,69—25,68			
Միջին Ասիա	26,84—25,33	26,14	27,52—26,12	26,74—25,23			
Կայսեր. մէջ	25,05—25,32	25,16	26,15—26,85	24,86—25,10			

Միջին հասակը քաղաքներում աւելի մեծ է քան գիւղերում, առողջապահական պայմանների շնորհիւ և այն պատճառով, որ մշակութեան յարմար ուժերը հաւաքուած են լինում քաղաքներում: Միջին հասակի կողմից Կովկասը վերջին տեղն է բռնում, իսկ Սիբիրը առաջին: Տղամարդիկ երկարակեաց են Մ. Ասիայում, կանայք Սիբիրում: Ամենից երկարակեաց են Սիբիրի (ար.) և Ե. Ռուսաստանի (իգ.) քաղաքացիները, ամենից սակաւակեաց՝ Կովկասի գիւղացիները:

Այժմ անցնենք բնակիչների ընտանեկան վիճակին:

Ընտանեկան վիճակը 0/0-ով ըստ տասնամեայ հասակի.

	ամուրի եւ կոյս ամուսնացած որբւայրի ամուսնաթոյ անորոշ									
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
15 և. պակաս	99,99—99,93	0,01—0,07	0,00—0,00	0,00—0,00	0,00—0,00	0,00—0,00	0,00—0,00	0,00—0,00	0,00—0,00	0,00—0,00
15—19 և.	95,49—84,09	4,46—15,75	0,02—0,11	0,01—0,03	0,02—0,02					
20—29 և.	44,36—20,93	54,92—77,51	0,57—1,36	0,06—0,14	0,09—0,06					
30—39 և.	9,53—6,52	88,62—87,88	1,65—5,36	0,11—0,18	0,08—0,06					
40—49 և.	4,33—4,62	91,35—80,71	4,12—14,42	0,13—0,17	0,07—0,08					
50—59 և.	3,02—4,27	87,03—66,03	9,75—29,40	0,13—0,15	0,07—0,15					
60 եւ աւելի և.	2,64—4,81	68,04—36,15	29,04—58,50	0,13—0,14	0,15—0,40					
ամբողջ բնակիչ.	57,14—52,02	39,45—39,56	3,29—8,27	0,06—0,08	0,06—0,07					

Այս աղիւտակից երևում է, որ ամուսնիների և կոյսերի ամենամեծ 0,0-ը բնականաբար տալիս են 15 տարեկանից պակասները, և ամենափոքր 0/0-ը 60 և աւելի տարեկան տղամարդիկ և 50—59 տարեկան կանայք: Ամուսնացածների ամենամեծ 0/0-ը տալիս են 40—49 տ. տղամարդիկ և 30—39 տ. կանայք, իսկ ամենափոքր 0/0-ը 15 տարեկանից պակաս տղամարդիկ և կանայք: Որքայրիների ամենամեծ 0/0-ը տալիս են 60 և աւելի տարեկանները, իսկ ամենափոքր 0/0-ը 15 տարեկանից պակասները: Ամուսնաթողների ամենամեծ 0/0-ը տալիս են 40—60 և աւելի տարեկան տղամարդիկ և 30—39 տարեկան կանայք, իսկ ամենափոքր 0/0-ը 15 տարեկանից պակաս տղամարդիկ և կանայք:

Ընտանեկան վիճակը 0/0-ով.

	ամուրի եւ կոյս		ամուսնացած		որբեւայրի	
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
Եւրոպ. Ռ.	28,9—23,6		65,5—62,6		5,7—13,5	
Պրիվիսլ. նն.	34,0—28,1		62,4—59,9		3,4—11,6	
Կովկաս	31,9—13,6		63,3—71,0		4,6—15,0	
Սիբիր	30,8—20,6		61,7—66,2		7,1—12,8	
Միջին Ասիա	35,1—9,0		60,9—77,0		3,7—13,7	
Կայսերութիւն	30,1—22,3		64,3—64,0		5,4—13,4	

Այստեղից երևում է, որ բնակիչների թուի համեմատութեամբ ամուսինները ամենից շատ են Միջին Ասիայում, ամենից սակաւ Եւր. Ռուսաստանում, իսկ կոյսերը ամենից շատ են Եւր. Ռուսաստանում և ամենից սակաւ Մ. Ասիայում, Ամուսնացած տղամարդիկ ամենից շատ են Եւր. Ռուսաստանում և սակաւ Մ. Ասիայում, այն ինչ ամուսնացած կանայք շատ են Մ. Ասիայում և ամենից սակաւ Պրիվիսլեան նահանգներում, Որբեւայրի տղամարդիկ ամենից շատ են Սիբիրում և սակաւ Պրիվիսլեան նահանգներում, իսկ որբեւայրի կանայք ամենից շատ են Կովկասում և սակաւ Պրիվիսլեան նահանգներում:

Բնակիչների դասակարգային կազմը 0/0-ով.

	ամբողջ					
Եւր. Ռ. Պրիվ.ՃԳ. Կովկաս Սիբիր Մ. Ասիա	պեթ.					
տոհմ. ազն.	0,95	1,44	1,84	0,29	0,15	0,97
անձն.ազն և աստիճ.	0,52	0,47	0,58	0,51	0,20	0,50
հոգևորական	0,54	0,08	0,62	0,34	0,04	0,47
տոհմ.և անձ.պտ.քղ.	0,33	0,04	0,21	0,16	0,03	0,27
վաճառական	0,25	0,10	0,20	0,16	0,06	0,22
մեղչանին	10,65	23,53	8,11	5,62	1,95	10,66
գիւղացի	84,16	72,98	74,56	70,87	4,98	77,12
ղազաիս	1,54	0,11	10,43	4,46	3,28	2,33
ինօրօւէց	0,45	0,00	1,51	14,64	88,97	6,61
օտարահպատակ	0,27	1,15	1,69	1,08	0,29	0,48

Սրանից երևում է, որ տոհմ. ազնուականները բնակիչների թուի համեմատութեամբ ամենից շատ են Կովկասում, ամենից քիչ Մ. Ասիայում, Անձնական ազնուականները և աստիճանաւորները ամենից շատ են Ս. Ռուսաստանում և ամենից սակաւ Մ. Ասիայում, Հոգևորականները շատ են Կովկասում, սակաւ Մ. Ասիայում:

Տոհմ. և անձ. պատ. քաղաքացիները շատ են Ե. Ռուսաստանում, սակաւ Մ. Ասիայում: Վաճառականները շատ են Ե. Ռուսաստանում, սակաւ Մ. Ասիայում: Մեշչանները շատ են Պրիվիլեան նահանգներում և սակաւ Մ. Ասիայում: Գիւղացիները շատ են Ե. Ռուսաստանում և սակաւ Մ. Ասիայում: Ղազախները ամենից շատ են Կովկասում, սակաւ Պրիվիլեան նահանգներում: Ինօրօղէցները ամենից շատ են Մ. Ասիայում և սակաւ Պրիվիլեան նահանգներում: Օտարահպատակները ամենից շատ են Կովկասում, սակաւ Սիբիրում:

Օտարահպատակներից 120720 հ. (19,90/0) Տաճկաստանից են և 73920 հ. Պարսկաստանից (12,20/0): Սրանք մեծ մասամբ մնում են Կովկասում: Տաճկահպատակների և Պարսկահպատակների մի մասը հայեր են:

Բնակիչների 0/0-ը ըստ դաւանութեան.

	Պեթ. մէջ	Եւգ. Ռ.	Պրիվիւ. ճն.	Կովկաս	Սիբիր	Մ. Ասիա
ռւղղափառ	69,35	81,71	6,47	49,40	85,79	8,28
հնադաւան	1,75	1,88	0,10	1,46	4,16	0,84
լուսաւորչական	0,94	0,05	0,00	12,12	0,01	0,06
հայ կաթ.	0,03	0,00	0,00	0,39	0,00	0,00
հռ. կաթ.	9,13	4,65	74,80	0,49	0,61	0,71
լուտերական	2,84	3,30	4,41	0,59	0,27	0,11
ռէֆորմատ.	0,07	0,08	0,06	0,02	0,00	0,00
բապտիստ	0,03	0,03	0,04	0,02	0,01	0,00
մենօնիտ	0,05	0,07	0,01	0,02	0,00	0,01
անգլիկան	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
մնացած քրիստ.	0,00	0,00	0,01	0,01	0,00	0,00
կարայիմ	0,01	0,01	0,00	0,00	0,00	0,00
հրէայ	4,15	4,06	14,05	0,61	0,60	0,17
մահմետական	11,07	3,82	0,05	34,52	2,20	90,32
բուդդայ. և լամայիտ	0,35	0,18	0,00	0,16	4,30	0,02
մնացած ոչ քրիստ.	0,23	0,16	0,00	0,19	2,05	0,00

Սոյն աղիւսակից կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանում ամենատարածուած դաւանութիւնը ռւղղափառութիւնն է, ամենաքիչ տարածուածը անգլիկան և կեղեցու դաւանութիւնը: Կովկասում ամենատարածուածներն են ռւղղափառութիւնը, մահմետականութիւնը և լուսաւորչականութիւնը: Եւր. Ռուսաստանում և Սիբիրում ամենատարածուածն է ռւղղափառութիւնը, Պրիվիլեան նահանգներում՝ հռ. կաթոլիկութիւնը և Մ. Ասիայում՝ մահմետականութիւնը:

Այժմ տեսնենք գրագիտութեան պատկերը:

Աշխարհագրի մէջ մտած ժողովրդից գրագէտ էին 26569585 հ.
(21,10/0), որից 18318812 ար. (29,80/0), 8250773 իգ. (13,10/0):

Քաղաքացիներից գրագէտ էին 45,30/0 երկսեռ.—արակ. 540/0,
իգական 35,60/0.

Գրագէտների 0/0-ը ըստ հասակի.

	Պես. մէջ ա. իգ.	Եւր. Ռ. ա. իգ.	Պրիվիս. 66. ա. իգ.	Կովկաս ա. իգ.	Սիբիր ա. իգ.	Մ. Ասիա ա. իգ.
4—9 ս.	8,4—4,9	9,5—5,4	9,2—7,5	3,9—1,9	5,9—2,5	1,9—1,0
10—19 ս.	45,5—21,8	51,8—22,7	44,4—40,8	24,5—11,6	26,1—10,0	9,0—3,9
20—29 ս.	44,9—19,5	49,9—20,3	55,0—43,2	30,2—9,0	29,1—7,7	13,0—2,9
30—39 ս.	39,5—15,7	43,8—16,1	49,0—36,6	25,9—7,2	28,3—5,6	10,5—2,4
40—49 ս.	33,2—12,6	36,3—13,1	46,2—30,5	23,6—5,9	23,3—4,0	9,3—1,9
50—59 ս.	26,5—11,1	22,2—11,6	33,2—21,2	20,3—5,1	17,7—2,9	7,9—1,7
60—69 ս.	22,4—10,2	24,4—10,9	28,4—19,1	16,3—4,1	14,7—2,4	6,6—1,6
70—79 ս.	18,6—9,6	20,1—10,3	24,8—17,5	13,1—3,3	11,2—1,8	5,3—1,4
80—89 ս.	13,0—7,6	14,1—8,6	18,4—14,1	8,9—2,1	7,6—1,2	4,6—1,3
90—99 ս.	8,6—5,1	9,3—5,9	12,9—9,0	6,5—1,6	6,0—0,9	5,2—1,2
100—109 ս.	5,9—3,4	6,5—4,7	6,5—7,9	4,7—1,1	6,3—1,2	6,6—1,0
110 և ավելի ս.	5,9—3,3	5,3—5,4	— —	2,4 —	6,1 —	15,0 —
անյայտ ս.	23,7—12,9	29,5—16,6	33,3—29,9	13,5—4,4	17,3—5,8	4,9—1,0
միջին բ.	29,3—13,1	32,6—13,7	34,2—26,8	18,2—6,0	19,2—5,1	7,9—2,2
ճայնք միայն						
բաղաճեցում	54,0—35,6	58,5—38,3	50,5—38,6	42,4—22,3	48,0—28,3	24,9—10,3

Այս աղիւսակից երևում է, որ 4—9 տարեկան գրագէտ բնակիչների թուի համեմատութեամբ ամենից շատ կային Եւր. Ռուսաստանում (ար.) և Պրիվիսլեան նահանգներում (իգ.), ամենից սակաւ Մ. Ասիայում 10—19 տ. գրագէտները ամենից շատ էին Ե. Ռուսաստանում (ար.) և Պրիվիսլեան նահանգներում (իգ.), սակաւ Մ. Ասիայում 20—79 տ. գրագէտները ամենից շատ էին Պրիվիսլեան նահանգներում, ամենից քիչ Մ. Ասիայում 80—89 տ. գրագէտները ամենից շատ էին Պրիվիսլ. նահանգներում, սակաւ Մ. Ասիայում (ար.) և Սիբիրում (իգ.): 90—99 տ. գրագէտները ամենից շատ էին Պրիվիս. նահանգներում, սակաւ Մ. Ասիայում (ար.) և Սիբիրում (իգ.): 100—109 տ. գրագէտները ամենից շատ էին Մ. Ասիայում (ար.) և Պրիվիսլ. նահանգներում (իգ.), սակաւ Կովկասում (ար.) և Մ. Ասիայում (իգ.): 110 և ավելի տարեկան գրագէտներ ամենից շատ կային Մ. Ասիայում (ար.) և Ե. Ռուսաստանում (իգ.), բոլորովին չկային Պրիվիսլ. նահանգներում: Նոյն տարիքով գրագէտ կանայք ամեննին չկային նաև Կովկասում, Սիբիրում և Մ. Ասիայում: Ընդհանրապէս գրագիտութիւնը ամեն-

նից շատ տարածուած էր Պրիվիւ. նահանգներում, ամենից սակաւ Մ. Ասիայում: Իսկ միայն քաղաքներում գրագիտութիւնը ամենից շատ տարածուած էր Եւր. Ռուսաստանում (ար.) և Պրիվ. նահանգներում (իգ.), ամենից սակաւ Մ. Ասիայում: Բնականաբար գրագէտները ամենամեծ 0/0 տալիս են 10—19 տարեկանները, ամենից սակաւ 110 և աւելի տարեկանները:

Գրագէտների 0/0-ը ընդհանրապէս.

Պետութեան մէջ	19,78	Եւր. Ռ.	19,99	Պրիվիւ. նն.	39,43
Սիբիր	12,95	Մ. Ասիա	25,15	Կովկաս	19,37
Բագուի ն.	37,55	Գանձ. ն.	35,96	Կարսի շրջ.	41,54
Քուբայիսի նգ.	56,12	Թիֆլիսի ն.	48,53	Երևանի ն.	54,10

Այս աղիւսակից երևում է, որ գրագիտութիւնը Անդրկովկասի նահանգներից ամենից շատ տարածուած էր Քուբայիսի նահանգում, ամենից սակաւ Գանձակի նահանգում: Անդրկովկասի գրագիտութեան 0/0-ը ընդհանուր Կովկասի և պետութեան գրագիտութեան միջին 0/0-ից բարձր էր:

Բնակիչների կրթութիւնը հետեւեալ պատկերն է ներկայացնում.

	ա Ր ա կ ա ն					ի գ ա կ ա ն				
	բիւ տնմանց	0/0	0/0			բիւ տնմանց	0/0	0/0		
			բնակիչների վերաբերմամբ	բնակիչների բնակավայրերի մէջ	գիւղական մէջ			բնակիչների վերաբերմամբ	բնակիչների բնակավայրերի մէջ	գիւղական մէջ
ճամպուտացիներում և քաղաք. վարժար... 97961	11,5	0,157	83,3	16,7	6360	1,2	0,010	83,3	12,7	
մասնագ. տեխնիկ. բարձ. ուսում... 29656	3,5	0,048	78,7	21,3	619	0,1	0,001	80,3	19,7	
քաղաք. գիմուսական ուսումնադասնետում... 4181	0,5	0,007	82,2	11,8	—	—	—	—	—	
մասնագիտական միջնակարգ ուս... 86655	10,2	0,138	61,2	38,8	13293	2,5	0,021	77,0	23,0	
համալսարանական միջնակարգ ուս... 558038	65,7	0,893	66,5	33,5	514939	97,5	0,815	79,6	20,4	
գիմուսական միջնակարգ ուս... 72441	8,6	0,116	82,7	17,3	—	—	—	—	—	
Ընդամենը 848932	100,0	1,359	69,8	30,2	535211	100,0	0,847	79,6	20,4	

Կրթութեանների ամենամեծ 0/0-ը ստացել է հանրակրթական

միջնակարգ ուսումնական Միջնակարգ և բարձրագույն կրթութիւն ունեցող տղամարդիկ կազմում են բնակիչների 1,359 0/0-ը, կանայք 0,847 0/0: Միջնակարգ և բարձրագույն կրթութեան տէր թէ տղամարդիկ և թէ կանայք մեծ մասամբ ապրում են քաղաքներում:

Կրթութեամբ 0/0-ը բնակիչների վերաբերմամբ.

Եւրոպ. Ռ.	Պրիվիսլ. ցն.	Կովկաս	Սիբիր	Մ. Ասիա
աւ. իգ.	աւ. իգ.	աւ. իգ.	աւ. իգ.	աւ. իգ.
բարձ. ընդ. կրթ. տէր 0,176-0,009	0,056-0,005	0,089-0,004	0,086-0,004	0,024-0,002
բարձ. մաս. կրթ. տէր 0,05-50,001	0,052-0,001	0,023-0,001	0,027-0,001	0,008-0,000
բարձ. զին. կրթ. տէր 0,008	— 0,007	— 0,004	— 0,004	— 0,003
միջնակ. մաս. կրթ. 0,146-0,019	0,189-0,010	0,108-0,009	0,123-0,016	0,048-0,004
միջնակ. հանդեր. 9,946-0,745	1,294-0,920	0,794-0,576	0,670-0,667	0,131-0,197
միջնակ. զին. կրթ. 0,123	— 0,135	— 0,093	— 0,078	— 0,067
Ընդհանրապէս 1,454-0,774	1,733-0,936	1,111-0,590	0,988-0,688	0,281-0,203

Միջին և բարձրագույն կրթութեան տէր անձեր ամենից շատ կան Պրիվիսլեան նահանգներում և ամենից քիչ Մ. Ասիայում:

Բնակիչները ըստ ծննդավայրի 0/0-ով.

	եղական ծնունդ	այլ նահանգի	այլ պետութեան
Եւրոպ. Ռ.	92,2	7,6	0,2
Պրիվիսլ. նն.	87,3	11,4	1,3
Կովկաս	84,4	14,0	1,6
Սիբիր	75,6	23,3	1,0
Միջ. Ասիա	93,6	5,9	0,8
Կայսերութիւն	90,6	9,0	0,4

Ամենից շատ օտարապատակներ կան Կովկասում, հարկան պետութիւններից եկած: Ամենից շատ եկւորներ այլ նահանգներից կան Սիբիրում:

Ռուս բնակիչների յարաբերութեան 0/0-ը մնացած բնակիչների վերաբերմամբ.

Պետութեան մէջ	66,80	Եւրոպական Ռ.	80,05
Պրիվիսլեան նն.	6,72	Կովկաս	33,72
Բազուի նահանգ	9,4	Գանձակի ն.	2,0
Կարսի շրջ.	9,6	Դուբայիսի նահանգ	2,2
Թիֆլիսի նահանգ	8,2	Երևանի նահանգ	1,9

Տեղական բնակիչների վերաբերմամբ ուսանողը ամենափոքր 0/0 են կազմում Երևանի նահանգում, ամենամեծ 0/0 Ե. Ռուսաստանում:

Այժմ տեսնենք թէ հայերը ըստ դաւանութեան ինչպէս են գետեղուած Ռուսաստանում:

Բնակիչների բաժանունը ըստ դաւանութեան.

Նահանգներ	Լ, ռ, ս, ա, լ, ո, ր, չ, ա, կ, ա, ց						Հ, ա, յ						կ, ա, ք, ո, լ, ի, կ					
	1897-ին		1907-ին		1897-ին		1897-ին		1897-ին		1897-ին		1907-ին		1897-ին		1897-ին	
	ար.	իգ.	իգ.	ընդամենը	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
1	25897	21987	47884	56683	15400	12750	1288	947	2235	2643	878	596						
2	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
3	2052	2151	4803	4960	1924	2083	21	29	50	59	13	25						
4	1087	1178	2265	2673	671	780	158	88	246	290	38	6						
5	9	3	12	14	9	3	22	25	47	55	4	2						
6	11	8	19	22	11	8	12	12	24	28	4	3						
7	2	1	3	4	1	1	—	1	1	1	—	1						
8	4	4	8	9	4	4	—	—	—	—	—	—						
9	21	9	30	35	14	7	6	3	9	10	4	1						
10	112	47	159	188	74	25	6	—	6	7	3	—						
11	4	—	4	5	3	—	1	—	1	1	1	—						
12	17	9	26	31	6	2	15	18	33	39	1	1						
13	13896	13222	27118	31999	5811	5552	18	11	29	34	12	7						
14	801	147	448	529	130	95	16	8	24	28	7	1						
15	26	9	35	41	23	9	—	1	1	1	—	1						
16	2	—	2	2	1	—	14	13	27	32	—	—						
17	68	36	104	123	58	33	5	8	18	15	3	—						

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
17 Կովէնի	5	3	8	9	4	2	42	54	96	113	1	3
18 Կոստորմայի	1	3	4	5	—	3	—	1	1	1	—	1
19 Կուրլանդեան	6	2	8	9	1	—	7	5	12	14	5	3
20 Կուրսկի	32	9	41	48	25	4	5	1	6	7	1	—
21 Լեֆլանդեան	39	8	47	55	38	8	3	3	6	7	3	2
22 Մինսկի	7	7	14	17	6	7	34	27	61	72	5	6
23 Մոզիլի	4	2	6	7	—	—	7	9	16	19	1	1
24 Մոսկուայի	1188	452	1640	1935	1183	451	18	7	25	29	18	7
Նոյն Բաւոյ Մոսկով.	1182	451	1633	1927	—	—	18	7	25	29	—	—
25 Նիժնեգորեան	33	14	47	55	15	5	1	—	1	1	1	—
26 Նովգորոդեան	—	2	2	2	—	2	3	2	5	6	—	1
27 Օլոնէցկի	1	—	1	1	1	—	—	—	—	—	—	—
28 Օրէնբուրգի	18	1	19	22	13	1	2	—	2	2	1	—
29 Օրլովի	28	3	31	37	28	3	1	2	3	4	1	—
30 Պէնդլի	4	1	5	6	2	1	1	—	1	1	1	—
31 Պերմի	15	3	18	21	7	1	4	—	4	5	2	—
32 Պոդոլի	65	29	94	111	18	6	23	14	37	44	20	4
33 Պոլտաւայի	11	5	16	19	8	2	—	—	—	—	—	—
34 Պսկովի	1	—	1	1	1	—	12	12	24	28	—	—
25 Ռեազանի	5	—	5	6	4	—	1	—	1	1	1	—
36 Սամարայի	27	6	33	39	25	5	3	5	8	9	—	—
37 Ս. Պետրբուրգի	628	297	925	1091	623	297	19	4	23	27	15	3
Ն. Բ. Ս. Պետրբուրգ	595	284	819	966	—	—	15	3	18	21	—	—

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
38 Սաբաստովի	120	48	168	198	116	36	5	4	9	11	4	4
39 Սիմոնիսի	3	1	4	5	3	1	1	—	1	1	1	—
40 Սմոլենսկի	7	4	11	13	7	2	1	2	3	4	—	—
41 Տաւրիկեան	4279	3215	7494	9023	2902	2308	669	537	1206	1433	587	479
42 Տաթրովի	44	17	61	72	40	14	2	—	2	2	2	—
43 Տվերի	10	6	16	19	5	5	2	1	3	4	2	1
44 Տուլայի	4	1	5	6	3	1	—	—	—	—	—	—
45 Ռաֆայի	15	1	16	19	8	1	2	—	2	2	1	—
46 Ռաբկովի	361	118	479	567	299	102	61	16	77	91	56	13
47 Ռեդրոնի	1307	908	2212	2610	1268	880	59	19	78	92	59	16
Ն. Բ. Սղեա	950	570	1520	1794	—	—	30	12	42	50	—	—
48 Չերնիկովի	13	—	13	15	3	—	3	3	6	7	—	2
49 Էսլանդեան	1	—	1	1	1	—	1	—	1	1	1	—
50 Եսթուպի	3	—	3	4	3	—	2	2	4	5	2	2
Գրիվիսկան 66.	157	64	221	258	142	57	198	219	417	499	37	43
51 Վարչաւաթի	93	32	125	147	87	31	23	38	61	48	12	19
Ն. Բ. Վարչաւա	84	30	114	135	—	—	11	17	28	33	—	—
52 Կալիւեան	2	—	2	2	2	—	15	8	23	27	1	—
53 Կելէցի	4	3	7	8	2	1	13	24	37	44	—	2
54 Լամֆրեան	4	1	5	6	2	1	14	22	36	42	3	2
55 Լիւրիկեան	11	8	19	22	8	7	30	22	52	61	4	3
56 Պետրիկովեան	20	5	25	29	20	4	40	34	74	87	10	7
57 Պլոյկի	8	8	16	19	8	8	23	27	50	59	4	4

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
58 Թաղանկի	1	—	1	1	1	—	12	8	20	23	1	—
59 Սուղալակի	4	4	8	9	2	2	10	19	29	34	2	5
60 Սեղեցի	10	3	13	15	10	3	18	17	35	41	—	1
Կովկաս	595454	530341	1125795	1328438	134175	106794	18485	17629	36114	42615	3752	3617
61 Բագուի	31403	21160	52563	62024	14583	8328	96	109	205	242	85	90
62 Դաղստանի	955	668	1623	1915	892	643	24	5	29	34	24	5
63 Գանձակի	155257	143428	298685	352448	17181	15748	68	37	105	124	37	20
64 Կարսի	37726	33397	71123	88925	8614	7088	1065	779	1844	2176	507	325
65 Կուքանի	7997	6653	14650	17287	4077	3619	104	39	143	169	72	22
66 Քուլթալի	11610	7370	18950	22396	6765	3661	2631	2894	5525	6519	1877	2171
67 Սաւրոպօլի	2838	2517	5855	6319	2321	2141	4	5	9	11	2	3
68 Քերեքեան	7674	6798	14472	17077	4822	4589	39	33	72	85	27	26
69 Թիֆլիսի	113899	96762	210161	247990	45466	36812	10363	9853	20216	23855	979	854
70 Չերնոօրեան	3506	2635	6141	7246	301	136	58	24	82	97	37	17
71 Երևանի	223089	208953	442042	521610	29253	24534	4033	3851	7884	9303	105	84
Սիբիր	467	36	503	594	191	9	33	11	44	52	5	2
72 Ամուրի	11	3	14	17	10	3	—	—	—	—	—	—
73 Ենիսէյի	32	3	35	41	18	—	4	—	4	5	—	—
74 Չաբայկալի	50	4	54	64	13	1	10	3	13	15	—	—
75 Իրկուտսկի	162	14	176	208	42	1	4	4	8	9	1	1
76 Պրիմորսկի	38	2	40	47	22	1	1	1	2	2	—	—
77 Սախալին կղզ.	110	7	117	138	53	2	6	—	6	7	3	—
78 Տորոլի	30	1	31	37	21	1	2	2	4	5	—	1

Ուրեմն սոյն հաշուով 1897-ի Յունուարի 28-ին ամբողջ Ռուսաստանում կար լուսաւորչական (հայ, ուտիացի, բոշա) 1179622 հ. հայ կաթողիկ 38841 հ., ընդամէնը 1218463 հ.: Բողոքական և այլ դաւանութեան հայերը սոյն հաշուով առանձնապէս յիշուած չեն և մենք դժուարանում ենք ասել թէ արդեօք նրանք լրիւ մտած են սոյն հաշուի մէջ, թէ ոչ: Ի նկատի ունենալով, որ Անդրկովկասի վիճակագրական Յանձնաժողովը հիմնուելով մի քանի տարուայ վիճակագրական տեղեկագրերի վրայ, հայերի բնական աճման 0/0-ը ընդունում է 1,80—2, մենք էլ ընդունեցինք այդ աճման 0/0-ը 1,80) և աշխատեցինք որոշել լուսաւորչականների և հայ կաթողիկոսների հաւանական թիւը առաջիկայ 1907-ի Յունուարի 28-ին, այն է աշխարհագրից տասը տարի յետոյ: Այդ ժամանակ հաւանականաբար լուսաւորչականների թիւը կլինի 1392129 իսկ հայ կաթողիկոսներին՝ 45839, ընդամէնը 1437968 կամ կլոր թուով 1,438,000:

*
* *

Ն. Ս. Տրոյնիցկու վերոյիշեալ հրատարակութեան II հատորում զետեղուած է ընդամէնը 13 աղիւսակ, որոնցից XIII—XVI աղիւսակները պարունակում են տեղեկութիւններ ժողովրդի քանակութեան մասին ըստ ազգութեան (մայրենի լեզուն հիմք ընդունելով): Այս մասը խմբագրել և մշակել է Ս. Կ. Պատկանովը:

XVII—XIX աղիւսակները տեղեկութիւն են պարունակում ֆիզիքական արատ ունեցող անձանց մասին: Այս բաժինը խմբագրել է Պ. Ա. Բեչանովը, իսկ համառօտ տեղեկագիրը կազմել է դօկտոր Վ. Ի. Գրեքենշչիկովը:

XX—XXIII աղիւսակները պարունակում են տեղեկութիւններ ժողովրդի զբաղմանց մասին: Այս մասը խմբագրել և մշակել են Ն. Պ. Շվէյկին, Ի. Լ. Վ. Բրունէման և Ա. Ի. Գիլշերը:

XXIV աղիւսակը պարունակում է տեղեկութիւններ դասակարգերի մասին ըստ ազգութեան (մայրենի լեզուի): Այս մասը նոյնպէս խմբագրել է Ս. Կ. Պատկանովը:

Եւ վերջապէս XXV աղիւսակը տալիս է տեղեկութիւններ ժողովրդեան դաւանութեան մասին ըստ հասակի: Այս բաժինը կազմուած է Պ. Ա. Բեչանովի ղեկավարութեամբ:

Սոյն հատորից նախ առաջ ենք բերում այն աղիւսակը, որից երևում է թէ հայերը ըստ ազգութեան (հիմք ընդունելով մայրենի լեզուն) ինչպէս են զետեղուած Ռուսաստանում:

	1	2	3	4	5	6	7
58 Քաղաքակեր	1	—	3	3	6	21	15
59 Սուղակակեր	1	2	3	2	5	37	32
60 Սևղիցի	9	1	9	1	10	48	88
Կովկաս	132386	106483	590038	528056	1118094	1171909	53815
61 Բազուի	14682	8442	31223	21010	52233	52768	535
62 Դաղստանի	902	647	964	672	1636	1652	16
63 Գանձակի	17228	15781	151638	140550	292188	298790	6602
64 Կարսի	9174	7442	39013	34393	73406	72967	-439
65 Կուրանի	4065	3513	7666	6260	13926	14793	867
66 Քուլթախի	8668	5837	14011	10032	24043	24505	462
67 Ստաւրոպոլի	2245	2150	2862	2523	5385	5364	-21
68 Թերեքեան	4701	4507	6282	5521	11803	14544	2741
69 Թիֆլիսի	40991	33367	105035	91154	196189	230377	34188
70 Չերնոմորեան	362	168	3605	2680	6285	6223	-62
71 Երևանի	29368	24629	227739	213261	441000	449926	8926
Սիբիր	228	11	584	45	629	547	-82
72 Ամուրի	10	2	11	2	13	14	1
73 Ենիսեյի	21	—	39	5	44	39	-5
74 Անդրբայկալ.	13	1	69	6	75	67	-8
75 Իրկուտսկի	46	1	197	16	213	184	-29
76 Պրիմորսկի	25	1	44	2	46	42	-4
77 Սախալին կղզ.	73	6	155	12	167	123	-44
78 Տոպուի	23	—	27	—	27	35	8

	1	2	3	4	5	6	7
79 Տոմսեր	17	—	35	—	25	27	2
80 Եակուտսկի	—	—	57	2	19	16	-3
Միջին Ասիա	3129	1187	3689	1223	4862	4868	6
81 Անկոմիենեան	4	1	2	1	5	5	—
82 Անդրկասպեան	2845	1180	3160	1156	4256	4249	-7
83 Սամարղանդի	168	31	335	37	370	366	-4
84 Սեմիբլատեան	—	—	—	—	—	2	2
85 Սեմիբլէեան	—	—	1	—	1	10	9
86 Սիբ-Դարինեան	32	11	89	11	43	48	5
87 Տուրգայեան	—	—	1	—	1	1	—
88 Ուրալեան	—	—	6	3	9	14	5
89 Ֆերկանեան	80	14	162	15	177	173	-4
Բացի սրանից	—	—	320	55	375	382	7
Ֆինլանդիայում աշխարհագրի ենթակուղ ուսումնականները.	—	—	1	—	1	7	6
արտ. ծովեր. գինուոր.	—	—	—	—	—	2	2
նաւ. վրայ եղողները.	—	—	—	—	—	—	—
ուսւ. գաղթ. բու.	—	—	303	55	358	357	-1
խաբիայ.	—	—	—	—	—	—	—
ս ուսումնականները	—	—	16	—	16	16	—
խիւայում.	—	—	—	—	—	—	—
162082	120769	621617	561854	1173471	1218463	44992	

Մեր կազմած սոյն աղիւսակից երևում է, որ 1218463 հ. լուսաւորչականներից և հայ կաթողիկոսներից 1173471-ը հայախօս էին, իսկ 44992-ը օտարախօս: Այս օտարախօս հայերից 43815-ը ապրում են Կովկասում, գլխաւորապէս Թիֆլիսի, Երևանի, Գանձակի, Թերեքեան, Կուբանի, Բագուի և Քուլթայի նահանգներում: Օտարախօս հայերի թիւը համեմատաբար շատ է նաև Բեսարաբիայի, Կոնստնդի, Ս. Պետրբուրգի և Ուերսոնի նահանգներում:

Ինչպէս կնկատէ ընթերցողը, սոյն աղիւսակում հայախօս հայերի թիւը հանելով լուսաւորչականների և հ. կաթողիկոսների ընդհանուր թուից՝ ստացել ենք օտարախօս հայերի թիւը, իսկ եթէ տեղ տեղ հայախօսների քանակը աւելի շատ է եղել քան լուսաւորչականների և հ. կաթողիկոսների ընդհանուր թիւը, ուստի և «—» է ստացուել, այդ «—» ով թուերը ցոյց են տալիս այն օտարազգիների քանակը, որոնք որպէս հայախօս մտել են հայ ազգի ցանկի մէջ:

Այդ օտարազգիների ընդհանուր թիւը 1138 է և ըստ մեզ դրանք պէտք է լինին մեծաւ մասամբ հայ-հոռոմները կամ յունա-դաւան հայերը, որոնք հայախօս են: Այս հայախօս օտարազգիները, մեծաւ մասամբ ապրում են Կարսի և Դոնեան շրջաններում, Ուարկովի, Եկատերինօսլաւի Տաւրիկեան և Չերնօմօրեան նահանգներում, այլև Սիբիրում: Մեզ թւում է՝ թէ դրանք Կարսի շրջանում և Չերնամօրեան նահանգում բնիկներ են, իսկ միւս նահանգներում՝ իբրև զինուոր ժամանակաւոր բնակիչ: Եթէ ենթադրենք, որ այժմ էլ հայախօս և օտարախօս հայերի քանակութեան յարաբերութիւնը նոյնն է մնացել, այն ժամանակ պէտք է եզրակացնենք, որ 1907-ի Յունուարի 28-ին 1438000 լուսաւորչականներից և կաթողիկ հայերից օտարախօս կլինին 53091 հ.: Բայց քաղցր է մեզ յուսալ, որ Հայոց ուսումնարանների շնորհիւ շատ կարճ ժամանակամիջոցում մայրենի լեզուն ընդհանուր սեպականութիւն կդառնայ բոլոր հայերի համար և օտարախօս հայերը կմնան իբրև բացառիկ երևոյթ:

Որովհետև աշխարհագրի ժամանակ ազգութիւնները որոշելիս մայրենի լեզուն են հիմք ընդունել, ուստի և չնայելով որ միայն լուսաւորչականները և հայ կաթողիկոսները 1218463 հ. էին, այնուամենայնիւ աշխարհագրից ստացուած նիւթերը խմբագրողները հայ ազգի թիւը դնում են 1173096: Այս Ռուսաստանում գտնուող հայախօսների թիւն է: Այստեղ չէ հաշուած նոյն իսկ այն 375 հայերը, որոնք աշխարհագրի ժամանակ գտնուում էին Ֆինլանդիայում, Բուխարիայի ռուսական գաղթավայրում և Ուլաայում: Եթէ 1173096-ի վրայ աւելացնենք և այս հայերի թիւը կստանանք

ամբողջ հայախօսների թիւը 1173471, իմբագրողները ըստ այսմ հայախօսների թիւը դնելով 1173096, յարակցում են, եթէ սրա վրայ աւելացնենք և օտարախօս հայերի թիւը, այն ժամանակ հայերի ընդհանուր թիւը կայսերութեան մէջ հաւասար կլինի մօտ 1212000-ի: Այստեղից պարզ է, որ նրանք օտարախօս հայերի թիւը հաշուում են մօտ 38900, այն ինչ, ինչպէս տեսանք, աշխարհագրի ժամանակ Ռուսաստանում 44992 օտարախօս հայ կար, այնպէս որ հայախօսների և օտարախօս հայերի թիւը միասին ոչ թէ 1212000 էր, այլ 1218463 հ.: Այս տարբերութիւնը առաջանում է նրանից, որ մենք ուտիացիներին դասել ենք օտարախօս հայերի թուում, իսկ իմբագրողները ուտիացիներին՝ որպէս առանձին ցեղի՝ սոյն հաշուից դուրս են թողել:

Աւելորդ չենք համարում այստեղ քաղուածօրէն առաջ բերել Ն. Ա. Տրոյնիցկու հրատարակութեան սոյն երկրորդ հատորի իւրաքաղական ներածութիւնից այն մասը, որ վերաբերում է հայերին (ըստ մայրենի լեզուի) և մեր դրացիներին:

Հայոց լեզուն հնդկա-եւրոպական լեզուներից այժմ մեռած փոքր ասիական ճիւղին է պատկանում, որին հաւանականաբար պատկանում էին փրիւգէական և այլ լեզուները: Ներկայումս գոյութիւն ունեցող լեզուներից Հայոց լեզուն իւր կազմութեամբ ամենից մօտ է լիտովո-սլաւոնական և իրանական լեզուներին, որոնց համար կարծես կապող օղակ է:

Անդրկովկասում հայերը մասամբ նախկին հայկական նահանգների բնիկների մնացորդներն են, մասամբ էլ յետոյ Տաճկահայաստանից և Պարսկաստանից գաղթած: 1828—1830 թուերին մօտ 57000 հայ գաղթեց ռուսական սահմանները: Վերջին գաղթականութիւնները տեղի ունեցան գլխաւորապէս վերջին տաճկական պատերազմից յետոյ և 1896 թուին: Եւրոպական Ռուսաստանում հայերը բնակւում էին Աստրախանում, Բեսարաբիայում, Պոդոլեան նահանգում և Ղրիմի թերակղզու վրայ դեռ այդ երկիրները Ռուսաստանին միանալուց առաջ: Ղրիմից հայերը գաղթեցին և հիմնեցին Նոր-Նախիջևան քաղաքը աւելի ուշ:

Հայոց ընդհանուր թիւը ամբողջ կայսերութեան մէջ սոյն աշխարհագրով 1173096 հ. (621297 ար.) է,* կամ ընդհանուր բնակիչների 1,170/0: Քաղաքացիները կազմում են 230/0, Հայերի

* Եթէ 1173096-ին աւելացնենք եւ օտարախօս հայերին, այն ժամանակ կայսերութեան մէջ ընդհանուր հայերի թիւը կլինի մօտ 1212000:

Ծ. խմբագրողի

գլխաւոր բնակավայրը Կովկասն է—1118094 հ. (590038 ա.), կամ ամբողջ ազգաբնակչութեան 12,040/0, իսկ միայն հնդկանրուպական ծագումով բնակիչների 22,810/0, Հիւսիսային Կովկասում հայերի թիւը համեմատաբար պակաս է—31114 հ. (16810 ա.) կամ 0,860/0, որից 2/3-ը քաղաքացիներու Կուբանեան շրջանում (գլխաւորապէս Լաբինեան գաւառում) կայ 13926 հ. (7666 ա.), Թերեքի շրջանում—11803 հ. (6282 ա.) և Ստաւրապոլի նահանգում—5385 հ. (2862 ա.): Հարաւային Կովկասում հայերի թիւը 1086980 հ. (573228 ա.) է, կամ 19,540/0 ամբողջ բնակիչների: Այս հայերից մեծ մասը ($\frac{1}{3}$) գիւղացիներ են և քաղաքներից դուրս են ապրում: Հայերի կենդրոնը Երևանի նահանգն է, ուր նրանց թիւը 441000 հ. (227739 ա.) է, կամ 53,20/0 նահանգի բնակիչների: Գանձակի նահանգում կայ 292188 հ. (151638 ա.), կամ 83,30/0, Թիֆլիսի նահանգում—196189 հ. (105035 ա.) կամ 18,70/0, Բազուայ նահանգում (Բազ. Գէօկ. և Շամ. գաւառներում)—52233 հ. (31223 ա.) կամ 6,30/0, Կարսի շրջանում (Կարս և Կաղզ. գաւառներում)—73406 հ. (39013 ա.) կամ 25,30/0, Իււթայիսի նահանգում (Բաթումի շրջանի հետ միասին)—24043 հ. (14011 ա.) կամ 2,30/0 (Բաթ. Սուխ. Արդուինի գգ.) և Չերնոմորեան նահանգում (Սօչ. գ.)—6282 հ. (3605 ա.) կամ 10,90/0:

Եւրոպական Ռուսաստանում 49329 (26903 ա.) հայ կայ (5/3-ը քաղաքներում), որոնցից կէսից աւելին—27234 հ. (13971 ա.) բնակւում է Դոնեան շրջանի Ռոստովի գաւառում, յատկապէս 2/3-ը Նոր Նախիջևանում և Ռոստովում, իսկ մնացածը շրջականներում: Հայաչատուլեան կողմից երկրորդ տեղը բռնում է Տաւրիկեան նահանգը (գլխաւորապէս Թէոդոսիայի և Սիմֆէրոպ. գգ.)—8938 հ. (5094 ա.): Բեսարաբիայում կայ 2080 (1034 ա.) հայ, Աստրախանի նահանգում—4270 հ. (2087 ա.), Ս. Պետրոսըրգում—758 հ. (527 ա.), Մոսկուայում—1604 հ. (1177 ա.) և Օդէսայում—1401 հ. (931 ա.): Վերոյիշեալ տեղերից դուրս հայերի թիւը սակաւ է, միայն Անդրկասպեան երկրում կայ 4256 հ. (3100 ա.). որոնցից կէսից աւելին բնակւում է Ասխաբադի գաւառում, իսկ ամբողջ Միջին Ասիայում 4862 (3629 ա.) հայ կայ:

Այն աղիւսակներից, ուր բնակիչները բաժանուած են ըստ դաւանութեան և ըստ ազգութեան (ժայրենի լեզուի), իմանում ենք՝ որ լուսաւորչական են հայախօսների 96,510/0-ը, վիրախօսների 2,230/0-ը, և կովկասեան լեռնականների լեզուներով խօսողների 0,620/0-ը:

Ուտիացիները—7100 հ. (3806 ա.) բնակւում են Նուխիի

գաւառում (Գանձ. ն.) և լուսաւորչական են: Այդ լիւրի մեծ մասը մանմետականութիւն ընդունելով՝ վերջնականապէս թուրքացել է:

Իսկ ինչ վերաբերում է հայ կաթողիկոսներին, նրանք Ռուսաստանի ամբողջ կաթողիկոսների 1,660/0-ն են կազմում:

Ատրպատականցի թուրքերը կամ թաթարները, այլ թուրքերի հետ միասին, որոնց լեզուն աշխարհագրի մէջ ընդհանուր խօսքով կոչուած է թաթարական, կազմում են Անդրկովկասի բոլոր թուրքերի տնագիրն մեծամասնութիւնը—1475553 հ. (814819 ա.), նրանք մեծ մասամբ բնակւում են Գանձակի նահանգում—534086 հ. (297823 ա.), ուր նրանք ամէն տեղ մեծամասնութիւն են կազմում, բացի Շուշիի գաւառից, ուր հայերի թիւը չատ է: Արմանի նահանգում կայ 318170 հ. (168967 ա.), բնակուած են բոլոր գաւառներում (Աղէքսանդրապոլի գաւառում սակաւաթիւ են), Բագուայ նահանգում կայ 485146 հ. (268720 ա.), ուր նրանք գերակշռում են բոլոր գաւառներում և ինչպէս Գանձակի նահանգում, ժողովրդի ամենամեծ մասն են կազմում: Բաւական չատ թուրք կայ նաև Թիֆլիսի նահանգում—107383 հ. (59764 ա.), գլխաւորապէս Զաքաթալայի և Բորչալուի գաւառներում: Թուրքեր կան նաև Դաղստանի չրջանում (Ղաթթաղ-Թաթաւ. գ.)—82343 հ. (17238 ա.):

Վրացիները (լայն մտքով)—823968 հ. (437311 ա.) կազմում են Թիֆլիսի և Գուրթայիսի նահանգների բնակչութեան մեծամասնութիւնը—Թիֆլիսի նահանգում—465537 հ. (249827 ա.), Գուրթայիսի նահանգում (Բաթումի չրջանի հետ միասին)—343920 հ. (177503 ա.): Թիֆլիսի նահանգի 10 գաւառներից 6-ի մէջ վրացիները գերակշիռ թիւ են կազմում: Թիոնէտի և մասամբ Դուշէթի գաւառներում բնակւում են լեռնական վրացիները—խնսուրները, Թուշեքը, և փշաւները, իսկ Զաքաթալայի գաւառում, ուր վրացիները փոքրամասնութիւն են, ինգիլոյները (մանմետական): Նահանգի միւս գաւառներում գերակշիռ թիւ են կազմում իսկական վրացիները:

Գուրթայիսի նահանգում վրացիները մեծաւ մասամբ բնակւում են Շարոպանի գաւառում (իսկական վրացիներ), Օզուրկէտի գաւառում (գուրթացիներ) և Բաթումի գաւառում (աջարացիներ և լազեր): Բացի այս ևրկու նահանգներից, վրացիներին կարելի է հանդիպել գլխաւորապէս Թերեքեան չրջանում (Վլադիկաւկազի գ.):

Իմերէշները—273186 հ. (136045 ա.) համարեա ամբողջապէս կենդրոնացած են Գուրթայիսի նահանգում (Գուրթ. Լեչխում. Ռաչին. և մասամբ Շարոպանի գաւառներում): Իմերէշների սոյն թիւը իսկականից չատ պակաս է, որովհետև աշխարհագրի ժամանակ նրանք

